Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՊԱՐՀԻՆ

ՈՍԿԵԴԱՐ
ՊԵՅՐՈՒԹ, 2015

ԻՆՉՊԷՍ ԳՐՈՒԵՑԱՒ ԱՂԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Աւետիս Ահարոնեան իր մէկ գրութեան մէջ, նուիրուած Քրիստափոր Միքայէլեանին, կը պատմէ թէ ինչպէս իր ուսանած քաղաքին՝ Լօզանի մէջ, այցելութիւնը կ'ընդունի Քրիստափորին «նա մի օր եկաւ Լօզան, գտաւ ինձ, երկար խօսեց, բացատրեց մեր հարցի վիճակը, մեր ժողովրդի կրած հոգեկան ծանր տագնապն ու բեկումը, հաւատն ամրապնդելու անհրաժեշտութիւնը: Խօսեց, համոզեց, հմայեց ինձ իր թաւ, ողբերգակ ձայնով եւ պարտադրեց փոքրիկ պատկերներ գրել Դրօշակի համար: Եւ առաջին իսկ պատկերի նիւթը ինքը տուեց ինձ ու գնաց:

«Գնաց եւ ես մնացի խորունկ մտածումի մէջ: Դրօշակից ու Քրիստափորից չեմ ազատուի, ապա ուսո՞ւմը... Երկար խորհեցի - ճար չկար - պէտք էր անել ե՛ւ մէկը ե՛ւ միւսը. անհնարին էր մերժել Քրիստափորին:

... Եւ ինչ որ գրեցի, ամբողջը Քրիստափորի բարձր, ազնուական ներշնչումով է եղած:

Առանց Քրիստափորի Ազատութեան ճանապարհին չէր գրուի»:

Այս պատմուածքներուն շնորհիւ Ահարոնեան լայն տեղ կը գրաւէ հայ ժողովուրդի սրտին մէջ: Կ'երգէ հայ վիշտը: Կ'երգէ ֆետայիներու պայքա-

որը: Ահարոնեան դէմ է բոլոր տեսակի բռնակալութեանց: Ժողովուրդը ինքն իր ճակատագրին տէրը պէտք է ըլլայ: Գրեթէ դար մըն է անցած Ահարոնեանի նկարագրած պայքարի օրերէն: Հայութեան պայքարը չէ աւարտած տակաւին:

Քանի մը տասնամեակ առաջ Գուրգէն Մխիթարեան հետեւեալ ձեւով աւարտած է Ահարոնեանի մասին նուիրուած իր գրութիւնը: «Դարբինի զաւակ՝ այս նոր հայութեան դարբինը պիտի մնայ Ահարոնեան, իր գրականութեամբ: Ինչ հոգ որ իր աշխատանոցը, իր ստեղծագործութեան աշխարհը, կայծին ու կրակին հետ լեցուած ըլլայ նաեւ ծուխով ու ածուխով: Պայքարող երիտասարդութիւնը յաճախ պիտի փնտռէ զայն, որեւէ հեղինակէ աւելի: Ինքը չէ՞ որ գրած է տեղ մը.- Ամէն մի պայքար մի նոր հորիզոն բաց կ'անի եւ ամէն հորիզոնի մի նոր արշալոյս:

Ահարոնեան արշալոյսին մէջէն քալող գրագէտն է, դէպի նոր հորիզոններ, քալող, նոր արշալոյսներու հաւատացող գրագէտը: Ինք՝ պայքարող երիտասարդութեան պատկերով, երիտասարդութիւնը՝ իր»:

Ազատութեան ճանապարհին-ի պատմուածքները կ'ապրին քանի հայութեան պայքարին վերջակէտը չէ հասած տակաւին:

Խմբագիրը՝ Լ.Ճ.
Պէյրութ 1984

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Այսօր Հայութեան պայքարը նոր թափով կը շարունակուի գօտեպնդիչ տուեալներով՝

ա.- Անցնող տարուայ Դեկտեմբերէն ի վեր գոյութիւն չունի Սովետական Միութիւնը:

բ.- Հայաստան անկախութիւն հռչակած է Սեպտեմբեր 21, 1991-ի հանրաքուէով: Հանրապետութեան նախագահն է Լեւոն Տէր Պետրոսեան ընտրուած ազգին կողմէ 16 Հոկտեմբեր 1991-ին:

Եռագոյնը կը ծածանի նախկին Լենինեան հրապարակին վրայ ինչպէս նաեւ ՄԱԿ-ի այլ դրօշակներու շարքին:

գ.- Լեռնային Ղարաբաղը նոյնպէս անկախութիւն հռչակած է 1991-ի Դեկտեմբերին: Հանրապետութեան նախագահը ընտրուած է Արթիւր Մկրտիչեան 8 Յունուար 1992-ին: (Աղէտահար Ապրիլին):

Երկու անկախ հանրապետութիւն եւ սակայն կռիւը կը շարունակուի Ղարաբաղի համար, արիւնոտ կռիւ, վայրագ եւ կատաղի նոյն թշնամիներուն դէմ:

Ազատութեան փշոտ ճանապարհը դեռ կը շարունակուի:

Խմբագիրը՝ Լ.Ճ.

Պէյրութ Ապրիլ 1992

ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ա. Ահարոնեանի այս գիրքին երրորդ տպագրութիւնը կը զուգադիպի 2015 սեւ թուականին, հայ ազգի Ցեղասպանութեան 100-ամեակին, որ կը նշէ մեր 4000 տարուայ գրաւոր պատմութիւն ունեցող «Հայկական բարձրավանդակին» կորուստը. յոյն եւ հռոմիացի պատմիչներու կողմէ Փոքր Ասիան կոչուած է Armenian Plateau: Այս է ամենածանր մեր կորուստը:

Սումերական եւ ակադական արձանագրութիւններու մէջ, Գիլկամիշի հերոսը կը խօսի, քրիստոսէ շուրջ 2200 տարիներ առաջ, դէպի հիւսիս գտնուող Անմահներու երկրի մասին, Արատտայի-Արարատի երկրի մասին որուն բնիկները արմէններն էին: Հայկական բարձրավանդակի կորուստը, հայ գիտակից երիտասարդի ուսերուն վրայ դրած է արդար բայց ծանր դատ մը հետապնդելու նպատակը: Ամբողջ կեանք մը պայքար, պայքար եւ պայքար: Աստուած կ՚իմանայ քանի՞ սերունդներ:

Աւետիս Ահարոնեանի պատմուածքներու հերոսները՝ Քաջ ֆիտայիներ՝ Գէորգ Չաւուշ, Հրայր եւ Անդրանիկ առասպելական սխրանքներ, յաղթանակներ իրագործեցին սակայն թշնամին նենգ եւ անմարդկային էր եւ թիւով բազմապատիկ:

Ղարաբաղը յաղթանակ արձանագրած է եւ աւելի քան քսանըչորս տարիէ անկախ է սակայն խաղաղութիւնը կ'ուշանայ: Յուսանք պատմութիւնը արագ կ'ընթանայ եւ խաղաղութեան ալ կը տիրանանք:

Խմբագիրը՝ Լ.Ճ.
Պէյրութ 2015

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ
ՀԱՆԱՊԱՐՀԻՆ

ՆՐԱՆՑ՝
ՈՐՈՆՔ ԽԻԶԱԽ ԿԵԱՆՔՈՎ ԴԱԺԱՆ ՄԱՀԸ ՀԵԳՆԵՑ ԻՆ
ԵՒ ՀՊԱՐՏ ՄԱՀՈՎ ՍԵՐ ՍԵՒ ԿԵԱՆՔԻՆ ՓԱՅԼ ՏՈՒԻՆ

Դուք էիք՝ որ Ազատութեան տատասկոտ ճանապարհին ցաւոտ ու բոսոր մշուշի մէջ ամենից մեր գեղեցիկ, ամենից խիզախ երազները հիւսեցիք:

Դուք էիք՝ որ ըմբոստութեան ժայռերի բարձրութիւնից գահավէժ՝ նետուեցիք ժողովրդի մեծ տառապանքի ծովը, որ ուռած ու մրրկածուփ եռում էր Ձեր ոտների տակ:

Դուք էիք՝ որ բռնութեան ու արհաւիրքի խեղդող խաւարի մէջ Ձեր բոցավառ աչքերի փայլով մոլորուած ու լքուած հոգիների ուղիները լուսաւորեցիք:

Փա՛ռք Ձեզ:

Հոյակապ բախումների ու հսկայական պայքարի մէջ Ձեր բաց ու գունատ ճակատներին կախուած մնացին բոլոր զրկուածներն, բոլոր դժբաղդների յուսացող հայեացքները:

Ձեր երկաթ բազուկների գոռ հարուածները չարիքի խօլ կամարները դղրդեցին եւ տանջուած հոգիների մէջ ազատութեան յոյզերը փոթորկեցին:

Եւ այժմ՝ ո՛վ հոյակապ, ուխտուած հսկաներ. Ազատութեան խորանի առաջ ծնրադիր՝ Ձեզ եմ նուիրում Ձեր արիւնով ցողուած այս կարմիր երազները:

Եւ Ձեզ, *ո՛վ անանուն ու կորած մարտիկներ*, քու անտառներում եւ մռայլ ձորերում ընկած հերոսներ, որոնց վերջին հառաչանքները մրրիկների հետ են տարուում, որոնց ոսկորները հողմերն են լիզում հեծեծալով:

Ձեզ *բոլորիդ, պաշտամունքի* եւ *հիացմունքի* արցունքով եւ Ձեզմով այն վսեմ, այն արիւնաներկ Գաղափարին, որին *այնքան* սերունդներ փարել են խանդաղատանքով եւ որ ահա Ձեր շնորհիւ փայլփլում է մեր մռայլ հորիզոնի վրայ:

Փա՛ռք Ձեզ:

Ալեքսիս Սահարոնեան

ՅԱՐԳԱՆՔ ՔԵԶ

Յարգա՞նք քեզ, նահատա՛կ ժողովուրդ:

Ո՞վ չափեց երբ եւ իցէ քո տառապանքի անդունդները, ո՞ր սգաւոր կարապը եկաւ մի օր յուզելու հոգուդ խորունկ ցաւի խորունկ լճերը, ուր եռում են պղտոր ալիքները անէծքի մրմունջով: Ինքդ միայն գիտես անօրինակ ցաւիդ մեծութիւնը. ինքդ միայն ես վարում քո անղեկ ու ալեծուփ նաւը դէպի անծանօթ հորիզոններ, ո՛վ դու ծովերի մոլար, տանջուած ճամբորդ, մրրիկների յաւիտենական ուղեկից. յարգա՞նք քեզ:

Հազար տարիների արիւնի մառախուղի միջից դու քայլում ես անյողդողդ, յամառ ու վսեմ դէպի մի վեհագոյն, մի սքանչելի նպատակ, գրաւիչ՝ որպէս փարոս, դիւթական՝ որպէս ժպիտը կոյսի. քայլում ես հեւ ի հեւ, վիրաւոր, խոշտանգուած, քո հսկայ թիկունքին կրելով մի բեռ, որի ծանրութեան տակ այնքան ազգեր լացով խորտակուել են ու կորել, որպէս մրրիկների վարած փոշու ամպեր. յարգա՞նք քեզ:

Հազար տարի բարձրից ընկնող կաթիլները կամաց-կամաց կրծում են հսկայ ժայռը եւ յոր-

ձգեց հարսի վիզը եւ գլուխը դէպի իրեն քաշեց, տեսաւ թէ ինչպէս մի ուրիշը աշխատում էր երեսը բանալ, Ջաւոյի՛ հարսի երեսը... Էլ բան չտեսաւ Ջաւոն, նա մէկէն վեր ցատկեց տեղից, արագութեամբ կռացաւ նաւակի եզրին, երկու ձեռքով բռնեց եւ վայրկենապէս ձգուեց ջրի մէջ՝ իր բոլոր թափով հետը քաշելով նաւակը ու ճչալով՝

- Ծո՛վ, ծո՛վ, մեզ էլ ծածկի՛ր...

Նաւակը շուռ եկաւ հենց նրա գլխի վրայ եւ իսկոյն խորասուզուեց: Ալիքները մի փոքր աղմկուեցին. մի քանի շաչիւն, մի քանի հոնդիւն լսուեց մթութեան մէջ, օգնութիւն կանչող մի քանի ճիչեր խեղդուող կոկորդներից - եւ ամէն ինչ լռեց... Ձոհերն ու դահիճները միեւնոյն սառն ալիքների տակ թաղուեցին, եւ ջրի մակերեւոյթը կրկին խաղաղուեց...

Դարձեալ աստղերը պլպլում էին ծովի մէջ, դարձեալ լեռները իրենց խոռոչէ կոյր աչքերով դիտում էին ծովի եւ երկնքի խաղը, բնութեան հմայիչ ներդաշնակութեան մէջ: Մարդն էր միայն մի յանցաւոր շփոթ առաջ բերում այդ բոլորի մէջ. նա՛ էր իր ոճիրով պղծում երկրի երեսը:

Եւ երկիրը կ'ամաչէր երկնքից, եթէ խաւարը չծածկէր նրա դէմքը...

1899 թ.

ԱԾՈՒՂԸ

Ձարդը վերջացաւ. Խաւարն իջաւ, իջաւ սարերից եւ ծածկեց արար-աշխարհը: Այն գիշերը հոգեմաշ էր, սոսկալի. խաւարը շատ թանձր: Քաղաքը ոչ թէ քնեց, այլ մեռաւ: Փողոցներում մարդ չկար, տներում ճրագ չկար, ո՛չ մի ձայն. կենդանութեան նշոյլ ցոյց տալը այդ գիշեր ոճիրներից մեծագոյնն էր: Իշխողը մահն էր, բռնի, արիւնոտ մահը, որ սարսափելի թեւերով սաւառնում էր վեր-վեր մռայլ տներից, որոնք այդ օրը չտեսնուած բաներ տեսան: Քանի՜ քանի՜ օջաղ մարեց, աչք չմնաց արիւն արցունք չթափէր... Այժմ էլ մի զարմանալի լռութիւն կար ոճիրով յղի խաւարում: Ո՞վ ձայն հանէր. յօշոտուած ու այլանդակուած դիակները շարան-շարան փռուած էին գերեզմանատանը՝ ճռթուած ու արիւնոտ աչքերը դէպի երկինք չռած, ասես հարցնում էին «ինչո՞ւ» բոլոր «ինչուներից» ամէնից անմիտը, որի վրայով դարերը քրքիջով են սահում՝ անպատասխան թողնելով խեղճերին: Լուռ էին նաեւ մեծ ոճիրի հեղինակները: Խաւարը եկաւ, ծածկեց արիւնը մի մռայլ քօղով. բայց իր հետ բերեց նաեւ մի սոս-

կում, որ թափանցում էր նոյնիսկ ամենաանսիրտ արիւնարբուի երակներում. նրանք թագնուեցին իրենց տներում, ինչպէս որսից դարձող գազաններ բնում: Այն գիշեր դրսում, փողոցում եւ մանաւանդ հայոց գերեզմանատան շուրջը մի բան կար, որ հազար աչքով, հազար ձեւով գալարւում էր խաւարի մէջ եւ խեղդում էր խեղդում... Քամի էլ կար, աշնանային չար քամի:

Շատ ուշ միայն փողոցներից մէկում յայտնուեցին մի խումբ մարդկային ստուերներ - քսանի չափ զինուորներ եւ մի յիսնապետ: Նրանք շարժւում էին հանդարտ, անձայն, ասես վախենալով մահու հանգիստը խռովել կամ զայրացնել խաւարի մէջ գալարուող սարսափը: Ի՞նչ էին փնտռում այս անապատ փողոցներում այժ ժամին,- անկարելի էր իմանալ մթութեան մէջ: Միայն նրանք անցնում էին գողերի զգուշութեամբ, մերթ ընդ մերթ կանգ էին առնում այս ու այն դրան առաջ, ականջ էին դնում եւ կրկին շարունակում ճանապարհը նոյն զգուշութեամբ: Փողոցի ծայրում յիսնապետը, որ առաջ էր ընթանում կանգ առաւ. մի քանի դիակներ կային գետնին փռուած:

- Վերցրէ՛ք, հրամայեց նա, պէտք է տանել «այնտեղ»:

«Այնտեղը» հայոց գերեզմանատունն էր: Մի քանի հոգի մօտեցան, վերցրին դիակները եւ դրին ձեռքերի պատգարակների վրայ, ապա կրկին առաջ շարժուեցին: Այս խումբը փողոցնե-

րում թափթփած վերջին դիակները հաւաքելու պարտքն ունէր: Դարձեալ մի քանի տեղ կանգ առան. դարձեալ դիակներր շարեցին նախկիններ-ի վրայ եւ շարունակեցին ընթացքը: Մէկ եւ յանկարծ իրենց արիւնոտ բեռը վար դրին եւ բոլորը միասին քարացան... Հեռու գերեզմանատնից քամին մի ձայն էր բերում, մի աղեկտուր ձայն, որ լսւում էր մերթ ինչպէս խորունկ հառաչանք եւ մերթ ինչպէս օգնութեան աղաղակ կամ սարսափի սրտաճաք ճիչ: Երբեմն քամու հետ խառնուելով, այդ զարմանալի ձայնը մեծանում էր, դառնում հարիւրաւոր կոկորդից պոռթկած մռմռոց: Այդ ժամանակ թւում էր, թէ գերեզմանատան բոլոր դիակները միագամից ճչում են, հառաչում են ցաւերից եւ դատ ու արդարութիւն են պահանջում: Երբեմն էլ, երբ քամու թափը մեղմանում էր, պարզ ու որոշ լսւում էր մի սրտաճմլիկ երգի ձայն, որով կարծես մի սգաւոր ոգի նզովում էր աշխարհի արդարութիւնը եւ լուռ դիակների ցաւերն էր ողբում: Այս խաւարի, այս սարսափի մէջ անսպասելի, գերբնական էր թւում այդ զարմանալի ձայնը, եւ խումբը քար կտրած՝ լսում էր անկարող լինելով առաջ գնալ: Իրենց ձեռքով խողխողուածներն էին խօսում, նրանք էին բողոքում, եւ դահիճներն անկարող էին չլսել:

Երգը շարունակում էր.

«Սեւ խաւարն իմ ընկերն է անբաժան,
Ես չգիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր,

Բայց այսօրուայ խաւարն է խոր, հոգեհան...
Դիակները փսփսում են ահաւոր,
Եւ պատմում են իրենց ցաւերն անապատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:
«Հին դարերից ցաւերն անպատում,
Հառաչելով, անցաք արեան ծովերով,
Համբերութեան դասեր առիք լեռներէն...
Քնե՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով.
Եւ պատմեցէ՛ք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:
«Այս իմ անճար քնարն ունի երեք լար,
Այն՝ ողբաձայն, լալկան, խղճուկ, դողդոջուն,-
Ի՞նչպէս ողբամ ձեր ցաւերն անհամար,
Սրտեր վառեմ, արցունք քամեմ ես անհուն...
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:
«Տառապանքի, սուգ ու սեւի ինձ ընկեր
Մարդ չմնաց իմ արիւնոտ վաթանում.
Լուռ են շուրջս լեռներ, ձորեր, շիրիմներ,
Լոկ քամին է կողկողագին մրմնջում...
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում»...

- Գտե՛ք այդ մարդուն, հրամայեց յիսնապետը:

- Գերեզմանատանն է, բէյ - պատասխանեցին մի քանի երկչոտ ձայներ:

- Գերեզմանատուն գնացե՛ք տասն հոգի, առա՛ջ:

Խմբից տասը մարդ բաժանուեցին եւ անհաս-

տատ քայլերով առաջացան, տանելով իրեն հետ հաւաքած դիակները: Ձայնը շարունակում էր.

«Ես էլ ցաւի դաշն կապեմ քամու հետ,
Եւ արցունքի երգեր հիւսենք միասին.
Նա խաղում է ամպրոպների շանթի հետ,
Նա յոյզ ու բոց կը տայ նաեւ մեր երգին:
Կոյր աշուղը, մորկաշունչ, խօլ քամին
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:
«Ոռնա՛, քամի, հազար ու մի ձայներով.
Թո՛ղ սարսռան լեռներ, ձորեր, անդունդներ...
Անցի՛ր մէկ-մէկ դիակների վրայով,
Լիզի՛ր վէրքեր ու հաւաքի՛ր հառաչներ...
Կոյր աշուղը, մորկաշունչ, խօլ քամին
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:
«Ի՞նչ ես վազում աննպատակ դէպ հեռուն,
Հառաչանքներ, խոր-խոր ցաւեր շալակած.
Վե՛ր սլացիր դէպի երկինքն անհուն,
Գտի՛ր գահը, ուր բազմած է մի Աստուած:
Թէ անզօր է սրբել արցունքն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...
«Փչի՛ր վրան ահեղաշունչ որոտով,
Թող իր գահը դողայ հիմքից եւ Աստուած.
Թո՛ղ երկինքը մթնի իր վառ աստղերով,
Տիեզերքը դարձրո՛ւ քաոս, աւերած...
Թէ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...
«Զուր ես խառնում ձեր ալիքներն աշուղին.
Այնտեղ միայն հին օրերի խոհեր կան:

Դու խօմ գիտես լեզու, խօսք տալ ժայռերին,
Նրանց ասա՛, թող քեզ պատմեն, ի՞նչ տեսան...
Երբ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...
«Անցի՛ր հանդարտ շիրիմների վրայից,
Հողի տակ էլ թշուառները քուն չունին.
Ծարան-շարան հողաթմբի խորքերից,
Խուլ մրմունջներ գուցէ լսես ցաւագին...
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...»

Զինուորների խումբը հասաւ գերեզմանատանը. դիակները ներս տարան եւ կանգ առան առանց համարձակուելու շատ խորքերը գնալ, ուր սարսափն էր թագաւորում:

- Ո՞վ ես, ձայն տուեց խմբից մէկը:

Պատասխանի փոխարէն երգիչը շարունակեց այս անգամ աւելի ուժգին, աւելի ցաւոտ:

«Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին
Սեւ երգ կ'ասեն, ցաւ կը պատմեն աշխարհին:
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ երկրում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում»...

Զինուորներն առաջացան վախվխելով: Նրանք քայլում էին հողաթմբերի եւ դիակների վրայից, իսկ երգիչը մերթ երգում էր եւ մերթ հեկեկում էր այնպէս, որ կարծես բոլոր տապանաքարերը նրա հետ միասին հեծկլտում էին ցաւից,

ուած ներկայացնում էր մի ձիւնակոյտ. պարզ էր, որ մարդը երկար ժամանակ բքի տակ էր մնացել:

- Բարի երեկոյ, ասաց նորեկը, թափ տալով եափունչու վրայից ձեան հաստ շերտը:

- Աստուծոյ բարին, վա՛յ խեղճ խայ, արի՛, արի՛, առաջ անցիր, տնաշէն, փէտացար - ձայն տուին այս ու այն կողմից նստողները սրտացաւ եղանակով - Խային տեղ տուէք թող նստի:

- Հա՛, վայլահ փէտացայ, ասաց նորեկն առաջանալով, էլ դուրսը մնալու ճար չկայ, ասես թէ երկինքը փուլ է գալիս, գիւղի մէջ էլ մարդ խեղդւում է. ձիւն ու քամի. օ՛, ի՞նչ բուք է, ի՞նչ բուք. ասացի մտնեմ սաքուն տաքանամ, դուրս ելնեմ:

Մարդը նստեց:

Բուխարու վերեւ, փոքրիկ մրոտ ակնատի մէջ հանդարտ պլպլում էր ձէթի ճրագը. նրա աղօտ բոցն օրօրւում դողդողում էր դանդաղութեամբ, ասես թէ նա էլ էր վախենում քամու վզվզոցից, բայց էլի մի խղճուկ լոյս կար, այնքան որ թանձր փափախների ստուրների տակ մի քանի դէմքեր գծագրւում էին. նորեկի վրայ էլ ընկան մի քանի դողդողջուն, դեղնագոյն շողեր: Գեղջուկ մի դէմք էր այն, ուր չարքաշ կեանքը դրել էր իր կոշտութեան կնիքը հաստ կաշուի խոշոր ծալքերի մէջ. երիտասարդ մարդ էր, բայց ըստ երեւոյթին շատ ապրած. թանձր բեխերի տակ իրար վրայ սղմած շրթունքները տալիս էին նրա դէմքին յամառ արտայայտութիւն. աչքերը մանր էին, բայց շարժուն. կրակոտ:

Գիւղի պահապանն էր նա, վարձուած գիշերապահը: «Խայ»-եր շատ կային Ք... գիւղում, գնացին. այս մէկը մնաց ուշացած կռունկի պէս. մուրալ չուզեց, պահապան եղաւ. տեղացիք անունը լաւ չգիտէին, Նախօ կանչելու տե՛ղ ոմանք: Մխօ կանչեցին, ոմանք էլ Մկօ ասեցին, բայց վերջի-վերջոյ՝ խօսքերը կարծես մէկ արած՝ սկսեցին պարզապէս «Խայ» կանչել: Այսպէս լաւ էր, հեշտ էր, համ էլ՝ իրաւ որ նա «խայ» էր, որովհետեւ հայաստանցի էր, Ոզմ գիւղացի: Ահա այս «Խայն» էր, որ մի անկիւնում պատի տակ տեղ գրաւեց, կծկուեց, տազ արեց. սաքուն տաք էր:

Բուքը շարունակում էր. կատաղի քամին վիրաւոր գազանի պէս մռնչում, ոռնում էր:

- Էսպիսի գիշերուայ է ռաստ եկել խեղճ ողորմելին հա՛- ասաց ռէս Գէվօն - էլ ի՞նչ հողը տար գլխին:

Խօսքը մի գիւղացու մասին էր, որ մի քանի օր առաջ լեռներում բքի բռնուելով՝ խեղդուել էր:

- Քանի՛ ասինք մի՛ գնայ, էս ձիւն ու ձմրանը չօլերը մի՛ ընկիր, կնիկ, երեխայի տէր ես,- վրայ բերեց միւսը:

Է՛, ի՞նչ ես անգէտ անգէտ խօսում, մարդի ճակատին էն էր գրուած, ասաց Մէլիքը. նա պիտի գնար, նա պիտի գնար, նա պիտի խեղդուէր. ճակատագրից ո՞վ կարող է փախչել:

- Իրա՛ւ է, իրա՛ւ, Մէլի՛ք, ասացին մի քանի հոգի, ճակատի գրածը չի ջնջուի:

Ճակատագի՛ր ամենազօր ճակատագի՛ր... Գի-

շերուայ այս զարհուրելի ժամին, կիսախաւար, գետնափոր սաքուում, քամու այս անճոռնի գոռոցի տակ, որ սարսափելի բաներ էր պատմում այդ կոյր զօրութեան մասին, դժուար էր խօսակցութեան աւելի յարմար նիւթ գտնել: Իւրաքանչիւրն իր դիտողութիւններն արեց այդ մասին. ամէնքն էլ հասան այն եզրակացութեան, որ մարդը խաղալիք է ճակատագրի քմահաճոյքին, որ նրա առաջ անզօր են մարդկային բոլոր հնարքները, նրա բոլոր խելքը, եռանդը, աշխատանքը:

- Ես ճակատագրին չեմ հաւատում, ասաց մի ձայն սաքուի մի անկիւնից:

- Ամէնքի հայեացքները դարձան դէպի այն կողմը... Զարմանքն ընդհանուր էր:

- Ո՞վ է այդ «աժդահան», ասաց Մելիքը հեգնութեամբ:

- Ծառա՛դ եմ, ե՛ս եմ, Մելիք. ես ճակատագրին չե՛մ հաւատում, կրկնեց նոյն ձայնը յամառութեամբ:

Մարդիկ չգիտէին ծիծաղե՞ն, թէ զայրանան. ճակատագրի ամենակարող ուժին չհաւատացողը ողորմելի «Խայն» էր:

- «Էծերի քոսոտը կը կատաղի», սուտ չէ ասած, մրմռաց Մելիքը կէս հեգնութեամբ, կէս բարկացած:

Իսկապէս ամէնքն էլ զայրացած էին. եւ ի՞նչպէս չզայրանային. Մելիքը, հարուստ, զօրեղ Մելիքը՝ հաւատում էր ճակատագրին, վախենում էր նրանից. ռէս Գէվօն, որի ճիպոտի առաջ բոլո-

րը դողում էին ինչպէս ուռի տերեւներ, սարսափում էր ճակատագրից. տէրտէրը խօ՝ ինչ քարոզէր, վերջը ճակատագիրն էր. ամէնքն էլ ընկճուած էին այդ աներեւոյթ զօրութեան առաջ, ամէնքն էլ սոսկում էին նրանից, մէ՛կ այս ողորմելի, Խայը ճակատագրին չէր հաւատում, չէր վախենում նրանից:

- Այո՛, ես չեմ հաւատում այդ ձեր ճակատագրին, կրկնեց Խայն - այս անգամ աւելի յանդուգն ձայնով, երբ տեսաւ իր վրայ ուղղուած արհամարհական հայեացքները: Եւ ես ձեզ հէնց այս րոպէիս կարող էի ցոյց տալ, որ իրաւունք ունիմ, բայց ափսո՛ս, որ պիտի դուրս գամ գիւղը շրջելու: Եւ նա վեր կացաւ, պատրաստուելով դուրս գալ:

Մնա՛, մնա՛ Խայ, գոռացին մի քանի ձայնե՛ր հետաքրքրուած. ո՞ւ ասա թո՛ղ մնայ. հիմա գիւղը չթալանեցին:

Ռէսի ցանկութեամբ Խայը կրկին նստեց իր տեղը: Ամէնքի հայեացքները դէպի նա դարձան, ամէնքը սպասում էին, թէ ի՞նչ պիտի պատմի այս մարդը, որ այդպէս յանդուգն յամառութեամբ արհամարհում է ճակատագիրը:

- Էն տարին - այսպէս սկսեց Խայը - տաս հոգի էինք, տասը գժեր, տասը բոց ու կրակ ունէինք կրծքերիս տակ, միատեսակ կրակ, միեւնոյն կայծից բռնկուած, որ վառում, փոթոթում էր մեզ: Միատեսակ անվախ սիրտ ունէինք, բայց ի՞նչ սիրտ... ծո՛վ էր, վշտերով ալեկոծ ու ամօթից կապտած, խարոյկ էր՝ վրէժով վառուած... Ամիս-

ներ էր, ինչ թափառում էինք չօլից՝ չօլ, սարից՝ սար, ձորից՝ ձոր. օձերի հետ էինք ջուր խմում, քարէ անկողնի մէջ դրպէներով հանգիստ առնում: Դէ, ի՞նչ անէինք. շատ երկար կուլ տուինք մեր անարգանքը. համբերութիւններս ահագին էր, բայց մեր դուշմանի անաստուածութիւնը, նրա անսիրտ անամօթութիւնը անսահման էր. էլ ապրել չէր լինում. հաց չկար, եղածն էլ կուլ չէր գնում, թոյն ու լեղի էր դարձել: Մենք էլ ամէն բան թողինք, տուն ու ընտանիք, մալ ու միւլք եւ մեր պատուի թուք ու մուրը սրբելու համար մի մի հրացան առանք, սարերն ընկանք: Այսպէս լա՛ւ էր... ազա՛տ էինք...

Օ՛, երբ մարդ այնպիսի ցաւեր ունի, ինչպիսին մերն էր. երբ մարդու քոյրը, մայրը, կինն է անպատուած, երբ զաւակն է սպանուած, երբ ծերունի հայրն է անարգուած,- այն ժամանակ էլ աշխարհում ոչինչ, ոչինչ չի կարող նրան մխիթարել. կուրծքը եռում, բորբոքում է բոցերի մէջ արցունքն անզօր է զովացնել նրան. սփոփիչ խօսքերը ծաղր ու ծանակ են... բայց երբ մարդ սղմում է կրծքին հրացանի տաք փողը, պի՜նդ, պի՜նդ, երբ մարդ տեսնում է, թէ ինչպէս է նա մահ որձկում արիւնապատ թշնամու գլխին, այդ ժամանակ, օ՛, միայն այդ ժամանակ՝ մարդու սիրտը հովանում է, հոգին հանգստանում, ամօթից էլ չի կարմրում երեսը, զգում է, որ ինքն էլ մարդ է, փափախ ունի գլխին. պատիւ ունի...

Քիւրդերն ու թիւրքերը մեզ ասում էին «ֆէդա-

յի»- իսկ հայերն ասում էին «վրիժառու ոգի»: Մեր *առջեւից սարսափն էր գնում, մեր յետեւում մահն* էր փռւում: Սարերի միակ տէրը մնացինք մենք ու արծիւները. մի քիչ նման էլ էինք իրար. միատեսակ մենք ու արծիւները. միատեսակ էինք յարձակւում մեր որսերի վրայ: Քանի՛ տեղ հասանք, քանի՛ աւազակ թիւրք ու քիւրդի զգուելի մուրազը փորումը թողինք: Շատ անգամ մեզ փնտռում էին, բայց մենք դարձել էինք աներեւոյթ դեւեր, ամէն տեղ էինք եւ ո՛չ մի տեղ. Ֆէդայիին գտնելը հեշտ չէր, ամէն տեղ էինք եւ ո՛չ մի տեղ. հանդիպելն էլ զարհուրելի: Այսպէս էինք մենք, եւ սպասում էինք մեր ճակատագրին. մենք հաւատում էինք նրան:

*Մի օր Սիմ լերան կատարին էինք, որ մեր պա*շարը վերջացաւ: Ինձ վիճակուեց պաշարի գնալ: Ես գիւղերը ճանաչում էի. բայց շէ՞ն էին, թէ աւերակ, բնակիչները կայի՞ն, թէ գաղթել էին,- այդ ես չգիտէի. ինչ եւ լինէր, պիտի գնայի, ինչպէս եւ *լինէր, պիտի պաշար ճարէի:* Ես ցած իջայ մեր որջից օրը ցերեկով, առանց զէնքի, առանց նոյնիսկ ձեռնափայտի. մտածում էի, թէ թշնամու չեմ պատահի, եթէ պատահեմ էլ, անզէն լինելս գուցէ ինձ փրկի. իսկ եթէ չեմ փրկուի, երեւի ճակատագիրս այդպէս է: եւ այսպէս ես գնում էի... Բաւական ժամանակ շուրջս մեռելութիւն էր, ոչ ոք չկար. առջեւ մի սար էր, պէտք էր բարձրանալ *եւ ապա վար իջնել յաջորդ ձորը: Բարձրացայ,* հենց կատարին առջեւ ցցուեց մի քիւրդ, մի հա-

միդիէ, ոտից գլուխ զինուած:

- Բարեւ քիրվա՛, ասացի ես անհոգ եղանակով:

- Բարեւ ֆլա՛, պատասխանեց քիւրդը, բայց չանցաւ, կանգ առաւ՝ նայեց ինձ:

Ես կանգ չառայ, այլ առաջ անցայ, շարունակեցի ճանապարհս. բայց զգում էի, որ քիւրդը տակաւին կանգնած հետեւում է ինձ հայեացքով: Ես չէի շտապում՝ կասկածի առիթ չտալու համար:

- Հէ՛յ ֆլա՛, կաց, լսեցի յանկարծ քիւրդի ձայնը, յետ նայեցի, կանգ առայ: Ճակատագիրս է, մտածեցի ես. եւ ճիշտ որ ճակատագիրը հենց այս քիւրդի կերապարանքը կարող էր ունենալ. հրացանն ուսին, կեռ թուրը կողքին, սպիտակ փղոսկրէ կոթով մի դաշոյն գօտիկը խրած, դէմքը զգուելի, աչքերը կատաղի՛ իսկ եւ իսկ քաղցած գայլի աչքեր: Նա մօտեցաւ ինձ:

- Ես օրերում, ես տեղերում ո՛չ մի ֆլա սիրտ չէր անի երեւալ, ասաց քիւրդը. դու բարի պտուղ չես երեւում. ո՞վ ես, ո՞ւր ես գնում:

- Քիւրդ, ասացի, ժամանակները վատացել են, բայց մի մոռացիր, որ մենք հարեւաններ ենք. քեզ իբր հարեւանի ասում եմ, որ ես խուրթեցի եմ, մեր կողմերում սով է, այդ խօմ գիտես. Դերջան եմ գնում երեխաներիս համար մի քիչ հաց ճարեմ. թո՛ղ ինձ հանգիստ անցնեմ, գնամ:

- Չէ՛ ֆլա՛, խաբել չես կարող ինձ, դու բարի պտուղ չես:

- Քիւ՛րդ, Աստուած ունիս, ինչպէս տեսնում ես՝

վրաս զէնք չունեմ, գրպանումս դանակ չկայ, թէ գազան էլ դառնամ, երկու ձեռքով ի՞նչ կարող եմ անել, աղաչում եմ քեզ, թո՛ղ անցնեմ, գնամ:

- Առաջ անցի՛ր քեզ գայմագամին պիտի տանեմ:

Գայմագամի՞ն... Այս արդէն սարսափելի էր, որովհետեւ մեզ վաղուց փնտռում էին:

- Քի՛ւրդ, գայմագամին մի՛ տար ինձ. թէեւ դրանից իմ անձին վնաս չկայ, բայց կ՚ուշանամ, երեխաներս մեղք են, սովից կը մեռնեն. Աստուծու սիրուն, քիւ՛րդ, բրա՛ (*), թող ինձ երթամ...

Քիւրդն անողոք մնաց: Ճակատագիրս է, մտածեցի ես, եւ գլուխս քաշ արած, առաջ անցայ: Ի՞նչ կարող էի անել, ուժը նրանն էր, հրացանը՝ նրա ուսին էր, դաշոյնը՝ նրա գօտկումն էր, թուրը՝ նրա կողքին. ի՞նչ անէի երկու ձեռքով: Ճակատագիրս էր:

Գնացինք:

Շուրջս ամէն բան գեղեցիկ էր. արեւը՝ պայծառ, երկինքը՝ պարզ, լեռները կանաչ, ծաղիկներն անուշահոտ, օդը թռչուններով լի, ամէն կողմ կեանք, խնդութիւն: Վերեւ, շա՛տ վերեւ՝ օդի մէջ ճախրում էր մի արագիլ, ազատ, համարձակ: Ես չգիտեմ ինչու՝ իմ վիճակի բոլոր սարսափը մոռացած, նայում էի այդ թռչունին. անթարթ, երկա՛ր: Նախանձո՞ւմ էի արդեօք, թէ ուրիշ մի բան կար, որ գրաւում էր ինձ, ես այդ չգիտէի, բայց

(*) «Բրա» եղբայր:

նայում էի: Երկար ճախրում էր արագիլը. մէկ էլ յանկարծ սկսեց պտոյտներ անելով դէպի վար իջնել եւ շեշտակի թափով ձգեց իրեն մեզանից շատ մօտիկ մի բլրի վրայ: Ես հետեւում էի, այնտեղ մի մեծ օձ կար, ուրեմն նշմարել էր արագիլը: Թռչնի թեւերի շփշփոցից սողունը կծկուեց, գլուխը թագցրեց մարմնի օղակների տակ: Սկսուեց մի սարսափելի կռիւ:

Մենք երկսով էլ կանգ առանք:

- Տեսնո՞ւմ ես, ասաց քիւրդը, ֆլան որ կայ՝ օձ է, այսպէս պէտք է ջախջախել նրան:

Ես պատասխան չունէի, ես դիտում էի: Արագիլն իջնում էր, կտցով հարուածում օձին եւ վրայից անցնում. այդ ժամանակից օգտուելով՝ օձն աշխատում էր փախչել, բայց հազիւ մի քանի օղակ արած, սարսափելի թշնամին սաւառնում էր նրա գլխին, օձը կրկին կծկւում էր, կրկին ծածկում իր գլուխը: Իրաւունք ունէր քիւրդը, իմ եւ օձի վիճակի մէջ մեծ նմանութիւն կար: Օձի էլ ճակատագիրը հասել է, է՛լ փրկութիւն չունի, մտածեցի ես: Այս միտքը նոյնիսկ ինձ մի փոքր մխիթարում էր: Կամաց կամաց արագիլն աւելի յանդգնեցաւ, հարուածներն աւելի յաճախ եւ մահացու դարձան. վերջիվերջոյ օձին արդէն բաւական թուլացած համարելով՝ նա ցած իջաւ նրա կողքին եւ արդէն շուրջը քայլելով՝ երկար կտցով վերջին հարուածներն էր տալիս: Օձը շարունակում էր գլուխը թագցրած պահել, շարունակում էր ըստ երեւոյթին թոյլ թոյլ պաշտպանուել: Արա-

գիլը խիստ մօտ էր նրան այժմ: Մէկ էլ յանկարծ մի զարմանալի բան պատահեց: Այդ կիսամեռ սողունը վերջին ճիգերը հաւաքեց, դուրս հանեց գլուխը, բացեց իր օղակները, պոչի վրայ ցցուեց, ձգուեց *ինչպէս մի խարազան եւ մահացու* օղակներով արագիլի երկար վզին փաթաթուեց: Ի զուր անցան արագիլի բոլոր ջանքերը դուրս կորզելու իր վիզը այդ մահաբեր օղակներից. նա թեւերը թափթափ էր տալիս, կտուցը գետնին *քսում, յետ յետ էր քաշւում. առաջ անցնում,* գետնին թաւալւում, փորձում էր վեր բարձրանալ, թռչել փախչել,- *ապարդիւն ջանքեր... Օձի յուսահատ* կատաղութիւնը զարհուրելի էր. նրա՝ օղակները սղմւում էին ու սղմւում, եւ վերջիվերջոյ թռչունը փռուեց բլրի կրծքին անկենդան... Օձը քաշուեց, անյայտացաւ:

Քիւրդը լուռ էր այժմ: Նա ինձ նայեց, մեր աչքերն իրար հանդիպեցին եւ մի քանի վայրկեան մենք անկարող եղանք հեռացնել իրարից մեր հայեացքները: Մեզանից իւրաքանչիւրն աշխատում էր հասկանալ, թէ ի՞նչ է մտածում իր հակառակորդը այդ րոպէին: Ոչ մի կասկած չկար, որ երկսիս գանգերի մէջ եռացող մտքերն էլ միմեանց *վերաբերմամբ ահաւոր էին: Այդ մենք հասկանում* էինք, կարդում էինք իրար աչքերում փոխադարձաբար. չէ՞ որ աչքերը մտքի ակամայ դաւաճաններն են: Ես հասկացայ, որ այդ գազանը օձի անակնկալ յաղթանակով կատաղած, որոշել է ինձ սպանել: Այդ ես շատ լաւ կարդացի նրա աչ-

քերում, որոնց արտայայտութիւնը այժմ աւելի չարագուշակ էր, օ՜, ես ճանաչում էի քիւրդի աչքերը: Բայց ես էլ էի մտածում: Օձի եւ արագիլի կռիւը իմ մէջ էլ մի փոփոխութիւն առաջ բերեց: Ես դեռ երբեք չէի լսել, թէ օձը արագիլին կարող է խեղդել. յայտնի է, որ արագիլն է օձի մահաբեր թշնամին, նրա մարմնացած ճակատագիրը. այդ ի՞նչպէս պատահեց, որ այսօր այդ ճակատագիրը սխալ դուրս եկաւ: Աստուած, որ չի թոյլ տալիս օձի նման զզուելի սողունն անգամ անարդար զոհ դառնայ արագիլին, նոյն Աստուածը մի՞թէ պիտի թոյլ տայ, որ այս քիւրդը, օձից տասն անգամ զզուելի այս արարածը իմ ճակատագիրը տնօրինի: Չէ, ճակատագիրը սխալ է, մտածեցի ես... պիտի ճար տեսնել:

Եւ ես սկսեցի մտածել երկա՛ր, երկա՛ր... Հնարք էի փնտռում. բայց ի՞նչ հնարք, մի դանակ էլ չունէի: Այդ րոպէին աչքս ընկաւ քիւրդի այն սիրուն դաշոյնին, որ խրել էր իր գօտին... Ա՜խ, գոնէ այն իմ ձեռքում լինէր, միա՛յն այն:

- Գնա՛, որոտաց քիւրդը. ի՞նչ ես կանգնել:

Ես շարժուեցի, մենք մտանք մի ձոր, խուլ, ամայի ձոր: Քիւրդն սկսեց իր շուրջը նայել. նրա շարժումները անհանգիստ էին. երեւի չարագործն էլ իր անմեղ զոհի առաջ վճռական րոպէին գէթ մի փոքր դողալ գիտէ: Նա յանձախակ ցած էր առնում հրացանն ուսից, կրկին ուսն էր ձգում: Ես զգացի, որ մօտ է վախճանս, բայց այլեւս չէի ուզում մեռնել. երբ օձն ապրելու իրաւունք ունի,

մարդը, այն էլ հայ-քրիստոնեան չի կարող այդ իրաւունքից զրկուած լինել: Ես կամաց-կամաց քայլերս նուազեցրի: Ես անելիք ունէի. ինձ համար անհրաժեշտ էր, որ քիւրդի առջեւը չլինեմ, դա վտանգաւոր էր:

- Շո՛ւտ, շուտ գնա՛, շտապեցնում էր քիւրդը: Նա աշխատում էր անդադար, որ ես իր առջեւը լինեմ. այդ ես գիտէի. իսկ ես աշխատում էի նրա հետ հաւասար գծով ընթանալ:

Կարծես թէ մենք հասկանում էինք իրար. մենք լուռ կռւում էինք, կեանքի մահու կռիւ, որ ահաւոր էր մանաւանդ իր դաւաճան խոհրդաւորութեամբ:

Ես կանգ առայ յանկարծ. պէտք էր տրեխիս թելը պնդացնել: Քիւրդը հասաւ ինձ, նոյնպէս կանգ առաւ: Ես առանց գլուխս բարձրացնելու վարից դիտեցի նրա դիրքը. նա իմ աջ կողմն էր ցցուած, դաշոյնի սպիտակ կոթը երեւում էր, գօտկի միջից:

- Շո՛ւտ արա՛, պրծի, ֆլա, կոչեց նա զայրացած, տեսնելով իմ դանդաղութիւնը:

Ես յանկարծ գլուխս բարձրացրի. քրդի գօտկից վայրկենապէս դուրս քաշեցի դաշոյնը, եւ մինչեւ որ նա ապշած ու սարսափած պաշտպանուելու որեւէ փորձ կ՚անէր, փայլուն դաշոյնը մինչեւ կոթը ահագին թափով նրա կուրծքը մխեցի: Վայրենին ոռնաց եւ գետին գլորուեց... Ես փրկուած էի: Ահա այն փրկարար դաշոյնը...

Խայը դուրս քաշեց իր գօտուց մի փղոսկրէ կո-

թով դաշոյն ու դրեց բազմականների առաջ: Ճրագի առաջ փայլուն պողպատը պաղ պաղ փայլ էր արձակում: Ամենքը ծնկների վրայ ընկած, լուռ դիտում էին այդ ահաւոր գործիքը, որ մարդկային անզօր ձեռներում լուծել էր ճակատագրի բարդ հանգոյցը: Փոքրիկ, կորած, ողորմելի Խայը հսկայ դարձաւ ամենքի աչքին. նա «աժդահա» էր, նա իշխում էր իր ճակատագրի վրայ, ծաղրում էր իր բախտը: Նա իրաւունք ունէր:

- Ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց վերստին Խայը վեհ յամառութեամբ, բայց այդ բառերն այս անգամ ծիծաղ ու զայրոյթ չառաջացրին, այլ պատկառանք ու մտքե՛ր, մտքե՛ր, փրկարար մտքե՛ր, ազատի՛չ մտքեր, սրբազան խորհուրդներ:

Խայը վերցրեց իր դաշոյնը, գօտիկը խրեց, դուրս գնաց գոմի դռնից, բազմականները մնացին լուռ...

Դրսում քամին շարունակում էր ոռնալ, բայց նա այլեւս չէր խօսում ճակատագրի հզօր ուժից: Քամու բազմազան աղաղակների մէջ մարդիկ այժմ կարդում էին պայքարի ու ազատութեան գոռ շեշտերը...

1898 թ.

ՊԱՏԻԸ

Միքոյի յիշատակին

Շատախը ցնցուած էր: Լեռնէ լեռ, ձորէ ձոր Միքոյի անունն էր հնչում: Նա իր ընկերներով բուն էր դրել ժայռոտ բարձունքների վրայ եւ իր սարսափը սփռել ամէն տեղ: Թշնամիների համար դա մի առիւծ էր, որ յանկարծ դուրս էր պրծել երկաթեայ վանդակից եւ իր կրած ստրկութեան վրէժն էր պահանջում: Խաղաղութիւնը վրդովուած էր Շատախում. աւազակ քիւրդերը դողում էին. հայ գիւղերի պատուհաս Շաքիրը իր սեփական բնակարանի մէջ սոսկում էր նրա անունից եւ ի վերջոյ ճարը կտրած՝ գլուխն առնում կորչում: Հայերն օրհնում էին քաջին, աղօթում նրա կեանքի համար, բայց քիչ էին եւ այնպիսիները, որոնք անէծք էին թափում իրենց բարերարի գլխին. հիւանդ երեխան ե՞րբ չի անիծել բժշկին. ստրկական անզգայութիւնը հանգստի խաղաղութեան սիրահար է. քո՛ւն միայն քո՛ւն - ի՞նչ փոյթ, որ այդ քունը մահաբեր է: Բայց ոչ ոք այնպէս չէր անիծում Միքոյին, ինչպէս Ք... եցի Հայրօն:

Հայրօն չափազանց գոհ էր իր վիճակից, գոմում երկու լուծ հաստավիզ եզներ եւ մի քանի կթան, դաշտում լաւ վարելահողեր, որ իր ձեռքով մշակում էր: Ինքն էր, իր քոյրը եւ ծերունի հայրն ու մայրը - խաղաղ, սիրով ապրում էին: Ճշմարիտ է, վարուցանքի կիսից աւելին քրդերն էին տանում, շատ էր աշխատում՝ քիչ վայելում, բայց էլի մնացածը բաւական էր մի կերպ ապրելու համար - էլ ի՞նչ հոգս... Ասում էին, որ քիւրդերը հայ աղջիկ են փախցրել, որ զափթիէները հարեւանի տանը գիշերել եւ վիրաւորել են կնոջ պատիւը, որ ռէսի հարսին համբուրել է բէգը եւ այլն եւ այլն: Բայց այդ բոլորը Հայրոյին շատ քիչ էր հետաքրքրում. իրենք դեռ խաղաղ էին, Նազոյին ոչ ոք մինչեւ այժմ չէր ասել, թէ աչքիդ վերեւը յօնք կայ, էլ ի՞նչ դարդ, ի՞նդ հոգս. ոՂ է մեղաւոր, որ ուրիշները լաւ չեն նայում իրենց ընտանիքին. զափթիէն տուն եկաւ՝ թող ընտանիքը գիշերը տանից հեռացնեն. ի հարկէ, որ տանը մնան, զափթիէն էլ վատութիւն կ'անի, բէգն է կը համբուրի. դէ՛ նրանք անօրէն են, անօրէն են, անօրէնն էդպէս կը լինի: Այդպէս էր մտածում Հայրոն եւ խիղճը հանգիստ էր: Ամէն առաւօտ, խարազանն ուսին, եզներն առաջն արած՝ դաշտ էր դնում, եւ երեկոյեան՝ քթի տակ երգ մրմռալով՝ վերադառնում: Հայրօն էլ ի՞նչպէս չանիծէր, չատէր Միքոյին, որ իր յանդուգն շահատակութիւններով իրար էր տուել քրդերին, զափթիէներին. նոյնիսկ ձայն կար, թէ գիւղում պիտի պահականոց էլ շինուի:

Եւ պահականոցը շինուեց հենց այն աղբիւրի մօտ, որից Ք... գիւղի աղջիկները ջուր էին տանում: Եւ Հայրօն ատում էր Միքոյին ու իր ընկերներին: Սակայն մի դէպք այդ ատելութեան զգացմունքը էր աւելի զօրացրեց:

Աշուն էր: Գիւղից շա՛տ հեռու, մի ամայի ձորակի մէջ, Հայրօն ակօսում էր իր վերջին վարելահողը:

- Բարի աջողում, Հայրո՛: Նա յետ դարձաւ նայեց. Միքոն էր իր խմբով:

- Աստուծու բարին, պատասխանեց Հայրօն դժկամակութեամբ:

- Էդ ի՞նչ ես անում, Հա՛յրօ:

- Վար եմ անում, չե՞ս տեսնում:

- Ինչի՞ համար է այդ վարը:

Հարցը տարօրինակ էր. Հայրօն պատասխանի փոխարէն՝ երկար նայեց Միքոյին, ապա մրմռաց.

- Ինչի՛ համար է. կ՚ասես ինքը չի հասկանում, որ տուն ու տեղի տէր ենք, հացի հոգս պիտի քաշենք:

- Հա՛ց ես աշխատում հաա՛-ասաց խօսակիցը հեգնութեամբ- լաւ ես անում, հա՛յրօ, լաւ ես անում: Բայց որ այդքան աշխատում ես, քիւրդ ու թիւրքը քեզ հաց թողնո՞ւմ են. տանդ հաց կա՞յ այժմ:

- Ապա չկա՞յ...

- Շատ ուրախ եմ, որ կայ: Թէ որ էդպէս է, հարեւան ջան, տեսնում ես, սար ու ձոր ընկած մարդիկ ենք, գեղերն էլ մտնել չենք կարող. մենք եզ-

ներդ կը պահենք, դու վազէվազ գեղ գնա, մի քիչ հաց բեր մեզ, հարեւան ենք, հայ քրիստոնեայ ենք: Ամբողջ մի օր է, որ բան չենք կերել:

Էդ էր պակաս. Հայրօն գնայ Ֆէդայիների, ղաչաղների համար հաց բերի... Նա փորձեց գլուխը ազատել, յոգնածութիւնը, գիւղի հեռաւորութիւնը պատճառաբանելով, բայց ի զո՜ւր: Միքօն վերջիվերջոյ պահանջող, հրամայող, անողորմ հրամայող դարձաւ:

Ճար չկար:

- Աստուած ձեր գործին երբեք յաջողութիւն չտայ, մրմռաց Հայրօն եւ եզները թողնելով՝ դէպի գիւղ գնաց:

Պահականոցի առաջեւից անցնելի՝ նա մի կանգ առաւ: Նրա գլխով մի զարհուրելի միտք անցաւ - չմտնե՞լ արդեօք յիսնապետին պատմել բոլորը եւ միանգամից ազատուել այդ դեւ Միքոյից: Նա նոյնիսկ մի քանի քայլ արեց դէպի պահականոցը, բայց հէնց այդ րոպէին որտեղից որտեղ՝ մի հատիկ անուն յիշեց, միակը, որ նա ո՞վ գիտէ երբ լսել էր ժամում, «Յուդա՜»... Նա կանգ առաւ, շրթունքները մի քանի անգամ ինքնաբերաբար հնչեցին՝ «Յուդա»... «Յուդա»... Նա լսում էր այդ անունը, եւ նրան նոյնիսկ թւում էր, թէ ինքը չէ ասողը, այլ մի ուրիշ խորհրդաւոր անձ նրան կանչում է՝ «Յուդա»... «Յուդա»... Հայրօն արագութեամբ անցաւ պահականոցի առաջից, նա մինչեւ անգամ մի փոքր էլ վազեց... Նա փախչում էր գայթակղութիւնից...

Եւ Միքօն ստացաւ հացի պաշարը: Բայց այդ ծանր փորձութիւնը կրկնապատկեց Հայրոյի ատելութինը: Նա կ'ուզէր, որ Միքոյին բռնեն սպանեն, քերթեն, անյայտացնեն, բայց ինքը մաս չունենայ այդ բանում: Նա ոճրից վախենում էր:

Էլի օրեր անցան:

Հայրօն նորից ընկաւ իր սովորական աշխատութիւնների յետեւից, նոյնիսկ մոռացաւ էլ Միքոյին...

Աշնանային մռայլ, ամպամած երեկոյ էր, երբ Հայրօն տուն էր դառնում դանդաղ ու անհոգ, ինչպէս այն զոյգ եզները, որոնք ականջները կախ գցած օրօրուելով առաջ էին շարժւում: Եզները որոճում էին, Հայրօն էլ երգ էր մրմռում: Պահականոցի առաջ նա կանգ առաւ քարացած: Նրա ականջին մի այնպիսի կանացի ձայն հասաւ, մի այնպիսի ճիչ, որ նա մինչեւ իր ոսկորների ծուծը դողաց... Անասուններն անգամ, իրենց ականջները խլշեցին այդ ձայնից, Հայրօն ի՞նչպէս չդողար... *Ներսում մի ոճիր էր կատարւում... Զոհը* կին էր, աղբիւրի մօտ երեւում էր մի սափոր: Հայրօն ուզեց նորէն փախչել - ուրիշ ի՞նչ անէր. ներս մտնե՞լ, օգնութիւ՞ն աղաղակել, ո՞վ, Հայրօն... Բայց նրա ի՞նչ բանն էր խառնուել ուրիշի գործին. *ո՞վ գիտէ ում աղջիկն է*, եւ նա մի քայլ ձգեց, սակայն երկրորդ քայլն անել անկարող էր... Հայրոն զգաց, որ ինքն անկարող է հեռանալ այդտեղից, ասես թէ նրան մեխեցին պահականոցի առաջ... Զարհուրելի չարիքի հանդէպ զարթած առաքինութեան հզօր ձայնն էր, որ նրան դիւթեց, կաշ-

կանդեց իր տեղում հակառակ իր կամքի:

Մէկ էլ յանկարծ զափթիէների ձեռքից պոկուելով դուրս փախաւ մի կին սրտաճմլիկ ճիչով եւ Հայրոյի փաթաթուեց:

- Ամա՜ն ախպէր, ազատիր ինձ...

Նազօ՜ն էր...

Ամպերը որոտացին, կայծակը ճայթեց, Հայրոյի աչքերը մթնեցին. նրան թւում էր, թէ տիեզերքը կործանւում է, աշխարհը վերջ է առնում... Նա ինքն էլ չգիտէր թէ ուշաթափ քրոջն ինչպէս տուն հասցրեց: Յետոյ խարազանը դէն շպրտեց, տան մի անկիւնը քաշուեց եւ կատաղութիւնից լաց եղաւ, երկա՜ր, երկա՜ր... Վաղուց նա լաց չէր եղել: Արցունքի խոշոր կաթիլները թափւում էին ամէնքի համար, բոլոր վիրաւորուած, անպատիւ եղած հայ կանանց ու աղջիկների համար, որոնց ցաւն այժմ միայն զգաց նա:

Արդէն գիշեր էր, երբ նա կանգնեց, սրբեց աչքերը, տան մի անկիւնց վերցրեց երկար կոպալը... Հայրը հասկացաւ, որ Հայրօն հեռու տեղ է գնալու...

- Ո՞ւր կ'երթաս Լա՜օ, քե՛ մեռնիմ, դուրսը մութճռիկ, երկիրը՝ չար, երկինքը սեւ, չորս կողմերս կուփ-արնի ծով, ես բէխէր սհաթին ո՞ւր կ'երթաս, Հա՛յրօ ջա՜ն:

- Չեմ կարող, հա՛յր, էլ չեմ կարող: Ես տեսայ, ես կոյր աչքերս տեսան, չեմ կարող տանել, ես պէտք է երթամ... Անձրեւ է գալիս, աւելի լաւ, թո՛ղ գայ, թո՛ղ կարկուտ էլ գայ. թո՛ղ քարեր, պէտ պէտ

քարեր թափուին երկնքից էս գլխիս... Օ՛, ես անիծում էի Միքոյին, ես անիծեցի նրա գործը, եւ իմ շրթունքները չայրուեցի՞ն, եւ ես չը պապանձուեցի, ինչո՞ւ Աստուած: Թէ Միքոյի գործն անիծուած է, ո՞րն է օրհնուած, ի՞մը... որ դատեմ քրդերն ուտե՞ն, քոյր պահեմ որ զափթէիէն տանի՞... Հօ՛, թաղեմ էս գլուխը... Դեռ գդակ էլ ունիմ... Հայրոյին գդա՞կ... ինչո՞ւ, ի՞նչ իրաւունքով... Դէ ասա՛, բոլոր կնիկներն էլ պիտի գդակ դնեն էլի՛... Եւ նա խլեց գլխից իր քօլօզը, զարկեց գետնին եւ դուրս գալով կորաւ խաւարի եւ անձրեւի մէջ... Պէտք էր Միքոյին գտնել:

Երկար ժամանակ նա զնում էր մտքում կրկնելով՝ Միքո՛, Միքո երբեմն վազում էլ էր: Անձրեւը ծեծում էր նրան, քամին խառնում էր մազերը, խճճում գլխին, բայց նա շարունակում էր վազել անընդհատ, ինչպէս մի զայրացած գիշերային ոգի, որ փնտռում էր իր զոհին, կամ ինչպէս մի մեռելի ուրուական, որին մօր անէծքը հալածել է իր գերեզմանից այդ զարհուրելի ժամին...

Երկա՛ր գնաց... Դեռ խաւար էր. յոգնած նստեց մի քարի վրայ, մտածեց: Օ՛, զարհուրելի բաներ էր մտածում... Նա կ'ուզէր այդ ժամին բոց դառնալ, հրդեհել ամբողջ աշխարհը, որպէսզի այն պահականոցն էլ իր զափթիէներով այրուի, մոխիր դառնայ. պէտք էր վրէժ առնել, պէտք էր մահու գնով սրբել քրոջ պատուի անարգանքը... Բայց ի՞նչպէս... Նա նորէն յիշեց Միքոյին: Գտնել նրա՞ն... Օրեր ու շաբաթներ թափառեց Հայրօն,

գտաւ Միքոյին եւ նրա ոտներն ընկաւ.

- Էլ չեմ կարող ապրել, չեմ կարող խմբապետ. մորթեցէ՛ք, քերթեցէք ինձ, դիակս շներին ձգեցէք, ի՞նչ հարկաւոր է այսպիսի կեանքը... Օ՜, ինձ ասում էին, ինձ պատմում էին, բայց ես ուրիշի ցաւը չէի հասկանում, իմ միսը չէին կտրել, իմ սիրտը չէին ծակել, իմ քոյրը չէր պղծուած, ես անզգայ էի: Այժմ... այժմ սպանեցէ՛ք ինձ, միայն թէ առէ՛ք Նազոյի վրէժը: Կոտորեցէք, այդ պահակատունը, կոտորեցէ՛ք զափթիէներին, օ՜ կոտորեցէ՛ք բոլոր զափթիէներին, առէ՛ք բոլոր հայ կոյսերի վրէժը...

Եւ նա մռնչում էր ցաւից, տրորում էր, չանգռում էր կուրծքը: Նա այրւում էր ինչպէս բոցերի մէջ: Դեռ երբեք անսիրտ ապերախտութիւնն այդ աստիճան անողորմ կերպով չէր պատժուած, երբեք ապաշխարութիւնն աւելի անկեղծ, աւելի դառն չէր եղած: Եւ Հայրօն հայդուկ դարձաւ: Նա սեղմեց իր այրուած կրծքին պաղ հրացանը, բայց թախիծը նրանից չհեռացաւ. բոց ունէր ներսում. քրոջ անպատուութիւնը նրան հանգիստ չէր տալիս: Նրա ամենասուրբ ցանկութիւնն էր տեսնել պահականոցը, այդ աւազակների բոյնը բոցերի մէջ եւ պահակները խողխողուած, ապա շունչը փչել հանգիստ: «Խմբապետ, կրկնում է նա յաճախ, դժոխք ուղարկես կ'երթամ, գլուխս. հազար մահու կը տամ, միայն վախենում եմ աչքերս չտեսնեն պահականոցի ջարդը»:

Հասաւ վերջապէս Հայրոյի համար սրբազան

վրէժխնդրութեան ժամը:

Ուշ աշուն էր, խաւար գիշեր: Ք... գիւղը գնեց երկչոտ քնով: Այն երկրում ուր Շատախն է, գիւղերը չեն քնում, այլ մեռնում են գիշերները վտանգի ահից: Անքուն էր միայն Նազօն: Իր անարգանից ու եղբօր անյայտանալուց յետոյ նա քուն չունէր, նա տանջւում էր, նա սպասում էր եղբօրը... Հեռու մի շուն ոռնաց ողբաձայն, տխուր. ապա կաղկանձելով նրան ձայնակցեցին մի քանի ուրիշները. կազմուեց մի չարագուշակ, այլանդակ համերգ - միակ նշանը թէ գիւղում բնակիչներ կայ: Յանկարծ մի հրացանի տրաքոց, գիւղն էլ աւելի կծկուեց, ո՛չ մի դուռ չճռնչաց... Նորէն հրացանի պայթիւն եւ ապա անընդհատ, միահամուռ գոռոց գնդակների...

Նազօն կամացուկ նստեց անկողնի մէջ: Նա ականջ էր դնում... Հրացանների գոռոցի մէջ նաեւ մարդկային ձայներ էին լսւում ուղիղ պահակատան կողմից: Նազօն ցնցուեց: Նրան յանկարծ թուաց, որ այդ բոլորն իր անձի հետ ինչ որ կապ ունի: Մի ներքին ձայն նրան ասում էր, որ ինքն է այդ ահաւոր հրացանաձգութեան, այդ աղմուկների պատճառը, որ անպատուութեան վրէժն է լուծւում, որ այնտեղ Հայրօն...

Նա կամացուկ շորերը հագաւ, վեր կացաւ, դուռը բացեց զգուշութեամբ եւ բարձրացաւ կտուրը: Տեսարանն ահաւոր էր... Ամբողջ գիւղը լուսաւորուած էր. պահականոցը վառւում էր բոցերի մէջ եւ այդ հրդեհի շուրջը կատաղի կռիւ էր

մղում, հրացանները ճայթում էին անընդհատ: Նազոյի յուզուած կուրծքը բարձր ու ցածր էր լինում... Նա ե՛ւ սարսափում այդ կատաղի որոտներից, ե՛ւ հաճոյքով էր դիտում հրդեհի բոցերը: Օ՜, սրբազան բոցեր, որուն լիզում, մաքրում էին նրա պատուի վրայի կեղտն ու արատը: Այն միտքը, թէ իր եղբայրն այնտեղ է, այդ կռուի մէջ է, գուցէ այդ բոցերի մէջ, գուցէ վիրաւոր, նրան մի անօրինակ քաջութիւն ներշնչեց. նա համարեա անյաղթելի պահանջ զգաց այնտեղ լինել, այդ բոցերի մօտ, իր եղբօր կողքին, մօտիկից տեսնել իր դահիճների կոտորածը, լսել նրանց մահամերձ հռնդիւնները, նրանց հառաչանքն ու ճիչը, տեսնել իր եղբօրը եւ նրա ընկերներին իրենց սրբազան զայրոյթի, սրբազան ոգեւորութեան մէջ...

Եւ ահա նա ցած իջաւ կտրից եւ ոլոր մոլոր փողոցներով դէպի պահականոցը վազեց: Մինչ այդ՝ պահականոցի ջարդը շարունակւում էր: Չինուորներից ոմանք ոռնում էին բոցերի մէջ խորովուելով, ուրիշները դուրս գալ փորձելով՝ ընկում էին հայդուկների գնդակներից, ոմանք գլուխները կորցրած խելագարի պէս դէս ու դէն էին վազում: Կատաղի, անգութ էր մանաւանդ մի հայդուկ. մի թիկնաւէտ, բարձրահասակ գեղջուկ, որի գլուխը փաթաթուած էր միայն մի լաթի կտորով: Խմբապետը՝ Միքօն որոտագին հրամաններ էր արձակում: Բոցերով լուսաւորուած այդ զայրացկոտ դէմքերը զարհուրելի էին: Մէկ էլ յանկարծ բոցերի միջից մի վերջին գնդակ թռաւ.

գլուխը թաշկինակով ծածկած մարդը երերաց, գունատուեց: Հէնց այդ րոպէին Նազօն գրկեց նրան:

- Վա՜խ, քոռանամ ես, Հայրո՛ ջան...

Եղբայրը քնքշութեամբ փարեց քրոջ վզին եւ համբուրեց նրան... Հայրօն գունատ էր, շրթունքները դողդողում էին. նա կամաց-կամաց իր ամբողջ մարմնով ծանրացաւ քրոջ ուսին: Կրծքի վերքից հոսում էր արիւնը: Քոյրը սեղմեց ձեռքը վերքի վրայ եւ կրկին ու կրկին համբուրեց եղբօր գունատ ճակատը...

Հայրօն աւելի եւ աւելի կախուեց, ծանրացաւ քրոջ ուսին եւ նա հազիւ կարողացաւ թոթովել.

Նազո՛ ջան. հիմա կարող ես գդակը գլխիս դնել...

Վրէժխնդրութեան բոցերը լուսաւորում էին պատուի նահատակի գունատ դէմքը: Նա մեռնում էր, բայց քրոջ անարգանքը սրբուած էր...

1899 թթ.

ԷԼ ՄԻ ԱՂՕԹԻՐ

Թ. գիւղից հիւսիս մի ժայռ է ցցուած, բարձր, այլանդակ. ոչ ոք չի բարձրանում նրա անճոռնի, հպարտ կատարը. միայն գիշատիչ թռչուններն են պատառոտում այնտեղ իրենց արիւնոտ որսը կամ հանգիստ առնում երկար թռիչքից յետոյ, եւ անդադրում, թափառական քամին է գալիս այնտեղ փնտռելու իր մի կորուստը, որ երբեք չի ունեցել եւ կարծես զայրացած՝ ժայռի յամառ, դարաւոր ամրութիւնից՝ մերթ զայրոյթից մռնչալով եւ մերթ լալագին՝ հեռու է փախչում, գնում է մայր եթերին պատմելու իր ցաւը, որ ոչ սկիզբ ունի եւ ոչ վախճան: Այս ժայռի մէջքին յենուած են մի շարք այլ բլուրներ, մի շարք այլ ժայռեր, որոնք կարծես խօսքերը մէկ արած՝ յետեւից հրում, հրհրում են առաջին ժայռին, որ շարժեն, տեղահան անեն: Սակայն անհոգ է առաջին ժայռը, եւ որպէս մի հսկայ, որ իր մեծ ուժի գիտակցութիւնն ունի, մէջքը դէմ է տուել ամէնքին թափին եւ անսպառ համբերութեամբ պահում է նրանց անվերջ, յաւիտեան: Կարծես նա գիտէ, որ առանց իրեն հազարաւոր ժայռեր մէկ մէկի վրայ դէպի վար,

դէպի Թ... գիւղը կը թափուեն եւ շեղջակոյտերի տակ կը ծածկեն բոլոր բնակիչներին, որոնք նրա ուժին ապաւինած՝ հաստատուել են նրա ստորոտում: Կայծակն է ճայթում նրա կատարին, շանթի բոցերն են լիզում գլուխը, կարկուտն է թափուում, անձրեւը ողողում, խստաշունչ ձմրանը ահեղ փոթորիկն է անհասկանալի կատաղութեամբ ձմրանը ահեղ փոթորիկն է անհասկանալի կատաղութեամբ աշխատում շարժել, գլորել նրան,- բոլորն էլ ի զո՛ւր... Տարիները գլորուում են տարիների յետեւից եւ ժայռ այնտեղ է միշտ-անխախտ, անսասան, սեւացած, մռայլ, անճոռնի դիրքով, որպէս ծեր հսկայ, որ մէջքին դրած ահագին բեռի ծանրութիւնից միայն նօթերն է կախել, յօնքերը կիտել: Շոգ ամրանը, երբ կենդանիներն ու մարդիկ տօթից խեղդուում են, երբ զով քամիները կարծես խռոված փախուստ են տալիս խանձուած երկրից եւ արեւը վերից իր կիզիչ շողերով կրակ է մաղում ամէն կողմ, ժայռի ստորոտում խիստ ստուեր է լինում: Այստեղ շատ մօտ է Տէր Սարգսի տունն ու իր կալը. ծերունի քահանան ժայռի ստուերում սիրում է հանգիստ առնել կալում երան անելուց յետոյ: Յաճախ այդ ժամերին *հաւաքւում են այստեղ ռեսն ու միւս գիւղացիները* եւ խօսում են իրենց աշխատանքներից, իրենց ցաւերից, հոգսերից: Թ... գիւղն այցելող բէգերն ու շէյխերը իրենց խուլամներով եւ տաճիկ պաշտօնեաներն իրենց ղափիթիէներով ամառ ժամանակ այս ժայռի զով ստուերումն են հանգիստ

առնում եւ հիւրասիրւում: Նրանց ձիերն էլ այնտեղ տեղ ունեն. ժայռի մէջ՝ ո՞վ գիտէ ե՞րբ եւ ո՞ւմ ձեռքով փորուած են կանթեր, որոնցից կապում են ձիերը: Տարիների ընթացքում ինչե՞ր է տեսել եւ լսել այս ժայռը, եւ սակայն լուռ է...

Դարձեալ ամառ էր, դարձեալ շոգ-կրակ, բայց կալերում կենդանութիւն չէր երեւում եւ ժայռի ստորոտում ոչ ոք չկար: Գիւղի փողոցները դատարկ էին,- այդ օրը գիւղացիք ամէնքն էլ եկեղեցում էին: Ժամաւորները մեծ ու փոքր, մարդ ու կին, շրջապատել էին երկու դագաղներ եւ Տէր Սարգիսը թաղման կարգ էր կատարում: Վեց ամիս առաջ էր ընդամէնը, որ Մուրոն ու Նավօն բանտ տարուեցան, եւ այժմ նրանց բանտից դուրս բերեցին մեռած: Ասում էին, որ հիւանդացել են ու մեռել: Բայց ինչո՞ւ էին բանտ տարել, այդ մարդ չիմացաւ, ոչ զոհերը եւ ոչ նրանց հարեւանները: Մարդիկ չհետաքրքրուեցին նրանց վիճակով. ամբողջ գիւղում միայն Թաթուլն էր, տէր Սարգսի տղան, որ կնճռեց իր ճակատը, կրծոտեց շրթունքները, մի փոքր դէս ու դէն ընկաւ, ինչպէս ցանցում բռնուած թռչուն, որ թռչկոտում է, ելք է փնտռում եւ իր ճիգերի անզօրութիւնը տեսնելով հանդարտւում, լռում: Եւ միայն այսքան: Դեռ փոքր հասակից գիւղացիք նրան «նադինջ» Թաթուլ կոչեցին, որովհետեւ գիւղում կատարուած յաճախակի անարդարութիւնները զայրացնում էին Թաթուլին: Եւ երբ մէկին թակում էին եւ կամ բանտարկում, երբ կողոպտում էին եւ կամ

անպատիւ անում, Թաթուլը կրծոտում էր շրթունքները եւ մռայլւում... Թաթուլը գիտէր, որ մի բան պէտք է անել, որ այդպէս չէ կարելի, բայց թէ ի՞նչ, այդ էր, որ նա չգիտէր:

Այսօր այդ «ի՞նչը» կարծես նրա համար լուծւում էր. նա մռայլ էր, մտազբաղ եւ յափշտակուած: Նա կրծոտում էր շրթունքները եւ մոռանում էր նոյնիսկ ժամանակին խնկարկել, բուրվառը շարժել: Նա նայում էր մեռելների դէմքերին մի այնպիսի յամառ ուշադրութեամբ, որ կարծես թէ իր ճակատագիրն է կարդում այնտեղ: Նավոյի եւ Մուրոյի դէմքերը նման չէին ո՛չ մի մեռելի դէմքի. սրանց արտայայտութիւնը անօրինակ էր, անհասկանալի, բայց բազմախորհուրդ: Թաթուլն աշխատում էր հասկանալ այդ արտայայտութիւնը, աշխատում էր խորը թափանցել ընդմիշտ բաց մնացած նրանց աչքերի մէջ: Թաթուլի համար դրանք երկու դէմքեր չէին, այլ երկու խորհրդաւոր հանելուկներ, որ նա լուծել էր աշխատում...: Ահա թէ ինչու նայում էր եւ մոռանում խնկարկելը: Նրան թւում էր, որ Մուրօն եւ Նավոն փչել են իրենց վերջի շունչը առանց ասել կարողանալու ինչ որ զարմանալի բաներ, որ միմիայն *իրենք գիտէին եւ որ կ՚ուզէին ասել նրան՝ Թաթուլին*, ասել Թ... գիւղին, ասել նոյնիսկ ամբողջ աշխարհին: Երկու դէմքերն էլ կարծես թէ մի երկու ժամի կեանք էին խնդրում, որ խօսեն, դուրս թափեն սրտերի թոյնը, պատրաստ այնուհետեւ հազար մահով մեռնելու: Թաթուլը չէր ուզում, որ

այդ գաղտնիք գերեզման իջնի, ծածկուի յաւիտեան, նա շարունակում էր նայե՛լ, նայե՛լ... Մի որոպէ նրան թուաց նոյնիսկ, որ Նավոյի շրթունքները շարժուեցին, որ նա բաներ շշնջաց. Թաթուլը տեսաւ մինչեւ անգամ, որ մեռելի գլուխը շարժուեց, բարձրացաւ. սրտի սաստիկ տրոփիւնով՝ մոռացած ե՛ւ իր բուրվառը, ե՛ւ յուղարկաւորների բազմութիւնը, նա խորին յուզմունքով առաջացաւ, մի փոքր կռացաւ դէպի մեռելը, որպէսզի լաւ լսի նրա զարհուրելի պատմութիւնը, բայց հենց այդ րոպէին հայրը զայրացած գոչեց.

- Թա՛թուլ, ի՞նչ է պատահել քեզ, բուրվա՛ռը:

Նա յետ յետ քաշուեց, մեռելների դէմքերն անշարժ էին, գլուխներն իրանց տեղերում. նա շարժեց բուրվառը, բայց բոլորովին հակառակ կողմը: Այս բանը եւս առաւել ապշեցրեց ամէնքին: Տէրտէրը վերջին աւետարանն էր կարդում եւ մեռելների հակառակ կողմն անցաւ: Թաթուլը գոհ *եղաւ, այժմ շատ մօտիկից կարող էր դիտել* նրանց դէմքերը եւ... նայում էր... Նավոյի յօնքը ջախջախուած, կապտած էր, Մուրոյի աչքի տակ կար մի մեծ կապոյտ նշան, իսկ բաց մնացած աչքերը արտեւանունքներ չունէին, փետուած էին: Մուրոյի վերին շրթունքը պատռուած էր եւ նրա բացուածքից երեւում էին լնդերքը փշրուած ատամներով:

Դէմքերն այժմ էլ լուռ չէին: Նրանք խօսում էին աչքերով, յօնքերով, շրթունքներով, պատմում էին Թաթուլին սարսափելի բաներ... Այժմ նա գի-

տէր, թէ ի՞նչ է նշանակում այդ տարօրինակ արտայայտութիւնը, որ ո՛չ մի ուրիշ մեռելի դէմք չի ունեցել. գիտէր Մուրոյի եւ Նավոյի գաղտնիքը, որ էլ գերեզմանը ծածկել չէր կարող, գիտէր, թէ ի՞նչ է նշանակում տաճկական բանտ, տաճկական արդարադատութիւն...

***

Թաղումը վերջացաւ: Կալերում աշխատանքը վերսկսուեց:

Ճաշ էր: Թաթուլն ու հայրը պատրաստւում էին Հէշան անել. երկու դէզերի առաջ հայր եւ որդի մի փոքր վիճեցին. մէկն առաջարկում էր փոքրը քանդել. միւսը դէպի մեծն էր դիմում տէր Սարգիսը առարկութիւն չէր սիրում, ուստի երկմատէնը ձեռքին առաջացաւ դէպի մեծ դէզը. Թաթուլն այդ րոպէին մի այնպիսի շարժում արեց, որ կարծես կամենում էր արգիլել հօրը մօտենալ մեծ դէզին, յետոյ մի րոպէ կանգնած մնաց մտագբաղ, յանկարծ ձեռքով մի ջլուտ շարժում արեց եւ մի խիստ որոշում կայացրած մարդու համարձակութեամբ՝ հաստատ քայլերով ինքն էլ մօտեցաւ միեւնոյն դէզին:

Հայր եւ որդի միաժամանակ տնկեցին իրենց եկրմատէնները մի մի խրձի մէջ, վեր բարձրացրին եւ միաժամանկ, ասես սառած, կանգ առան առանց կարողանալու խրձերն այս կամ այն կողմը ձգել... «Տէ՛ր, մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն»

մրմնջաց տէրտէրը. ապա նա ձգեց խուրձն ու երկմատէնը, սաստիկ սպրտնած յետ յետ քաշուեց՝ սարսափած նայելով այն խոռոչին, որ բացուել էր դէզի վրայ երկու խրձերից վերցնելուց յետոյ՝ կարծես թէ ահաւոր օձեր էին բուն գրել այնտեղ... Յետոյ կրկին կարծես թէ վախենալով զարթեցնել շողի ձեռքից մնջած միջատներին անգամ: Մէկ էլ նայեց դէպի խոռոչի մէջ, նրա շունչը բռնւում էր յուզմունքից, նա գլուխը բարձրացրեց եւ հօր ու որդու հայեացքներն իրար հանդիպեցին: Մի փոքր ժամանակ նրանք լուռ նայում էին իրար: Որդին համարձակ, իսկ հայրը սարսափած: Այնտեղ, դէզի խոռոչի մէջ, արեւի կիզիչ շողերի տակ փայլփլում էին մի քանի հրացանների փողեր. հայրը ձեռքը մեկնեց դէպի այդ սարսափելի խոռոչը եւ սղմած ծնօտների միջից գոյեց.

- Սրանք... դո՞ւ...

- Ե՛ս:

- Չա՞ղը քեզ կապեց, խե՞լքդ յանկարծ թռաւ, թէ Աստուած անիծեց քեզ էլ, իմ օջախն էլ:

- Ո՛չ չարը կապեց, ո՛չ խելքս է թռել, ո՛չ Աստուած անիծեց մեզ եւ մեր օջախը: Այս գործի համար Աստուած թէ անիծի՛...

- Ապա ի՞նչպէս այդ բաներն ընկան տէր Սարգսի կալը, աշխարհում էլ տեղ չը կա՞ր, ո՞ր սատանան խրատեց քեզ:

- Հա՛յր, տեսա՞ր դէմքերը...

- Ի՞նչ դէմքեր:

- Տեսա՞ր Մուրոյին եւ Նավոյին դէմքերը...

-Հ ա՛, տեսայ երկու մեռելի դէմք: Նրանցից առաջ շատերն եմ տեսել, այսուհետեւ էլ կը տեսնեմ ուրիշները. ո՛չ ոք անմահ չէ:

- Հա՛յր, մեռել էլ կայ, մեռել էլ, այս երկուսը մեռած չէին:

Մուրօն եւ Նավոն, չէ՞ որ բանտից մեռած բերին նրանց:

- Այո՛, բանտից բերին, բայց նրանք մեռած չէին: Նայեցի՞ր դէմքերին նրանք խօսում էին, եւ ես լսեցի նրանց ասածները, երբ բուրվառ էի ծգում: Նրանք բաներ փսփսացին եւ ես հասկացայ, եւ ի՜նչպիսի բաներ... Վա՛յ նրանց, որոնք չեն լսի: Նրանք ինձ ասացին, ա՛ռ հրացաններ եւ տուր ամէնքին, ով գլխին կրում է քօլօգի մի կտոր, ով որ կնիկ չէ, ով որ իր կրծքի տակ քարի փոխարէն մի սիրտ է կրում զգալու ընդունակ, որ ուրիշի լացը լսելիս մորմոքալ գիտէ, կսկծալ գիտէ, որ խուլ չէ եւ լսում է իր շուրջը հնչուող աղեխարշ ձայները, որ կոյր չէ եւ տեսնում է, թէ ինչե՛ր են կատարւում այժմ մեր սեւ երկնքի տակ: Եւ ես առայ այս զէնքերը, ե՛ս, քո որդին... Անիծիր ինձ, եթէ կամենում ես, հօր անէծքը զարհուրելի է, բայց այս մեր վիճակն էլ անուն չունի:

Մի փոքր ժամանակ լռութիւն տիրեց:

- Ես չեմ անիծի քեզ, որդի, ասաց տէրտէրը մի փոքր հանդարտուած, տեսնելով որդու յուզմունքը... Ես չեմ անիծի, իմ շրթունքներից անէծք չի դուրս գայ, այլ միայն աղօթք, այժմ էլ կ'աղօթեմ քեզ եւ բոլոր աշխարհի համար:

Աղո՛թք, ի՞նչ եղաւ քո աղօթքը, երբ փշրում էին Նավոյի ատամները, երբ ջարդում էին նրանց յօնքերը, փետում արտեւանունքները, մնացածը բանտի պատերից հարցրու: Ոչ, հայր, ես էլ չեմ աղօթի. այս ձեռքը էլ երբեք բուրվառ չի ծգի, այս շրթունքներն էլ երբեք աղօթք, աղաչանք չեն արտասանի, իմ կրծքից երբեք էլ հառաչանք ու հեծեծանք չի դուրս գայ. այս սեւ ժայռը, մեր անարգանքի, մեր ստրկութեան, մեր ցաւ ու հոգսերի այս դարաւոր վկան էլ երբեք իմ բերանից չի լսի մի բառ, որ ամօթ բերէր մի տղամարդի: Այսուհետեւ աղօթքի փոխարէն այսպէս պիտի գործեմ ես, եւ եթէ այս հաճելի չլինի Աստծուն, ես կը բողոքեմ նրա դէմ անգամ, ես կը գոչեմ աշխարհովս մէկ, թէ արդարութիւնը երկնքից չի գալիս, թէ անարդարութեան, չարագործութեան նիւթող, հովանաւորող է Աստուած... Բայց այդ անկարելի է, ես համոզուած եմ, որ երկինքն էլ կ'օրհնի իմ ճանապարհը...

- Լսի՛ր ինձ որդի, ես ծեր եմ, փորձուած, դու ջահիլ ես անփորձ, խօսածներդ չարի թելադրութիւն են: Հայ քրիստոնեան նման է այս ժայռին, թշնամիները փոթորիկներ են, որ կ'անցնին նրա կատարով առանց խորտակել կարողանալու նրան: Հանգիստ եղիր եւ աղօթիր Աստծուն. իսկ այս բաները հէնց այս գիշեր այնպէս անյայտացրու, որ աշխարհում ոչ ոք չլսի քո ոտնաձայնը:

- Հէնց այս գիշեր ես կը հեռացնեմ նրանց, բայց իմացիր, որ ինձ այլեւս չես տեսնի... Ես կ'երթամ

այնտեղ, ուր հոսում է արիւն, ուր թափւում է արցունք եւ ուր թշուառ մարդը ծանր հարուածի տակ միայն չի աղաչում, հապա նաեւ բողոքել գիտէ, կռուել գիտէ. կը գտնեմ ձեռներ, որ մահի հետ միասին այս մահի գործիքն էլ բռնել գիտեն: Եւ երանի թէ երբեք երբեք չյիշես ինձ...

Եւ նոյն գիշերը հեռացաւ Թաթուլը:

***

Մի ամբողջ շաբաթ էր, որ Հաքքի բէգը ժայռի ստուերում վայելում էր տէր Սարգսի ճոխ սեղանը: Նրա սովորութիւնն էր ամէն ամառ մի քանի օրով «հիւր» գալ իր «քիրվա քէշիշին»: Բայց երբեք այսքան երկար չէր մնացել: Այս հանգամանքը չարագուշակ էր թւում թէ՛ քահանային եւ թէ՛ գիւղացիներին. ամէնքը վախենում էին տէրտէրի աղջիկ Գոհարի համար, որի գեղեցկութեան հռչակը տարածուած էր շրջակայքում: Տէրտէրը աղօթքի մրմունջները շրթունքներին աշխատում էր ամէն կերպով գոհ անել բէգին, եւ նա յոյս ունէր: Էլի մի քանի օր անցաւ, եւ մի երեկոյ նա տուն մտաւ երերալով ուժասպառ, ու երբ գիշերն ամէնքը քնեցին, նա երկա՛ր, երկա՛ր աղօթեց. նրա ծեր աչքերից հոսում էին դառն արցունքներ, նա հեկեկում էր երեխայի պէս:

- Ինչո՞ւ ես արտասւում, հարցրեց տիրուհին, չլինի Թաթուլին...

- Երանի՛ թէ իմ արցունքները միայն Թաթուլի

պատճառով լինէին, կնիկ: Աստծու պատիժը վրայ է հասել մեզ. բէգը...

- Բէգը, ի՞նչ:

- Գոհարին է ուզում... թէ չէ, ասում է... գիւղը կ'աւերեմ, կրակ կը տամ:

Կուրացէ՛ք աչքեր, խլացէ՛ք ականջներ, այս էլ պիտի տեսնէի, այս էլ պիտի լսէի, սրա՞ համար եմ ապրում, եւ կինը երկու ձեռքով խփեց գլխին ու կռացաւ:

- Կնիկ, ես աղաչեցի, արիւն-արցունք թափեցի, ձեռքերը համբուրեցի, այս ճերմակ միրուքս ու մազերս նրա ոտների փոշու տակ տրորեցի, բոլորն ի զուր: Գիւղը կը կոտորեն... Օ՛ֆ, Աստուած, ո՛ր մեղքիս համար...

Լռութիւն տիրեց:

Ես արթուն եմ հայր, գոչեց Գոհարը յանկարծ: Ես բոլորը լսեցի. բէգն ուզում է ինձ... Սե՛ւ, սե՛ւ օր, սեւաւո՛ր գլուխ...

Ապա նա վեր ցատկեց անկողնից կիսամերկ, ձգուեց իր ամբողջ սիրուն հասակով, որ գծագրւում էր կիսախաւարի մէջ ինչպէս մի զայրացած ոգի, եւ շարունակեց.

- Հա՛յր, գթոտ եղիր. ասա՛ ինձ գոնէ, ո՞ւր է իմ Թաթուլը, ո՞ւր է իմ եղբայրը. չէ՞ որ եղբօր հզօր ձեռը պիտի պաշտպանի քրոջ պատիւը. ո՞ւր է այդ ձեռքը. զո՛ւր է ուրեմն որ խեղճ քոյրերը ջիւան եղբայրների արեւովն են երդւում, նրանց ցան առնում. նրանց գլխով պտոյտ գալիս...Այս իմ սեւ օրին ո՞ւր է Թաթուլը, ո՞ւր է իմ եղբայրը,

դու գիտե՞ս չէ՞, հայր: Ա՛խ, քանի՛ անգամ ես քեզ հարցրել եմ, քեզ աղաչել, պաղատել եմ, եւ դու միշտ լռել ես: Չէ՞, նա այստեղ լինէր, բէգն ինձ չէր տանի: Նա չէր տայ, չէր տայ: Դէ՛, գոնէ հիմա ասա՛, անխիղճ հա՛յր, ո՞ւր է Թաթուլը...

Հայրը լսում էր դատապարտուածի պէս: Աղջիկը կրակ կտրած խօսում ու խօսում, աչքերից թափւում էին արցունքները, բայց միայն վշտի, յուսահատութեան նշան չէին նրանք. նա արտասւում էր նաեւ զայրոյթից, կատաղութիւնից:

- Էլ ոչինչ չունեմ ես, շարունակեց աղջիկը, ոչինչ, ոչինչ... Եղբայրս ձգեց ինձ անտէր, անպաշտպան, հայրս անզօր է անօրէն բէգի առաջ, Սեւաւո՛ր աղջիկներ, պատիւ էլ պահում ո՞ր օրուայ համար. կամ ելէ՛ք միասին ձեռք ձեռքի բռնած սեւ ժայռի կատարից ներքեւ գլորուենք, կամ թէ չէ գնանք բէգերին ծախուենք, չէ՞ մեր պատիւը նրանց է պատկանում, երբ հայրեր, եղբայրներ ձգում են մեզ անտէր: Ես առաջինը գնում եմ բէգին...

Եւ նա արագ քայլերով դէպի դուռը գնաց, բացեց եւ դուրս գնաց, անյայտացաւ խաւարի մէջ: Երկու ծերերի լացը հնչուեց խրճիթում:

***

Միւս առաւօտ սարսափած գիւղը լսեց գիշերուայ անցքը- Գոհարի անյայտանալը: Քահանան կապուած էր ժայռից, որովհետեւ թագցրել էր

աղջկան: Ժայռի ստորոտից նա մարած աչքերով դիտում էր, թէ ի՞նչ է կատարւում թշուառ գիւղի գլխին... Ողբ ու լաց, անէծք ու աղաղակ բռնել էր գիւղը: Թալանն սկսուած էր. քահանան էլ չէր արտասւում, այլ մտածում էր. նա չէր աղօթում, այլ անիծում էր: Նա կ'ուզէր այժմ Թաթուլին տեսնել, միայն Թաթուլին, այն փայլուն հրացաններով, այն բոցոտ աչքերով, այն ահաւոր յօնքերով: Բայց Թաթուլը չկար ու չկար: Ո՞վ էր մեղաւոր - ինքը, միայն ինքը: Ապա նա սկսեց մտածել, թէ Թաթուլը մոռացած չի լինի հայրենի օջախն ու գիւղը, այդ անկարելի է: Ա՜խ. թէ իմանար, ինչ է կատարւում այստեղ, նա կը գար, կը գար ինչպէս մի արծիւ: Նրա աչքերը դառնում էին ակամայ դէպի այն կողմը, բլրի վրայ, ուր ոլոր մոլոր մի ճանապարհ ձգւում էր գիւղից վեր, վեր: Նայում էր եւ սպասում:

Բէգն եկաւ, նրա ջանքերն ի զուր էին անցել Գոհարին գտնելու համար:

- Բէ՛գ, քեզ ասացի, որ նա ինքն է փախել Բէ՛գ, մենք տարիներով աղ ու հաց ենք կերել միասին, իմ տունը, իմ օջախը քո առաջ բաց է եղել. լսի՛ր ինձ այդ աղ ու հացը ոտի տակ մի՛ տուր. բէ՛գ, վատութիւն մի՛ արա մեզ հետ. վերեւ նայիր, Աստուած կայ այնտեղ, կրօնները տարբեր է, բայց չէ՞ որ միեւնոյն Աստուածն է դատելու ամենիս:

- Ժամանակները փոխուել են... ո՞ւր է Գոհարը:

- Բէ՛գ, իմ ծերութեանը խնայիր, հանգիստ թող գիւղը կամ աւերիր միայն իմ տունը, անարատ

թող իմ պատիւը. բէ՛գ, վերջին անգամ աղաչում եմ, քեզ, բէ՛գ Աստուած...

- Մեր Աստուածն ու ձերը մէկ չէ. ասա՛, ո՞ւր է Գոհարը, շո՛ւտ, թէ չէ... եւ նա վրայ վազեց ծերունուն՝ բռունցքները սեղմած, ատամները կճրտացնելով: Այժմ նրանք շա՛տ մօտ էին իրար. նրանց շունչը հասնում էր միմեանց դէմքին. մի առժամանակ լուռ նայում էին իրար... Լռութիւնն ընդհատեց քահանան:

Բէ՛գ... բայց նա չկարողացաւ շարունակել, եւ ուժգին թափով թքեց բէգի երեսին: Սա անսպասելի եւ սարսափելի էր բէգի համար: Նա ակամայ յետ յետոյ քաշուեց, ինչ որ հրամաններ արձակեց, եւ իսկոյն մի քանի քրդեր շարուեցին քահանայի առաջ, փոքրիկ տարածութեան վրայ. Քահանան հասկացաւ, որ մահը մօտ էր: Նա մէկ էլ բարձրացրեց գլուխը, նայեց այն ճանապարհին... Միթէ. նա մեռնում էր առանց Թաթուլին տեսնելու, միթէ՞ նա գալու չէր: Ճանապարհի վրայ ոչինչ չկար, բացի մի թխպոտ ամպ, որ հանդարտ իջնում էր բլրի կատարից. ա՞մպ էր իրաւ թէ փոշի, եւ ինչո՞ւ չէր կարող հէնց այդ ամպը Թաթուլը լինել, մտածել քահանան: Մի հնար, մի հնար մի քանի ժամ էլ ապրելու համար, մտածում էր նաեւ, միայն մի քանի ժամ, գիտեմ Թաթուլն է, նա չէր կարող մոռանալ իր օջախն ու գիւղը: Ծանր էր նորից շնորհ խնդրել բէգից, բայց ճար չկար:

- Բէ՛գ, ասաց նա, մահից չեմ վախենում, դու էլ

ոչինչ չթողիր ինձ աշխարհում, որից բաժանուելը ծանր լինի: Թող ինձ միայն, որ աղօթեմ, վերջին անգամ աղօթեմ:

- Աղօթի՛ր:

Եւ նա սկսեց աղօթել: Նա աղօթում էր եւ նայում այն ճանապարհին, որտեղից արագութեամբ իջնում էր փոշու ամպը... Աղօթքի իւրաքանչիւր բառը նաեւ արտասանում էր առանձին հանդարտութեամբ, առանձին դանդաղութեամբ, աշխատելով որքան կարելի է շատ ժամանակ վաստակել, շատ ապրել: Իսկ փոշու ամպն իջնում էր հա՛ իջնում: Առաջին անգամն էր, որ տէր Սարգիսն աղօթում էր ո՛չ Աստծուն. առաջին անգամն էր, որ նա իր աղօթքը գործիք էր դարձրել եւ պատրաստում էր վրէժխնդրութեան մի արիւնոտ գործ: Իսկապէս այսօր նա աղօթք էլ չէր ասում, այլ բառե՛ր, բառե՛ր, անիմաստ բառե՛ր, որոնք միայն ժամանակ էին նշանակում, եւ ուրիշ խորհուրդ ուրիշ պարունակութիւն չունէին. հնչիւնները դարձել էին վայրկեաններ, բառերը դրպէներ, աղօթքը ժամ, ժամանակ եւ ուրիշ ոչինչ: Նա կ'ուզէր, որ իր աղօթքը այսօր վերջ չառնի: Քանի՛ անգամ վերջացաւ աղօթքը, քանի՛ անգամ նորից վերսկսուեց եւ շարունակուեց նոյն դանդաղութեամբ:

Արեւը մայր մտաւ. երեկոյեան մառախուղը իջաւ երկրի վրայ. արեւելքում փայլեց լուսնի եղջիւրը, նրա պաղ շիթերն ընկան երկրի վրայ ձեւացնելով մռայլ ստուերներ. ընկան նաեւ թշուառ

գիւղի եւ այն ժայռի վրայ, որի ստորոտում կատարւում էր ոճիրը: Դահիճների համբերութիւնը հատաւ:

- Բաւական է, գոչեց բէգը, այժմ վերջին անգամ ասա՛, ո՞ւր է Գոհարը:

Տէր Սարգիսը պատասխան չտուեց: Նա յուսահատ էր եւ սպասում էր մահուան. Թաթուլը չկար: Բէգը նշան արեց եւ քրդերն իրանց հրացաններն ուղղեցին նրա կրծքին. բայց յանկարծ ամէնքը կանգ առան վերեւից, ժայռի կատարից՝ լսուեց մի ձայն:

- Գոհարն այստեղ է բէգ, ե՛կ ու տար: Տե՛ս, ես այստեղ եմ. ի՞նչ ես ուզում այդ խեղճ ծերունուց, ա՛յ անամօթ շուն...

Ամէնքը նայեցին դէպի վեր: Այնտեղ, ժայռի ամենաբարձր կէտում, լուսնի շողի տակ, գծագրւում էր մի կանացի չքնաղ մարմին: Նրա միակ ծածկոյթը իր սպիտակ կտաւէ շապիկն էր, որ ծածկում էր նրա մերկութիւնը մինչեւ սրունքները: Սեւ, երկայն մազերը ցաք ու ցրիւ փռուած էին ուսերի եւ թիկունքի վրայ եւ երեկոյեան հովը խաղում էր նրանց հետ: Նա կանգնած էր այնտեղ, ինչպէս երկնքից իջած մի հրեշտակ, որ այդ բարձրութիւնց դիտում էր, թէ ի՞նչ անլուր ոճիրներ են կատարւում այնտեղ՝ ներքեւում աշխարհի վրայ: Մարդկային վայրագութեան այդ սեւ գործերից նա այնքան բարձր էր, որքան սրբութիւնն ու անմեղութիւնը բարձր է ապականութիւնից, որքան առաքինութիւնը բարձր է ախտերից:

Այդ բարձրութեան վրայ նրան չէին կարող հասնել ներքեւի ցեխն ու աղտեղութիւնը. նրա սուրբ պատիւը շատ վեր էր կանգած լկտի բէգերի բոլոր գարշութիւններից: Բէգը նայեց նրան եւ աչքերը վառուեցին բորբորիտ բոցով, այդ չքնաղ պատկերը ժամ առաջ տիրելու անյագ տենչով: Նա կ՚ուզէր այդ ժամին դաւնալ ծխի մի պտոյտ, վերեւ բարձրանալ եւ փարել աղջկան, կամ թեւեր ստանալ՝ թռչել վե՛ր, վե՛ր, ճախրել նրա գլխով, ապա խլել եւ փախցնել: Նա մոռացաւ ամէն բան- եւ քահանային, եւ գիւղի թալանը, եւ ժայռի բարձրութիւնից լսուած՝ ծանր անարգանքը, ու չքնաղ պատկերով դիւթուած՝ նայում էր դէպի վեր, անկարող լինելով հայեացքը հեռացնել:

Դեռ նախորդ գիշեր տանից խոյս տալով Գոհարը վազեց դէպի լեռները, եւ ամբողջ գիշերը չանկռելով ժայռերը՝ իր կուսութիւն ու պատիւը հասցրեց այս բարձրութեան վրայ, ժայռի կատարը, մօտիկ երկնքին: Ամբողջ ցերեկը նա ծածուկ դիտում էր այնտեղից, թէ ի՞նչ է կատարւում գիւղում: Երեկոյեան երբ տեսաւ, որ բէգը իր հօրը սպանելու է, սարսափելի որոշում տուեց - ձայն տալ, յայտնել իր թագստի տեղը, իսկ երբ բէգի մարդիկը գան բռնելու իրեն, ձգուել այս ժայռի կատարից դէպի վար եւ իր մահովը փրկել հօրը մահից: Եւ ահա նա այժմ կանչում էր բէգին, որ գայ տանի իրեն:

Չորս հինգ քրդեր, խմբից բաժանուելով դէպի բլուրները դիմեցին, բայց մի քանի րոպէ յետոյ հեւա-

լով յետ եկան, գոռալով բեգին, որ փախչեն, հեռանան, որովհետեւ գիւղը լեցուել է ջան ֆէդայիներով:

- Կրա՛կ, որոտաց բէգը,- կրա՛կ - եւ նոյն վայրկեանին հրացանները որոտացին ու մի քանի գնդակներ թռան դէպի ծերունի քահանան...

Լսուեց յետեւից մի այլ խմբի հրացանների որոտ, մի քանի քրդեր գետին ընկան եւ ժայռի ստորոտում կատաղի կռիւ սկսուեց... Թաթուլն էր իր խմբով: Նա կատաղի էր եւ անխնայ: Քրդերից ոմանք փախուստով ազատուեցին, ոմանք էլ ընկան վիրաւոր կամ մեռած: Բէգը նոյնպէս ընկաւ:

Թաթուլը մօտեցաւ ժայռին սիրտն արիւնով լի, տեսաւ ժայռից կախուած հօր դիակը եւ փարեց նրան դառն արտասուելով: Սակայն ծերունին շնչում էր դեռ եւս. նա բացեց աչքերը, ճանաչեց որդուն եւ մեղմիկ շշնջաց.

- Էլ... մի... աղօթի՛ր... Աստուած... կը ների...

Քիչ յետոյ Գոհարը սգում էր հօր դիակի վրայ:

1899 թ.

ՄԱՅՐԸ

Ուշ գիշեր էր. ամէնքը վաղուց քնած էին, բայց գիւղի եզրում մենաւոր խրճիթի մէջ տակաւին խղճուկ լոյս էր պլպլում: Մարթան նստած էր մենակ, խորին տխրութեամբ նայում էր ճրագի լոյսին եւ դանդաղութեամբ օրօրում էր իր ծեր, յոգնած գլուխը: Նա մտածում էր: Խե՜ղճ, նա աշխատում էր հասկանալ, բացատրել, թէ ի՞նչպէս պատահեց, որ իր շէն օջախը այս կարճ ժամանակում դարձաւ, աւերակ, թէ ինչո՞ւ ինքը՝ ընտանի մայր, սիրող ամուսին՝ յանկարծ, ասեմ մի չար, դիւական ձեռքով, դարձաւ այրի, մոռացուած ամէնից, զոհ խաւար գիշերուայ միայնութեան, անտէրութեան սարսափներին, դարձաւ մի սեւաւոր, անճար բու, որ խաւար լռութեան մէջ չարագուշակ վո՜ւյ, վո՜ւյ է կանչում: Ինչո՞ւ համար այս բոլորը... Մէկը միւսից ահաւո՜ր, սեւ մտքեր գալիս խռնւում էին նրա գլխում, լուծում պահանջում... Որքա՜ն բան կար մտածելու, Վատաբա՜խտ, կարճամիտ կնիկ, ո՞ր մէկը հասկանար, ո՞ր մէկը հարցը լուծէր...

Ձիթէ ճրագին ծխախառն բոցը մեղմիւ օրօր-

ւում էր, մերթ հանդարտ վերանում, մերթ ցածրանում, դողդողում էր, կարծես նա էլ էր անհանգիստ, նա էլ էր վախենում: Հեշտ է, մենա՛կ, գիւղից դո՛ւրս, մենաւոր, խղճուկ խրճիթում... Ճրագի լոյսից ձգուած ստուերները խրճթի այս ու այն կողմում նոյնպէս լաւ չէին, անդուր էին. Մարթան աշխատում էր նրանց էլ չնայել: Միայն լոյսն էր մխիթարական, միայն նա չէր վախենում, ի՞նչ փոյթ, որ խղճումը լոյս էր, որ հոգեվարք հիւանդի պէս մօտ էր հանգչելու, չէ՞ դարձեալ լոյս էր, օրօրուն, պլպլան լոյս. Մարթան նայում էր նրան եւ մտածո՛ւմ մտածո՛ւմ...

Հէնց այս առաւօտ թաղեց նա իր ամուսնուն, իր խեղճ, ջրատար Մկոյին: Ա՛խ, ինչ օրեր քաշեց թշուառը, որքան չարչարուեց...

- Ոտքդ կոտրուէր, տակդ մնար, որ դու իմ տունը ոտք չկոխէիր, Թորո՛ս, քեզ տեսնեմ գնացած ճանապարհդ մէկ տակ դառնայ: Թո՛ղ քո մօր տուն էլ իմի պէս սուգ մտնի:

Այս սարսափելի անէծքը նա արտասանեց բարձրաձայն, ձեռքն ուղղելով դէպի ճրագն ու ծխոտ, մրոտ ճրագակալը,- կարծէք նրանց հետ խօսելիս լինէր: Թորոսը հարեւան գիւղից հեռաւոր *ազգականի որդին էր, նրան էր անիծում* Մարթան, նրա վրայ է թափում սրտում կուտակուած թոյնը, նա էր գլխից հանել, տարել Մինասին, իր միանուագար որդուն: Այժմ Մարթան լաւ յիշում էր բոլորը: Նա էր: Անաստուած Թորոսն էր միշտ գալիս տանից դուրս կանչում, գնում էին,

առանձնանում, խօսում, խօսում, փսփսում: Ի՞նչ էի խօսում այնքան,- ինքը կարո՞ղ է՛ր իմանալ: Դէ՛, ընկերներ էին. ա՛խ, թէ իմանար... Գնացին, եկան, փսփսացին, գնացին, եկան, եւ մի գիշեր անյայտացան: Ա՛խ, սեւ դառնար էն գիշերը: Անխի՛ղճ, անխի՛ղճ մրմնջում էր պառաւն, այս անգամ խօսքն ուղղելով որդուն. Թորոսն օտարի որդի էր, չցաւեց, իսկ դո՞ւ... Թէ չմեղքացար քո ջրատար ծնողներին, խղճայիր գոնէ քո խեղճ ջահիլին, քո կնոջը, որին անտէր ձգեցիր: Օ՛, այնուհետեւ ինչե՛ր անցան իրենց սեւաւոր գլխով, ի՞նչ օրեր քաշեցին: Խեղճ հալւորին տաճիկները տարան, բերին, բանտ դրին, ծեծեցին, ծեծեցի՞ն, որ Մինասի տեղն ասի: Ա՛խ, ինչ անաստուած են այդ անօրէնները: Մեր ցաւը, մեր սեւ օրը մեզ բաւական չէր, սրանց գազանութիւնն էլ մի նոր պատիժ, նոր ցաւ դարձաւ: Կարծես թէ որ մենք իմանայինք մեր որդու տեղը, սար ու քար չէինք ընկընի, չէինք գտնի, չէինք բերի տուն: Տաճկի ինչ պէտք էր թէ մեր սրտից առանց այն էլ արիւն է գնում: Այնքան չարչարեցին խեղճ հալիւորին, մինչեւ անկողին ընկաւ եւ էլ չվերկացաւ: Հարսը՝ որ վաղուց էր հեռացել տնից, գնացել էր հէրանց, իր սեւ օրը ողբում. ի՞նչ անէր խեղճ ջահիլը, օրը մի անգամ անիրաւները դիտմամբ տուն էին թափւում, հարս պահել կը լինէ՞ր տանը: Եւ այժմ մենակ էր մնացել Մարթան:

Այս սեւ գիշերին, ամենցից մոռացուած, նա մտածում էր զարհուրելի անցեալի մասին. ներ-

սից սիրտը ճմլուում, քամուում էր: Նա արտասաւում էր դառն, յորդ արտասունքներով: Խաւարից ու միայնութիւնից դուրս մի ուրիշ բան կար, որի մասին մտածելիս, քիչ էր մնում սիրտը պատռւի կսկծից: Հարեւանները սարսափելի բաներ են ասում... Նրանք ի՞նչ թէ կռուի են բռնուել զափթիէների հետ, եւ բոլորն էլ... Բայց մայրը չէր կամենում հաւատալ, թէ իր Մինասն էլ նոյնպէս... Նա աշխատում էր չմտածել այդ մասին. թէ բարկացած էր Աստուած. մի՞թէ իրեն քաշածները բաւական չէին...

«Թրը՛խ, թրը՛խկ» դուռը թակեցին:

Պառաւը ցնցուեց. ո՞վ կարող էր լինել այդպէս ուշ պահուն: Նա մէկ կամեցաւ ճրագը փչել, կծկուել, լռել: Գուցէ հեռանան գնան, ով եւ լինեն: Իսկ եթէ յանկարծ դուռը կոտրե՞ն եւ ներս մտնեն խաւար խրճիթը... Օ՛, այդ զարհուրելի էր, գոնէ լոյս լինէր:

«Թրը՛խկ, թրը՛խկ» կրկին թակեցին դուռը, այս անգամ աւելի շտապ, աւելի բարձր: Անհնարին էր լռել: Մարթան վեր կեցաւ կամացուկ, թաթերի վրայ մօտեցաւ դրանը, շունչը պահելով ականջ դրեց, ո՛չ մի ձայն... Նրա կոկորդը սեղմուում էր, ատամներն իրար զարկուում երկիւղից:

- Ո՞վ ես, վերջապէս սիրտ արեց նա ձայն տալ կամացուկ:

- Ես եմ, բա՛ց դուռը:

- Ախր, ո՞վ ես դու:

- Ես եմ, մարէ՛. բա՛ց, շո՛ւտ բաց:

«Մա՛ռէ», էլ ո՞վ կարող էր լինել, «Մինասն է, Մինա՛սն է», մրմնջում էին պառաւի դողդոջուն շրթունքները: Նա շտապ շտապ սկսեց քաշքշել դուռը, որ բաց անի, մոռանալով, որ փականքը չի բացել դեռ: Սաստիկ տագնապով բռնուած, նա փոխանակ բանալու դուռը՝ փակում էր կամ քաշքշում անտեղի, մատները, տրորում, կոտրատում, արիւնոտում, եւ դուռը չէր բացւում:

- Բա՛ց, մա՛ռէ, շուտով բաց, լսւում էր դրսից:

- Բացեմ, քէ մեռնեմ, ձէնիդ մեռնեմ, բացեմ կուրանան աչքերս, ոնց որ կուրացան, լաւ չեմ տեսնում փակը:

Վերջապէս դուռը բացուեց. ներս մտաւ մի երիտասարդ, հրացանը ձեռքին, փամփուշտների երկու շարքը խաչկապ ձգած ուսերից: Մարթան առանց նայելու վրայ պրծաւ եւ նրան իր գիրկն առաւ. արցունքները հեղեղի պէս թափւում էին աչքերից. էլ չէր խօսում, այլ համբուրում էր ու հեծկլտում, երկա՛ր, երկա՛ր...

- Խօսի՛ր, լսեմ ձայնդ, արեւիդ մեռնեմ, ասաց նա վերջապէս, ասա՛, ո՞ւր էն թողել մեզ անտէրանտիրական, ո՞ւր թողիր սեւաւոր հօրդ, որ դարդամահ էլաւ քո ցաւից: Ապա նա նայեց վերջապէս երիտասարդի երեսին եւ մի որպէ սառած կանգ առաւ, յետոյ յանկարծ բոլոր թափով յետ մղեց նրան իր գրկից ու սարսափած ճչաց:

- Վա՛յ, սեւն իմ գլխին, Մինասը չի՛, Մինասը չի՛. հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից...

Թորո՛սն էր...

Շուարած, ապշած՝ երիտասարդը յանցաւորի պէս կանգնել էր գլխիկոր, չգիտէր ինչպէս մխիթարէր ծանր թիւրիմացութեան զոհ դարձած այս վշտահար մօրը: Հսկայ տղամարդը, որի գէնքերից *մահ էր կաթկաթում, երեխայի պէս շշկլել էր* այս թոյլ, խեղճ կնոջ առաջ. մայրական վշտի վեհութիւնը ընկճել էր նրան:

- Անխի՜ղճ, ո՞ւր է Մինասը, զոյգ գնացիք այն սեւ գիշերը, այս գիշեր մենակ ես յետ գալիս, ի՞նչ արիր նրան, Կայէն, գոչեց պառաւը կատաղած, բռնելով եւ ցնցելով Թորոսի ձեռքը:

- *Մարէ՛, չգիտեմ, կռուի բռնուեցինք զօրքերի* հետ, գիշեր էր, մութ. մենք ցրիւ եկանք, իրար կորցրինք, մարէ՛ հաւատա՛, չգիտեմ ի՞նչ եղաւ Մինասը. ամէնքը փախան զանազան կողմեր, ես էլ այս կողմը եկայ, ետեւիցս ընկան, գիւղը շրջապատել *են, փնտռում են, ծածկիր ինձ, մարէ,* ծածկիր Մինասի սիրո՛ւն:

Թորոսը ծածկում էր *Մինասի մահը, որ իր աչ*քով տեսել էր եւ նոյնիսկ սրբազան զայրոյթով իր ձեռքով գնդակահար արել նրան սպանողին: Մօր սիրտը շատ շուտ հասկացաւ իր ծանր կորուստը, իր մեծ թշուառութիւնը: Մայրերը չեն խաբւում, *երբ զաւակն է մեռել:*

- Սպանե՛լ են, ճչաց նա. ասում էին, ամէնքն էին ասում, մենակ ես *սեւաւորս չէի հաւատում.* սպանե՛լ են, զո՛ւր ես ծածկում ինձանից, սպանել են իմ ջահիլ-ջիւան կտրիճին: Դո՛ւ, դու տարար անաստուած, դու սպանել տուիր, անխիղճ. ին-

չո՞ւ տարար, ինչո՞ւ խելքից հանեցիր իմ զաւակին, տո՛ւր, իմ Մինասին, տո՛ւր: Նա կրկին բռնեց երիտասարդի ձեռքը. ցնցում էր, ճչում էր, գոռում խելագարի պէս:

- *Աստուա՜ծ է քեզ ուղարկել, որ ինձ հաշիւ տաս.* ասա՛, ո՞ւր սպանեցին իմ «ազիզին», ո՞վ սպանեց, ո՞ր անօրէնը, ասա էլ՛.... լռո՞ւմ ես... Սպանել են, խաբել չես կարողանում, սուտ ասա՛ էլի՛, խաբի՛ր ինձ, քարասիրտ մարդ, խաբի՛ր անխելք, ցնդուած պառաւին. ասա՛, որ դեռ իմ արեւը չի՛ խաւարել, ասա՛, որ իմ տունը դեռ չի՛ աւերուել, *իմ օջախը չի հանգել, իմ մուխը չի՛ մարել,* խաբի՛ր, խաբի՛ր... Չէ՞ Մինասին խաբեցիր տարար... ի՞նչ եղաւ էն «բլբիւլ լեզուդ», դէ՛ գոնէ ինձ էլ խաբի՛ր, թող սիրտս չճաքի, կամ խանջալդ սիրտս կոխի՛ր, որ մի անգամից հանգստանամ, *ճչում էր պառաւը գլխին տալով,* ձեռները կոտրատելով:

- Մարէ՛, վերեւում *Աստուած կայ, ես չեմ խաբել,* ես չեմ տարել, մենք երկուսս էլ կամաւ գնացինք, մենք կամաւ կռուեցինք թշնամիների դէմ: Շատերն ընկան նրանցից էլ, մեզանից էլ. թէ ես ընկնէի, միթէ՞ իմ մայրը Մինասին պիտի անիծէր:

Ակնարկը հասկանալի էր. երիտասարդն էլ չէր ուզում կեղծել, տեսնելով, որ այդ աւելի է զայրացնում *վշտահար մօրը. նա գիտէր, խաբել անկարելի էր:*

- Էլ չես ծածկում, սպանե՛լ են, ա՜խ անգութ. տղամարդ ես, ուժով ես, քաշի գոնէ այս աւերակի

սիւնը, թող կտուրը գլխիս ընկնի. ասաց պառաւը, յետ յետ քաշուեց, գնաց խրճթի հակառակ կողմը, կպաւ պատին, կծկուեց, մնաց մի քանի րոպէ: Ապա յանկարծ կանգնեց, ձգուեց բոլոր հասակով, դիմեց դէպի շուարած Թորոսը՝ գոչելով.

- Իսկ դո՞ւ, քեզ չսպանեցին. ինչո՞ւ ես եկել, եկար որ էլ ո՞ւմը խելքից հանես. այստեղ, իմ այս բնի մէջ ի՞նչ ես փնտռում, էլ ի՞նչ թողիր ինձ, մնաց չոր սեւաւոր գլուխս, ի՞նչ ես ուզում ինձանից, ինչո՞ւ չես հեռանում աչքիցս, որ գոնէ քեզ կենդանի չտեսնեմ: Թող մնամ մենա՛կ, մենա՛կ, թող չորանամ այս ծակի մէջ. ի՞նչ ես ուզում ինձանից:

- Մարէ, մի գիշերուայ ապաստան, Մինասի սիրո՛ւն:

- Ապաստա՞ն... ապաստա՞ն... կրկնեց պառաւը դժոխային հեգնութեամբ, խելագարի ժպտով. քե՛զ ապաստա՞ն, որ ապրես, կեանք ու արեւ տեսնես. չեմ կարող, իմ ուժից վեր է. գնա՛, գնա՛, անաստուած, թափառիր Կայէնի պէս, թո՛ղ քո մայրն էլ ինձ պէս արիւն-արցունք թափի. թող քո կինն էլ իմ հարսի պէս սեւ ձգի գլուխը, թո՛ղ ողջ աշխարհն արտասուի եւ սուգ անի, սեւ հագնի, երբ էլ չկայ Մինասը: Դէ՛, գնա՛. չե՞ս գնա, ես դուրս կ'երթամ, ես կը ճչամ գիւղով մէկ, թէ «Եկէ՛ք, այստեղ է իմ որդուն մահուան պատճառը, եկէ՛ք»:

Պառաւն անողոք էր. ժամանակը թանկ: Թորոսը տեսաւ, որ այդպէս երկար մնալ չի կարելի, որ

մի վճռական բան պիտի անել:

- Դու մի գնա, մարէ, ասաց նա դառնութեամբ. ես կ'երթամ, եւ թո՛ղ ինձ սպանեն քո որդու դահիճները. Թո՛ղ իմ մայրն էլ արտասուի, եթէ դա կարող է քեզ մխիթարել, թո՛ղ իմ կինն էլ սեւ ձգի, *եթէ քո հարսի սեւը կը վերանայ դրանով: Ես կարծում էի,* թէ իմ թշուառ ընկերոջ մայրը իր մեծ վշտի մէջ գոնէ մի փոքր կը մխիթարուի օգնելով նրան, որի ձեռքը իր որդու մահուան վրէժն առաւ եւ որ իր կեանքի մնացորդը պիտի գործ դնի անընդհատ թափելով նրա թշնամիների արիւնը, եւ այսպէս պիտի վառ պահի նրա յիշատակը, որովհետեւ այսպէս էր նրա կամքը: Բայց այժմ տեսնում եմ, որ սխալուած եմ եղել. դէ՞հ, որ այդպէս է, ես դուրս կ'երթամ, մարէ՛, դու հանգիստ մնայ, թո՛ղ սպանեն ինձ էլ, միայն թէ դու մխիթարուիր: Բայց գիտցիր, որ դրանով դու Մինասի ոսկորների յաւիտենական հանգիստն ես խռովում:

Ասաց Թորոսը, վերցրեց քիչ առաջ պատին յենած իր հրացանը, նայեց բլթակին, շօշափեց, նայեց իր փամփուշտների շարքերին, եւ իր բազկին ու զէնքին ապաւինած, նա համարձակ քայլերով շարժուեց դէպի դուռը, թափով քաշեց սողնակը եւ դուռը բացեց:

-Կա՛ց, ճչաց յանկարծ Մարթան սարսափած, զգալով որ ինքը մի սոսկալի ոճիր է կատարում, *երբ նա դուրս էր գալիս դռնից. կա՛ց անխիղճ, մի* գնա - պառաւը վազեց դէպի դուռը, յետ քաշեց Թորոսին, դուռը կրկին փակեց:

- Մի՛ գնա, սեւը թող միայն իմ գլխի՛ն գայ, թող միայն ե՛ս արտասուեմ: Թող իմ տո՛ւնը միայն աւերուի. կա՛ց, Մինասին մայրը չի կարող նրա ընկերոջը թշնամիների ձեռքը տալ, չի կարող այս չար ժամին տանից դուրս անել:

Մի քանի րոպէ պառաւը մնաց լուռ: Նա մտածում էր...

Ապա նա շտապ շտապ, խելագարի շարժումներով, քանդեց ծալքը, դուրս քաշեց նրա տակից իր հարսի մի ձեռք զգեստը, եւ փութով հագցրեց Թորոսին, փաթաթեց նրա գլուխը կանացի ձեւով, վերցրեց հրացանն ու փամփուշտները թագցրեց փռուած անկողնի մէջ, ծածկեց, իրան էլ հրամայեց մտնել այդ անկողինը, նստել, թէ մարդ գալու լինի գլուխը քաշ ձգել եւ ձեւացնել, թէ իբր արտասուում է, առանց վերեւ նայելու: Թորոսը լուռ հնազանդուեց:

Գիւղամիջից լսւում էր ոտնաձայն, աղմուկ, խօսակցութիւն: Ձայները մօտեցան կամաց կամաց: Դուռը թակեցին: Ձինուորականներն ու գիւղի ռէսը շրջում էին տանից տուն, փնտռում էին Թորոսին, ամէնքը գիտէին որ նա փախաւ, գիւղում ծածկուեց: Պառաւը ճրագը ձեռքին մօտեցաւ, դուռը բացեց, մի խումբ զինուած մարդիկ ներս թափուեցին, նայեցին ամէն կողմ, քանդեցին ծալքը, նայեցին թոնիրը. ի զո՛ւր, ոչ ոք չկար: Յիսնապետը երկար նայեց արտասուող հարստին, նա մտածում էր. միտքը չար եթէ Թորոսին շուտով գտնելու հաստատ յոյս չլինէր, մտածեց

նա, արժէր մարդկանց դուրս ուղարկել եւ մի փոքր մնալ այստեղ... բայց նա ձեռքով շարժում արեց, դուրս ելաւ, որսը թողնելով ուրիշ անգամի:

Միւս օրը երեկոյեան, երբ կրկին խաւարն իջաւ երկրի վրայ, երբ գիւղը լռեց ու քնեց, պառաւը կանչեց Թորոսին.

- Լսի՛ր որդի, երէկ ես քեզ անիծեցի, այրուած էր սիրտս. մա՛յր եմ, սեւ գայլ տանի ինձ պէս մօրը, ի՞նչ հողը տամ գլխիս... նա կրկին հեկեկաց. այժմ նրա փոխարէն օրհնում եմ քեզ՝ որ իմ Մինասի սրտովը լինի...

Արտասուքները այլեւս խեղդեցին դժբախտ մօր ձայնը...

Թորոսը կռացաւ, համբուրեց նրա ձեռքը, ինչպէս կը համբուրէր իր մօր ձեռքը, եւ յուզուած դուրս գնաց, տանելով ճակատի վրայ պառաւի լուռ, բայց ջերմ համբոյրի հետքը...

Դուրսը դեռ խաւար էր, բայց արշալոյսը հեռու չէր...

1899 թ.

ԱՐԻՒՆՈՏ ԹԹԽՄՈՐ

Առաւօտեան Դաւիթը ժամ գնաց, իսկ Նարգիզը վեր կացաւ, երեխաներին զարթեցրեց, ուղարկեց գոմ եւ պատրաստում էր թոնիրը վառել:

Տան դուռը ճռճռալով բացուեց եւ ներս մտաւ մի եօթ տարեկան աղջիկ՝ հարեւանենց Սօփին: Նա ձեռքին բռնած ունէր խմորի մը գունդ՝ մի թթխմոր: Նարգիզի թթխմորն էր այն, որ

նախորդ երեկոյ տարաւ Սօփին, որովհետեւ նրա մայրն այսօր հաց պիտի թխէր: Բայց ինչո՞ւ էր յետ բերում այժմ, զարմացած մտածեց Նարգիզը. այսպէս վաղ հացը թխած չէին կարող լինել, օրուայ այդ ժամին դեռ թոնիրն էլ չեն վառում:

Մինչեւ այդ Սօփին կամացուկ, ասես վախվխելով, մօտեցաւ թոնրան շուրջը պատող թմբին եւ անվճռական ձայնով ասաց.

- Ա՛ռ ձեր ձեր թթխմորը, Նարգիզ բաջի:

- Աղջի՛, ձեր հացը ե՞րբ թխեցիք վերջացրիք, լոյսը նոր է բացուում:

- Դեռ չենք թխել:

- Հապա ասաց՝ տար յետ տուր:

- Ինչո՞ւ:

- Չեմ իմանում... Ե՞ն ժամը չեմ իմանում, պատասխանեց Սօփին գլուխը քաշ ձգած, ոտքերնին նայելով. սակայն իր երդումը նա այնպիսի եղանակով ասաց, որից պարզ երեւում էր, թէ նա բան գիտէ, բայց հրամայուած է ոչինչ չասել: Նարգիզն այդ շատ լաւ զգաց. երեխան անյաջող էր կեղծում:

- Աղջի՛, ուրիշ տեղի՞ց թթխմոր բերիք:

- Ուրիշ տեղի՞ց... Հա՛, բերինք, Ալմօենց թթխմորը բերինք. մայրիկս բերեց... ես բերեցի. ասաց գնա՛ բեր, բերեցի... խմոր արինք. շատ ենք խմոր արել:

- Սօփի, ինչի՞ մեր թթխմորով չ'արիք խմորը:

- Չեմ իմանում... ես ի՞նչ գիտեմ. մայրիկս ասաց... մայրիկս ասում էր՝ Նարգիզ քաջիենց թթխմորը լաւը չի:

Նարգիզը մռայլուեց. այստեղ մի բան կար. այս երեխան դեռ էլի բան գիտէր, իսկ ինչ որ գիտէր լաւ բան չէր լինելու «Յիսո՛ւս Քրիստոս», մռմռաց Նարգիզը:

- «Թթխմորը լաւ չի», շարունակեց Նարգիզը՝ շրթունքները կծոտելով. մեղա՛յ քեզ, Աստուած, ո՞վ էր լսել՝ «Թթխմորը լաւ չի»... Աղջի՛, ի՞նչպէս թէ թթխմորը լաւ չի... Թթխմորն էլ լաւ չի լինի՞...

- Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թթխմորը հարամ է...

- Աղջի՛ գժուե՞լ ես, թէ՞ մէրդ է գժուել. քո ծամն էլ կտրեմ, քո մօրն էլ. մեր թթխմորն ինչո՞ւ էր հա-

ոամ լինում. արունք արել, ի՞նչ է, սեւա՛ւոր:

- Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թթխմորը արիւնոտ է, ուտել չի լինի... ասում էր... -եւ աղջիկը դարձեալ ինչ որ մռմռաց, շարունակ ոտքերի տակը նայելով եւ թթխմորը ձեռքին, բայց Նարգիզը լաւ չլսեց. սակայն նրան թուաց որ այդպէս միամտութեամբ ասուած բառերը պէտք է աւելի սարսափելի լինէին, քանի ինչ որ լսեց. ուստի ճչաց սաստիկ կատաղած.

- Աղջի՛, ինչ ասի՞ր...

Երեխան այդ ճչոցից վերեւ նայեց, տեսաւ Նարգիզի կատաղած դէմքը, սաստիկ վախեցաւ, շրթունքները դողացին եւ արցունքները կախուեցին աչքերից. նա հեկեկաց. Նարգիզը մեղմացաւ.

- Սօփի՛, մի՛ լաց. էն ի՞նչ ասացիր, չլսեցի. մայրիկդ ի՞նչ էր ասում:

- Չեմ իմանում, պատասխանեց աղջիկը լացի միջոց եւ կցկտուր. մայրիկս ասում էր.. էն մարդերին... էն օրը... ախպէր Դաւիթն է մատնել, սպանել տուել... ասում էր, ձեր թթխմորը արիւնոտ է... ասում էր, մեղք է նրանով խմոր անել... ես ի՞նչ անեմ, բա՛ջի, մայրիկս ասաց, խալխն են ասում, դուրսն են ասում, շտապեց աւելցնել Սօփին, նկատելով որ Նարգիզի դէմքը կրկին կապտեց եւ շրթունքները ծռմռուեցին. մայրիկս ասաց՝ տար տուր, ես էլ բերի, հը՛, դնեմ այստե՞ղ, բաջի՛, հաա՞...

Բայց Նարգիզն էլ չէր լսում: Աղջկայ ձայնը

հնչում էր նրա ականջին ինչպես մի անորոշ բզզոց. նա լուռ էր. աչքերը լայն չռած, նայում էր այդ աղջկան, որ թթխմորը ձեռքին կանգնել էր նրա առաջ՝ դողալով երկիւղից... Հարուածը սարսափելի էր. ի՞նչ անել, բռնել այդ աղջկան, թոնրի մէջը կոխել, վառե՞լ, թէ դուրս վազել նրանց տուն գնալ եւ մօր ծամերը փետել գլխին: Ահա թէ ի՞նչ էր մտածում Նարգիզը, երբ Սօփին արտասանում էր իր վերջին խօսքերը:

Մինչ այդ՝ աղջիկը դրեց թթխմորը թմբի վրայ եւ շտապով դուրս գնաց դռնից:

Նարգիզը մնաց մտքերի ծովի մէջ... Այն ի՞նչ ասաց Սօփին: Երկու շաբաթ առաջ էր. այդ լաւ էր յիշում Նարգիզը-եւ ո՞վ կը մոռնար այդ դժոխքի օրը,- տաճիկ զինուորները յանկարծ պաշարեցին ջրատար Նունոյի տունը, ուր մի քանի զարիբ մարդիկ կային: Սարսափելի կռիւ տեղի ունեցաւ, տանեցիք ջարդուեցին, Նունոն իր զաւակների հետ սպանուեց, կինը տարան, տունը կրակ տուին, եւ էլի ուրիշ քանի՛ մարդ սպանուեց: Ասում էին որ գիւղացիներից մատնող է եղել. Նարգիզն ի՞նչ այրուած սրտով անիծում էր մատնողին, բայց մի՞թէ այդ մատնիչը, այդ այդ արնապարտը, *այդ հոգին կորցնողը Դաւիթն էր, իր* ամուսինը, եւ այն ծով արիւնը իր զաւակների վզին է ընկնում, «Սօփին ասաց, մայրն է ասել, դրսում ասում են, ասում են, ասում են»... Թթխմորն իր տեղումն էր. Նարգիզը չէր կարողանում նայել խմորի այդ հասարակ գնդին: Սօփին

ասաց հարամ է, արիւնոտ է, մտածում էր նա. իսկ եթէ ճիշդ է, ինչո՞ւ էր բարկանում:- Նա նստած մնաց իր տեղում, թոնիրի վառելը մոռացաւ, ցանը մնաց թմբի վրայ: Բոլոր տներից ծուխը բարձրանում էր, Նարգիզի յերդիկից ոչինչ չէր դուրս գալիս: Նա սպասում էր, դրութիւնն անտանելի էր. գոնէ Դաւիթը շուտ տուն գար՝ կամ ցրէր այս սեւ կասկածը, կամ մի փոս փորէր, թաղէր իրան: «Ժամ գնա՛ց»…. մռմռաց Նարգիզը թունոտ հեգնութեամբ, «աղօթո՛ւմ է»…

Երկար ու ձիգ րոպէներ անցան… Վերջապէս բակում լսուեց Դաւթի ոտնաձայնը ու սովորական հազը: Նարգիզը ցնցուեց այդ հազից, ինչպէս օձի խայթոցից. նա ե՛ւ շտապում էր տեսնել ամուսնուն ե՛ւ դողում էր վճռական րոպէից՝ ինչպէս կախաղանի դատապարտուած մէկը:

Դաւիթը տէր-ողորմեան համրելով ներս մտաւ հանդարտութեամբ, առանց կնոջը նայելու, սուտ ճգնաւորի երկիւղած քայլուածքով մօտեցաւ հացի տաշտին, դուրս քաշեց այնտեղից մի կոլոր հաց, հանդարտութեամբ գրպանը դրեց եւ պատրաստւում էր գնալ Եղօենց սաքուն՝ ըստ իր սովորութեան նախաճաշ անելու, մինչեւ որ կինը թոնիրը կը վառէր, կը վերջացնէր: Նարգիզը լուռ հետեւում էր նրա շարժումներին, նայում էր դէմքին, որից ոչինչ հասկանալ կարելի չէր, նայում էր աչքերին, որոնց կոպերից կախուած էր դեռ եւս երկիւղածութեան նման մի բան: Երբ ամուսինը պատրաստւում էր դուռը բանալ, Նարգիզը ձայն

տուեց-

- Այն ի՞նչ դրիր ջէբդ:

- Հաց է, ի՞նչ է, զարմացած պատասխանեց Դաւիթը:

- Ո՞ւր ես տանում:

- Խենթ ես ի՞նչ է, ա՛յ կնիկ. տանում եմ ուտեմ, ո՞ւր եմ տանում:

- Արիւնոտ հացը կ՚ուտուի՞...

Դաւիթը գունատուեց. նրա դէմքը վայրկենապէս այլայլուեց, երկիւղածութիւնն ու խաղաղութիւը կորան... Թէեւ նա իսկոյն աշխատեց հանդարտուել, առհարկի սառնասրտութիւն եւ անտարբերութիւն ձեւացնել, սակայն արդէն ուշ էր: Նարգիզը յիմար չէր, նրա փորձող հայեացքը մինչեւ իր ամուսնու հոգու խորքն իջաւ ու այնտեղ սեւ դժոխք գտաւ - ի զուր էր խաբում Դաւիթը: Նարգիզը սոսկաց իր գիւտից. նա դժբախտ էր, նա դողում էր ոճրից, դողում էր թափուած արեան առաջ, դողում էր իր զաւակների, իր օջախի համար: Նա գլուխը քաշ ձգեց, երեսը ծածկեց ձեռներով, եւ զսպուած բարկութիւնն ու վիշտը դուրս թափուեցին յորդ արցունքներով... Կնոջ յուզմունքը եւս առաւել շփոթեց Դաւթին, եւ երբ կինը կրկին վերեւ նայեց, Դաւիթը գունատուած էր ինչպէս թուղթ ու ձեռքով գրպանում՝ ջղոտ անհանգստութեամբ, շարժում էր հացը: Բայց եւ այնպէս նա փորձեց պաշտպանուել. վերջին ճիգն էր գործ դնում:

- Կնի՛կ, երա՞զ ես տեսել, ի՞նչ ես դուրս տալիս.

արիւնս ո՞րն է, ես ի՞նչ արունք եմ արել...

- Ո՞ւր էր թէ երազ լինէր, սեւաւոր մարդ. երազի արիւնը՝ բախտ է ցերեկին, իսկ այդ բախտը կտրուեց մեր տնից. տե՛ ս... նա ցոյց տուեց թմբի վրայի թթխմորը: Դաւիթն ապշած նայում էր խմորին առանց բան հասկանալու, իսկ կինը շարունակեց այս անգամ աւելի ցաւով՝ քան զայրացած.

- Մեր տունը արիւնով լցուած է, սեւաւո՛ր մարդ, մեր թթխմորը հարամ է, չեն ուզում հաց թխել, բերին յետ տուին: Դէ թո՛ղ սեւը վայ մեզ տանի, էլ ինչի՞ ենք ապրում, Յուդայի եւ Կայէնի տուն շինեցիր մեր տունը, մա՛րդ. թո՛ղ Կայէնի կոտոշ բուսնի գլխիդ...

Դաւիթն այժմ հասկացաւ... Խօսք չունէր, բերանը փակուեց. կինը կրկին արտասուեց, ուստի նա բարւոք համարեց շուտով դուրս գնալ տնից դէպի սաքուն:

Գիւղամիջից անցնելիս՝ նա աշխատեց իր սովորական իշխանական եղանակով քայլել, խրոխտ, հանդարտ, բարեպաշտ դէմքով եւ երբեմն երբեմն հազալով: Եղօնց գոմին հասաւ: Դրսից լսւում էին խօսակցութեան ձայներ. երեւում էր որ սաքուն լիքն է գիւղացիներով: Դաւիթը դուռը բացեց եւ ներս մտաւ, աշխատելով չկորցնել իր ձեւերն ու սառնարիւնութիւնը: Նրա ներս մտնելու հետ ձայները մէկէն դադրեցին եւ նա շփոթուեց. նոյնիսկ նրան թուաց, թէ իր լսած վերջին բառերը նոյնն էին, ինչ որ կինն ասաց,-

«Թթխմորը հարամ է, արիւնոտ է»: Դաւիթն իրեն չլսելու դրեց եւ առհարկի վստահութեամբ ասաց՝ «Ողորմի՛ Աստուած: Զայնն աւելի բարձր դուրս եկաւ քան հարկաւոր էր. գոնէ Դաւթին այդպէս թուաց, *այս անգամ եւ նա այնպէս փակեց բերանը*, կարծես մէկը ապտակով խփեց շրթունքներին: Այդ էլ վնաս չունէր, սարսափելին այն էր, որ իր «Ողորմի Աստուած»-ին ոչ ոք չպատասխանեց: Այդ էլ չնկատելու տուեց Դաւիթը եւ առաջ գնաց *իր սովորական տեղը* գրաւելու բուխարիկից դէպի ձախ, երկրորդ տեղը՝ հաստաբեխ Մանոյի եւ Խուս-Հովէյի մէջ:

Դիտմա՞մբ արդեօք՝ թէ՞ անուշադրութիւնից այսօր այդ երկու մարդի մէջ շատ քիչ տեղ էր մնացել նրա համար, եւ երբ Դաւիթը մօտեցաւ, ոչ մէկը չշարժուեց, Դաւիթը մի կերպ ներս սողոսկաց, *նստեց: Լռութիւնը շարունակւում էր. դիտմամբ չէին* խօսում, թէ՞ խօսել չէր լինում: Մօտիկ հարեւաններն էլ երեսները դարձրել էին Դաւթից...

- Ժամում շատ ցուրտ էր. տէրտէրը աղօթքները բօլ կուլ տուեց,- ասաց Դաւիթը: Ոչ ոք ձայն չհանեց. լռութիւնը շարունակուեց. խօսակցութիւն սկսելու նրա ջանքերն ապարդիւն անցան:

Դաւիթը հանեց չիբուխը, պատրաստեց, ոչ ոք կրակ չ'առաջարկեց նրան. ինքը կրակը վերցրեց. վրան դրեց եւ սկսեց *արագ արագ ծխել: Ցան*կարծ Մանոն նրա կողքից վեր կացաւ եւ դուրս գնաց: «Ինչո՞ւ, մտածեց Դաւիթը. նա այսպէս շուտ չէր գնա»: Քիչ յետոյ նրան հետեւեց Խուս-

Հովէն: Այդ արդէն աւելի տարօրինակ էր: Դաւիթը կծկուեց եւ ողնաշարի երկարութեամբ մի պաղ բան սողաց դէպի վար: Այժմ նա աւելի արագ արագ ծխել սկսեց, եւ ծուխը քուլայ-քուլայ բարձրանում էր, Նա գլուխը քարշ էր ձգել եւ նայում չէր չիբուխին. մէկ էլ վերեւ նայեց, եւ նրա աչքին մի սարսափելի տեսարան ներկայացաւ,- Գիւղացիք իրար յետեւից դուրս էին փախչում սաքուից, ուր կարծես վարակիչ ախտ էր բուն դրել: Դաւիթը ծխելը մոռացած՝ աչքերը չռած, նայում էր նրանց, եւ մէջքի պաղ գիծը լայնանում էր, հա՛ լայնանում. նա մօտ էր մրսելու: Աւելի սարսափելին այն էր, որ իւրաքանչիւր գիւղացի դուրս գալուս առաջ մի թունոտ, արհամարհական հայեացք էր ձգում նրա վրայ, որից նրա արիւնը սառում էր երակների մէջ, եւ Դաւթին թւում էր, թէ ինքը նրանց չի ճանաչում, օտար է, այն աստիճան դէմքերը փոխուած էին, խորթ էին:

Սաքուն դատարկուեց ի սպառ: Դաւիթն այժմ է՛լ կասկած չունէր. իր մատնութեան մասին գիտէին ամէնքը: Սաքուն այժմ իր լռութեամբ սարսափելի էր, ահաւոր: Բայց ո՞ւր գնալ: Տո՞ւն... Նարգիզն այնտեղ արտասւում է արիւնոտ թթխմորի առաջ: Եւ նա մնաց անշարժ նստած, աչքերը յառած այն պատի ճեղքին, որտեղից մի ճպուռի ողբաձայն, միակերպ ճռճռոցն էր լսւում. նայում էր եւ չէր մտածում... Երկար ժամեր անցան: Յետոյ Դաւթին թուաց, թէ ինքը՝ ինքը չէ, թէ գիւղացիների հետ ինքն էլ դուրս է գնացել. խօմ

այստեղ մենակ չէ՞ր նստի ծպուռին ականջ դնելու: Իր ապշութեան մէջ այս միտքը նրան դուր եկաւ, *մխիթարեց*, բայց ո՞վ էր ինքը.- այդ հասկանալ չէր կարողանում. մտածում իր ընդարմած ուղեղով: *Այդ դրութեան մէջ նա ձեռքը մեքենայաբար* գրպանը տարաւ, հացը դուրս քաշեց, նայեց. սոված չէր. մի բան անելու համար հացը դէպի բերանը տարաւ կրծեց ու կրկին յիշեց թթխմորը, արիւնոտ թթխմորը. չէ՞ այս հացը նոյն թթխմորից էր... *համն էլ տարօրինակ էր... Նա ծամել չկարողացաւ* եւ սարսափով զգաց, որ պատառն իր բերանում ասես աճում, *մեծանում* է, սղմում է կոկորդը, խեղդում է նրան: Դաւիթը շտապով հանեց բերանից պատառը եւ ձգեց հեռու...

Գոմի լռութիւնն աւելի եւ աւելի ճնշող էր դառնում: Դուրս փախչել էր հարկաւոր, բայց ո՞ւր. *այդ նա չգիտէր. միայն թէ դուրս, լայն տեղ*, բաց երկնքի տակ: Եւ նա ոտքի կանգնեց, թողեց հացը եւ սրտապատառ դուրս փախաւ գոմից առանց յետ նայելու...

Մինչեւ երեկոյ խելացնորի նման դաշտում թափառելուց յետոյ, նա քայլերն ուղղեց դէպի գիւղը: Բայց խաւար փողոցի մէջ հազիւ մի քանի քայլ *առած, նրա առաջ ցցուեցին երկու խորհրդաւոր* մարդիկ: Դաւիթը ճիչ անգամ չարձակեց, երբ մահացու զէնքի փայլը տեսաւ *մթութեան մէջ* եւ զգաց երկաթի պաղ ծայրն իր կրծքին: Արդարութիւնն իր իրաւունքն էր պահանջում...

Միւս առաւօտ գիւղացիք գտան նրան փողո-

ցում դաշոյններով խողխողուած:

Մի դիակ փողոցում եւ մի հաց սաքւում, երկուսն էլ անախորժ գիւտեր էին գիւղացոց համար. դիակը՝ դաւաճանի էր, հացը՝ հարամ: Մի խոր փոս փորեցին, արիւնոտ դիակը դրին փոսի մէջ, հարամ հացն էլ թաղեցին հետը,- արիւնոտ էր, ուտել չէր լինի:

***

Ամէն առաւօտ գիւղի յերդիկներից ծխի պտոյտները, որպէս թանձրացած սեւ հոգսեր ու ցաւեր, ձգւում են դէպի վեր, դէպի երկինքը եւ բոթերով բեռնաւորուած բանբերների պէս՝ վազում են կապուտակ անսահմանութեան մէջ, զարհուրելի բաներ են պատմում եւ կարծես հաշիւ ու համար պահանջում անարդար երկնքից: Միայն Դաւթի խրճիթից ծուխ չի բարձրանում: Այդ խրճիթը երկնքից պահանջ չունի. նա կարծես կամենում է լռել եւ ծածկել երկնքից այն մեծ ոճիրը, որ իր յարկի տակ է մտածուած: Այն սեւ օրից սկսած՝ Նարգիզն ուխտ է արել մի ամբողջ տարի է՛լ թոնիր չվառել. է՛լ հաց չթխել իր արիւնոտ թթխմորով, իր արնպարտ օջախում: Առաւօտեան այն ժամին, երբ հարեւանները կրակ են ձգում թոնիրները, Նարգիզը վերցնում է իր երկու որբերը, գնում է եկեղեցի, չոքում է խոնաւ գետնին երեխաների հետ, սառն արցունքներով թրջում է եկեղեցու յատակը եւ աղօթո՛ւմ է, աղօ-

թո՛ւմ... Ո՞ւմ համար է աղօթում նա՛ իր ոճրագործ ամուսնու հոգու փրկութեա՞ն, թէ՞ իր զաւակների եւ իր օջախի վրայից արիւնը վերցնելու համար,- այդ միայն ինքը գիտէ: Երբ նա եկեղեցուց տուն է վերադառնում, բարի հարեւանները նրա օրուայ պաշարը բերած են լինում իրանց արդար հացից...

Երբեմն երբեմն երեխաները զարմացած հարցնում են մօրը.

- *Մայրի՛կ, ինչո՞ւ հաց չես թխում:*

- Թթխմորը չկայ, ձեզ *մեռնեմ, մեր թթխմորը արիւնոտ* է, պատասխանում է մայրը, եւ զսպուած արցունքները թափւում են աչքերից կաթիլ-կաթիլ:

Եւ նայում են մանուկները խորը վշտով, երկա՛ր, երկա՛ր եւ մտածում են, մտածում, բայց նրանց փոքրիկ գլուխները չեն կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ է արտասւում մայրը եւ ինչո՞ւ է թթխմորն արիւնոտ...

1890 թ.

ԲԱՆՏՈՒՄ

Արամ Արամեանցի յիշատակին

Ա.
ԲԱՆՏԱՊԵՏԸ

Կէս-գիշեր էր: Բանտում ճնշող լռութիւն էր տիրում. միայն պահապանի համաչափ քայլերի ձայնն էր լսւում միակերպ, անընդհատ: Ձնդանների դռների վրայ բացուած փոքրիկ, կոլոր ծակերը սեւին էին տալիս նախասենեակի կիսախաւարի մէջ. պահապանը դաւադիրի հայեացքով մերթ ընդ մերթ աչք էր ձգում նրանց վրայ, որոնք, կարծես, մահու աչքեր լինէին՝ իր վրայ ուղղուած:

Լոյս կար միայն բանտապետի սենեակում: Այնտեղ երկու մարդ նստած էին սեղանի հանդէպ եւ նայում էին թղթի վրայ այն բանտարկեալների անունները, որոնք վաղը դատարանին պիտի ներկայանային:

Զըրընգ, զըրընգ, զըրընգ...

Օ՜հ, դարձեա՜լ, բացագանչեց բանտապետը, մատիտը ձեռքից վար ձգելով:

- Ի՞նչ է այդ, հարցրեց ընկերը:

- Մի նոր բանտարկեալ, որ իր շղթաների ձանձրալի զրրընդոցով ահա մի քանի օր է, որ իմ հոգին հանում է:

- Ինչո՞ւ է այսպէս աղմուկ անում:

- Ես գիտե՞մ ինչու, անդադար շարժւում է իր շան բնում, աշխատում է շրջել «մուռտառ ղեավուրը» եւ ինձ հանգիստ չի տալիս: Սատանան տանի այս պաշտօնը,- եւ նա բռունցքով պինդ խփեց սեղանին,- այսքան տարի այստեղ եմ եւ այդ դժոխային ձայնին չսովորեցի:

Զրրը՛ընգ, զրրը՛ընգ, զրրը՛ընգ...

Կրկին լսուեց նողկալի շռինդը, այս անգամ աւելի բարձր, աւելի որոշ:

- Չե՛մ կարող, որոտաց բանտապետը. չեմ կարող ոչինչ անել, երբ լսւում է այդ ձայնը: Երէկ գիշեր աչք չեմ խփել այդ անիծած զրրընգոցից:

Օգնականը սկսեց ծիծաղել:

- Ինչո՞ւ ես ծիծաղում:

- Ինչո՛ւ եմ ծիծաղում, եփած հաւն էլ կը ծիծաղի, եթէ նրան ասեն, որ գայլը դողում է ոչխարի բառաչից: Տո՛, բարկանալ ու անհանգիստ լինելս ո՞րն է, լռեցրու էլի՛:

- Լռեցնե՛մ, հեշտ է ասել, բայց ի՞նչպէս լռեցնեմ:

- Հրամայի՛, որ քնի:

- Բայց եթէ չի՞ քնում:

- Քնացրո՛ւ. միջոց չկա՞ յ, ապա սրանք ինչո՞ւ համար են.- օգնականը ձեռքը մեկնեց դէպի պա-

տից կախած հաստ չուանները՝ երկաթեայ գունդը ծայրերին:

Օգնականը նոր էր ստացել իր պաշտօնը. ոճիր գործելու յանցաւոր եռանդը փայլուն էր նրա վագրային աչքերում: Երեւի՛ ոճիրի թարմութիւնն էլ գրաւիչ է:

Զըրը՞նգ, զըրը՞նգ, զըրը՞նգ... կրկին լսուեց ժանգոտ երկաթի սարսեցուցիչ շռինդը:

Բանդապետն այս անգամ մի փոքր մտածեց, շրթունքները կծոտեց եւ զայրոյթով դուրս գնաց: Նա դիմեց դէպի այն զնդանի դուռը, որտեղից լսւում էր ձայնը: Բաց արեց դռան վրայի փոքրիկ անցքը եւ կանչեց որոտագին:

- Է՛յ, շո՛ւն գեավուր, ինչո՞ւ հանգիստ չես մնում:

- Բայց ես ոչինչ չեմ անում, լսուեց ներսից:

- Ինչո՞ւ ես զըրընգոց հանում անդադար:

- Այդ ձեր տուած շղթաներն են շառաչում:

- Ինչո՞ւ ես շարժւում, որ ձայն հանեն:

- Ապա ի՞նչ անեմ::

- Քնի՛ր, քնի՛ր ասում եմ, թէ չէ...

Բանտարկեալը լուռ էր:

«Քնի՛ր», հեշտ է ասել,- մտածում է բանտարկեալը. բայց կարո՞ղ է քնել ազատութեան վատաբախտ զինուորը, որ կենդանի թաղուած է մռայլ գերեզմանի մէջ եւ համոզուած չէ, թէ իր ստրուկ հայրենիքի բոլոր ցաւերը, դարաւոր վէրքերը, արցունքն ու հեծեծանքները իր հետ միասին յաւիտեան թաղում է նոյն գերեզմանի մէջ:

Հայդուկի կուրծքը հրաբուխ էր, գլուխը՝ մտքերի ծով, բանտը՝ նեղ, շղթաները՝ ծանր, միայն նրանց շռինդը՝ բռնութեան յաղթանակի զարհուրելի երգն էր ահաւոր, որ աշխարհի սկզբից հնչւում է քարաշէն մութ կամարների տակ, ուր ազատութիւնը գալարտւում է ու մռնչում՝ տիեզերական անմահ ոգուն յանձնելով պատմել իր փրկարար խոհերն աշխարհին:

Ա՛յսպէս էր բանտարկեալը եւ նա չէր քնում:

Բանտապետը հեռացաւ, իսկ բանտարկեալը մի փոքր կանգ առաւ, մտածեց եւ ապա կրկին շարժուեց: Բանտը նեղ էր. շրջել չէր լինում: Նա աշխատում էր պատերի տակից փոքրիկ, շա՛տ փոքրիկ պտոյտներ կազմել... Եւ շղթաները շառաչում էին, եւ խաւարն աղմկւում էր - զըրընգ, զըրընգ, զըրընգ...

- Վաղո՞ւց է բերուած այդ անպիտանը, հացրեց օգնականը, երբ բանտապետը կրկին ներս մտաւ:

- Երեք օր առաջ որսացին Թօփրագգալէից: Չարերիցն է, քնել չի կարողանում. կարծեմ տակը շատ բան կայ, միայն ոչ ոք չի կարողանում կարծեմ տակը շատ բան կայ, միայն ոչ ոքի չի ճանաչում, ո՞վ է, ո՞րտեղից է:

- Ուրեմն կը բարձրանայ:

- Կախաղա՞ն. ի հարկէ, եթէ հաստատուի: Բայց ի՞նչ տղամարդ է...

Նրանք լռեցին. խօսել չէր լինում. նիւթը յարմար չէր: Ոճիրների մասին շատ չի խօսում, երեւի սեփական ձայնը զզուելի է այդ ժամին:

Այդ լռութիւնը կրկին ընդհատուեց շղթայի նոր շառաչիւնով:

- Սպասի՛ր մինչեւ լոյս, գեավո՛ւր, մռմռաց բանտապետը, սպասի՛ր...

Օգնականը վեր կացաւ, բարի գիշեր ասաց եւ դուրս գնաց:

Բանտում կրկին լռութիւն տիրեց, որ սակայն դեռ երկար ժամանակ մերթ ընդ մերթ ընդհատուում էր շղթաների զարհուրելի շռինդով, զըրը՞նգ, զըրը՞նգ, զըրը՞նգ...

Լուսացաւ: Բանտարկեալներին նախաճաշ տալու ժամն էր:

- Հիմա դու յաւիտեան կը քնես, գեավո՛ւր, մռմռում էր բանտապետը, մի ամսան կերակուր ձեռքին ուղղուելով դէպի անհանգիստ բանտարկեալին խուցը:

Դուռը բացեց, ներս մտաւ, կեղտոտ հեղուկը դրեց գետին:

Բանտարկեալը քնած էր տակաւին, ուստի նա զգուշութեամբ դուրս եկաւ, կրկին դուռը փակեց, բայց չհեռացաւ կամ աւելի ճիշդ՝ չկարողացաւ հեռանալ: Մի անորոշ, բայց հզօր զգացմունք նրան մխեց իր տեղում. նա աչքը դրեց դրան փոքրիկ ծակին եւ անթարթ նայում էր ներսը առանց կարողանալու յետ քաշուել: Բանտարկեալի կերպարանքը սքանչելի էր ու վեհ: Բաց, լայն ճակատ, պայծառ ու շքեղ ինչպէս իր ծածկած մտքերը, ջլուտ դէմք՝ եզերուած թաւ, լայն միրուքով, փռուած առնական կրծքին, որ վեհութեամբ

բարձր ու ցածր էր լինում: Ամբողջ պատկերն իր մէջ մի բան ունէր, որի առաջ բանտապետն իրան ընկճուած էր զգում: Կրօնական երկիւղի պէս մի բան էր զարթնում նրա սրտում: Նա աշխատում էր յետ մղել իրենից նոր զգացմունքը, որ դեռ երբեք նրա մէջ չէր ծագել տրանից առաջ: Ո՛չ, ո՛չ, նա նրան չի խղճում... Ահա նա կամացուկ կը վերկենայ, կը մօտենայ կերակրին, մէկ, երկու դգալ... եւ թոյնն իր գործը կը տեսնի: Թո՛ղ այնուհետեւ չքնի, թո՛ղ չքնի, եթէ կարող է: Այսպէս էր մտածում բանտապետը, նայելով քնած երիտասարդին: Բայց ինչո՞ւ էր նա մնացեալ կանգնած, ինչո՞ւ չէր հեռանում, գնում-այդ ինքն էլ չգիտէր եւ աշխատում էր դրա մասին չմտածել, նոյնիսկ աշխատում էր ինքն իրենց հաւատացնել, թէ մնացել է հրճուելու զոհի մահուան տեսարանով, նրա գալարումներով, նրա հառաչանքներով...

Նա խաբում էր իրեն:

Ահա բանտարկեալը շարժուեց, աչքերը տրորոց, նստեց, շուրջը նայեց: Զարմանալի բան. բանտապետը սկսեց դողալ. նրա ծնկները ծալւում էին... Ուրեմն ոճիրի առաջ հրճուելու քաջութիւնը սո՞ւտ էր: Բայց չէ՞ որ նա շատերին է թունաւորել: Բանտարկեալը վերկացաւ, շղթաները հանեցին իրենց վաղեմի շռինդը, բայց բանտապետն էլ չզայրացաւ: Նա սոսկում էր: Ինչո՞ւ.- այսօր առաջին անգամն էր նա իր ձեռքով թունաւորում մէկին. նախորդներն միայն իր հրամանով էին կատարուել:

Ահա բանտարկեալը մօտեցաւ կերակրի ամանին: Բանտապետը տեսաւ այդ էլ. ոտներն երեքացին, նա յենուեց դրանը՝ չընկնելու համար: Ահա զոհը ձեռք առաւ դգալը ամենայն խաղաղութեամբ, *կարծես, մի շատ սովորական գործ էր* կատարում: Բանտապետն այժմ արդէն դժուարանում էր նայել: Նա ուզեց յետ քաշուել, չկարողացաւ: Նրա կոկորդը սկսեց չորանալ... Ի՞նչ էր արել նրան, բանտապետին, ա՛յդ հոյակապ տղա*մարդը: Այդ չքնաղ պատկերը, այդ հրաշալի,* բոցոտ աչքերը, այդ ամբողջ երիտասարդ կեանքը՝ ինչո՞վ էր արժանի այդ մեծ ոճրին եւ այն՝ ամենազգուելի եղանակով, թոյնով...

Բանտարկեալը չէր կարող գուշակել բանտապետի մէջ կատարուող այդ ներքին կռիւը եւ նրա պատճառը. նա դգալը կերակրի մէջ կոխեց եւ *պատրաստւում էր բերանը տանել, երբ երկաթէ* դուռը դղրդոցով բացուեց եւ բանտապետը, ներս վազելով, բռնեց նրա ձեռքը՝ գոչելով.

- Կա՛ց... կա՛ց...

Նրա դէմքը սարսափելի էր: Բանտարկեալը *զարմացած նայում էր այդ մարդուն:*

- Կա՛ց, ճչաց կրկին բանտապետը.- նա հեւում էր, նա *խեղդւում էր շնչակտուր.- չեմ կարող,* կա՛ց, շարժիր այդ շղթաներդ որքան կ'ուզես. թո՛ղ նրանք շառաչեն յաւիտեան, բայց այդ մի՛ կեր... ես էլ չեմ կարող...- Եւ նա խլեց ամանն ու դգալը- շտապով դուրս փախաւ եւ դուռը փակեց:

Բանտարկեալը հասկացաւ: Նրա դէմքին մեղմ

ժպիտ փայլեց՝ որպէս վերջալոյսի տխուր շողք: Նա հրճւում էր,- քարէ կամարի տակ, երկաթէ դրան յետեւում, ժանգոտ շղթաների մէջ՝ նա յաղթանակում էր...

Բ

«ԸՆԿԵՐԸ»

Անցան օրեր եւ շաբաթներ: Ցերեկ էր: Զը-րը՞նգ, զը՞ր-ը՞նգ, զը՞ր-ը՞նգ - նոյն շղթաների շռինդն էր, որ այս անգամ հնչւում էր Ա. քաղաքի փողոցներում: Փայլփլուն սուինների արանքից մերթ ընդ մերթ երեւում էր մի գունատ դէմք. նոյն բանտարկեալն էր, տարւում էր դատարան:

Զը՞ր-ը՞նգ, զը՞ր-ը՞նգ... Օրը ցերեկով էր այս շռինդը սոսկալի էր. դռներ կային, որոնք զգուշութեամբ փակւում էին. լուսամուտներ՝ որոնք շտապով ծածկում էին: Մի ամբողջ երկրի բողոքն էր այն, որ հառաչելով անցնում է փողոցներով, եւ մարդիկ, ծածկւում էին սարսափով...

Ահա դատարանը: Շա՜տ են... դատաւոր, քննիչ, գրագիր եւ ուրիշներ: Այստեղ են նաեւ բանտապետը ու իր օգնականը: «Ես չարի, ես անպարտ եմ, դուք դիտէք», մռմռում էր բանտապետն ինքն իրեն...

Դատաւորը դիմում է մեղադրեալին.

- Դո՞ւ ես Ա... եցի Ա...

- Ո՛չ, ես Ա... եցի չեմ:
- Ք... ը քո ընկե՞րն է:
- Ես նրան չեմ ճանաչում:
- Գ... ին դո՞ւ ես ապանել:
- Այո՛, նա իմ թշնամին էր:
- Ձենքերը դո՞ւ փոխադրեցիր Ծ...
- Ո՛չ, ես չեմ փոխադրել:

Բանտապետի օգնականը, որ մինչեւ այդ շեշտակի նայում էր մեղադրեալին, այժմ մօտեցաւ դատաւորին, մի բան փսփսաց նրա ականջին, ապա նրա գլխի նշանի վրայ՝ մօտեցաւ, կանգնեց մեղադրեալին առաջ, մօ՛տ, բոլորովին մօտ:

Դատարանում լռութիւն տիրեց: Ամէնքը սպասում էին ինչ որ անսովոր եւ նոյնիսկ զարհուրելի բանի եւ հայեացքներն ուղղել էին այդ երկու մարդոց, որոնք դէմ առ դէմ կանգնած՝ նայում էին իրար, ինչպէս շատ տարիների քէնով լցուած թշնամիներ: Երկու դէմքեր չէին նրանք, այլ չորս աչքեր միայն, կամ՝ աւելի ճիշդ չորս բոցեր, որոնք աշխատում էին դուրս ցայտել խոռոչներից եւ այրել հակառակորդներին:

Հանդիսատեսները սկսեցին սարսուռի պէս մի բան զգալ, ինչ որ պիտի կատարուէր, շատ էր անսովոր, շատ էր ահաւոր:

Հակառակորդները շարունակում էին նայել իրար... Նրանց չռած աչքերը չէին թարթում, իրար վրայ սղմուած շրթունքները չէին շարժւում, յօնքերը չէին խաղում, ձայն չէր լսւում, խօսք չէր

արտասանում: Նրանք միայն հեւում էին եւ նայում, նայում էին եւ հեւում, մէկը շղթաների մէջ, բայց հպարտ ու սրբազան զայրոյթով բռնուած, միւսը տաճիկ պաշտօնեայի համազգեստով եւ գործելիք ոճիրի հանդէպ շփոթուած, դողդոջուն... Այստեղ էր կատարւում իսկական Դատաստանը, նա՝ որ շիկացած երկաթով խարան է դնում խիղճերի վրայ:

Յանկարծ բանտարկեալը յետ քաշուեց, շղթաները հնչեցնելով, եւ այնպէս զզուանքով դարձրեց երեսը իր հակառակորդից, որ վերջինը ցուրտ զգաց թիկունքում, երերաց եւ հազիւ կարողացաւ թոթովել.

- Ես... ես... քեզ ճանաչում եմ, դու Ա... ն ես:

- Այո՛... մռնչած մեղադրեալը... դու իմ «ընկերն» ես եղել...

«Ընկե՞ր»... սարսափելի էր: Այդ բառը մարմին առաւ եւ հրէշաւոր այլանդակութեամբ ցցուեց օգնականի առաջ: Նա այժմ տեսնում էր իրեն զզուելի մանրամասնութեամբ, տեսնում էր եւ վախենում իր պատկերից: Ո՞րքան արիւն ծախեց իր փայլուն կոճակների համար: Նա ակամայ ձեռք դրեց մի կոճակի վրայ, սառն էր, յետ քաշեց: Քանի՞ տարի շարունակ նա գաղափարի ընկեր էր ձեւացել այս շղթայակապ հերոսի հետ, քանիսի՞ն խաբել օձի նենգութեամբ, իսկ ա՞յժմ... Նա շօշափեց իր սուրը, կրկին յետ քաշեց ձեռքը, եւ ակամայ նայեց իր նախկին ընկերոջ ծանր շղթաներին: Ո՞րն էր լաւ - տաճիկ պաշտօնեայի սո՞ւրը

թէ հայրենիքի փրկութեան նահատակի ժանգոտ շղթաները... Այս հարցը, որ նա վաղուց վճռած էր համարում այսօր կրկին ցցուեց նրա առաջ: Ինչո՞ւ... Ո՞վ կարող է չափել մարդկային սրտի խաւար խորութիւնը, ուր շատ անգամ ոճիրների կողքին քնած են հազար ու մի առեղծուածներ:

Դարձեալ գիշեր, մի մռա՛յլ գիշեր: Սեւ երկնքի տակ անհանգիստ քամին էր աղմկում խաւարի ծանր լռութիւնը:

Օգնականը դէպի բանտն էր գնում. բանտապետը կանչել էր: Նրա քայլուածքը նախորդ օրերի աշխոյժը չունէր. խաւարն էր լաւ չէր, քամին էլ լաւ չէր, դրսում ոչինչ լաւ չէր: Նա մտածում էր այնպիսի բաներ, որ կը գերադասէր չմտածել: Այս առաւօտ ի՜նչքան աշխատեց թագնուել, երբ Ա... բարձրանում էր կախաղան, չեղաւ: Նա կարծես յատկապէս իրեն էր փնտռում, գտաւ եւ նայեց, էլի այնպէս, ինչպէս դատարանում, զզուանքով. կարծես նա ուզեց մահից առաջ նրա ճակտին յաւիտեան դրոշմել այն սոսկալի, թունաւոր հայեացքը, որից իր արիւնը սառում էր: Ահա խաւարի մէջ երկու փայլուն կէտեր-աչքե՛ր են... Նա կանգ առաւ, մտքերի թելը կտրուեց, նա վախենում էր. ի՞նչպէս առաջ գնալ... Մի փոքր մտածեց, աչքերը փակեց. երբ բացեց, փայլուն կէտերն այնտեղ էին, այժմ աւելի մեծ, աւելի պսպղուն... Ճարը կտրած՝ նա վրայ վազեց, աչքերն անյայտացան. մի կատու էր, որ փախաւ: Նա ժպտաց իր վախկոտութեան վրայ, բայց եւ այնպէս շուտ-

շուտ գնաց:

Ահա նա բանտի բակումն է վերջապէս: Նայեց դէպի այն կողմը, ուր այս առաւօտ կախաղանն էր: Նա համոզուած էր, որ դիակը թաղուած, ամէն ինչ վերջացած կը լինէր. բայց... նա սառած մնաց,- դիակը դեռ սպիտակին էր տալիս խաւարի մէջ, եւ ամէն անգամ, երբ քամին ուժով խփում էր կախաղանի սիւները ճըռճռում էին ծանր, լալագին, ինչպէս սիրելիի վրայ ողբացող սգաւորներ կամ ծանր ցալից հեծող թշուառներ: Եւ քամին տանում էր այժ ճռինչը աշխարհին յանձնելու համար:

Ճանապարհին անցնում էր հէնց կախաղանի տակով: Նա վազեց առանց վեր նայելու, բայց քանի մօտենում էր կախաղանին, այնքան քայլերը ծանրանում էին: «Քամին չի թողնում», մտածեց նա: Ստիպուած եղաւ ծանր գնալ, առանց կարողանալու աչքերը հեռացնել կախաղանից... *Ծանօթ սարսուռը կրկին անցաւ նրա մարմնով:* Վերջապէս դողալով նա մտաւ բանտապետի մօտ: Այստեղ լաւ էր. գոնէ կենդանի մարդ կար: Բանտապետը վերեւ չնայեց, նա մտախոհ էր: Լուռ էին:

- Հիմա խօմ հանգիստ ես, ասաց օգնականը ճնշող լռութիւնն ընդհատելու համար, էլ ձայն չկայ:

- Կա՛յ. չե՞ս լսում, ա՛յ ականջ դիր:- Դրսուց քամու մռմռոցի հետ միասին լսւում էր սիւների ճռճռոցը՝ տխո՛ւր, միակերպ, ինչպէս մի հսկայա-

կան օրօր յաւիտեան քնող նահատակի վրայ...

- Ինչո՞ւ թաղել չտուիր:

- Հէնց դրա համար եմ կանչել քեզ. վաղը նրան դու պիտի թաղել տաս, դու նրա «ընկերն» ես եղել...

Օգնականը լուռ էր: Ակնարկը սպանիչ էր: Դարձեա՛լ...

- Ես չթունաւորեցի նրան... մռմռում էր բանտապետը եւ ուզում էր շարունակել բայց յանկարծ լռեց: «Չլինի՞ թէ արտասուում է», մտածեց օգնականը եւ սարսափեց... Բանտապետը գլուխը քաշ էր ձգել. աչքերը ստուերումն էին: Ահա կամացուկ տեղից բարձրացաւ, վերցրեց լամպը եւ դողդողալով մօտեցրեց բանտապետի դէմքին: Բանտապետը գլուխը բարձրացրեց, զայրոյթով խլեց օգնականի ձեռքից լամպը, զարկեց յատակին եւ փշուր-փշուր դարձրեց գոչելով.

- Դաւաճա՜ն, ընկե՛րդ էր...

Սենեակում խաւար տիրեց. ամէն մի անկիւնում տասնեակ փայլուն աչքեր պլպլացին, ապա մեծացա՜ն, մեծացան... Սարսափելի՜ էր. պէտք էր դուրս փախչել: Օգնականը դուռ չէր գտնում. քանի անգամ նա պտոյտ գործեց, վերջապէս ուժասպառ, քրտնաթոր հազիւ գտաւ դուռը եւ գլուխը զգուշութեամբ դուրս հանեց:

Դուրսն էլ սարսափելի էր. խաւար, քամի, եւ կախաղանը շարունակում էր ողբալ իր միակերպ ճռճռոցով եւ դիակը ճօճւում էր օդի մէջ: Ո՞ւր գնալ... Նա վճռեց կրկին վազել եւ անցնել, բայց

հազիւ մի քանի քայլ արած, նա աչքերը վեր բարձրացրեց.- առջեւում, խաւարի մէջ, երկու աչքերը փայլում էին, արիւնոտ, ճոթռուած: Նրա ծնկները ծալուեցին... Դողդողալով յետ եկաւ դէպի *բանտապետը*: *Ամբողջ աշխարհն էր խօսում* այդ մի հատիկ մարդու բերանով: Օգնականը դարձաւ եւ վազեց թափով: Քամին նրան չթողնեց առաջ գնալ եւ, կանգ առաւ հէնց կախաղանի տակ: Քրտինքը թափւում էր վրայից, *բայց նա դողում էր*, ատամներն իրար էին գարկւում: Ապա վերեւ նայեց: Դիակն այս անգամ՝ էլ այնպէս բարկացած չէր. աչքերը նայում եւ թարթում էին մեղմ, կարեկից եւ արիւնոտ. շրթունքները *կամացուկ մրմնջում էին՝ «ընկե՛ր, ընկե՛ր, ընկե՛ր»*... Այս բառի տեղ նա կ'ուզէր լսել իր գլխին ճայթող մահացու կայծակի որոտը... Ո՞ւր փախչել ազատուելու համար: Ոտներն իրեն չէին հնազանդում. նա յենուեց *կախաղանի սեանը* եւ *սարսափած* նայում էր ճօճուող դիակին երկա՛ր երկա՛ր, եւ լսում էր կախաղանի ողբաձայն ճռռոցը:

Նա յիշեց բոլորը... Իր գլխի վերեւ օրօրուող դիակն *իր «Ընկերն» էր... Ո՞ւր էր ինքը եւ ո՞ւր* իջաւ... Կ'ուզէր արտասուել, բայց չկար այդ զովացուցիչ արցունքը, մինչդեռ կուրծքն ուռած էր, այրւում էր, եւ նա աւելի եւ աւելի մօտ էր սեղմում օրօրուող *սեանը*, *տրորում էր կուրծքը՝ ներսի* բոցը մարելու համար... Ի զո՛ւր:

Երկար նա գալարւում էր վիրաւոր օձի պէս խաւարի եւ միայնութեան մէջ: Յանկարծ նա թո-

ղեց սիւնը, բռնեց գլուխը, կանգ առաւ մի փոքր, ապա տենդոտ շարժումներով մօտեցաւ, վերցրեց սանդուխքը, դրեց, բարձրացաւ, պարանն իր պարանոցը ձգեց ու ճօճուեց օդի մէջ... քամու ձայնին խառնուեց մի քանի խռխռոց... եւ ամէն ինչ վերջացաւ:

Եւ նայում էին իրար այդ երկու դիակները չռած աչքերով, մէկը վերեւից, միւսը ներքեւից, եւ լսւում էր խաւարի մէջ բանտապետի հեծկլտանքը...

Եւ ազատութեան Ոգին անցնում էր այդ դիակների վրայով, մէկին ժպտադէմ, միւսին խոժոռ նայելով...

1899 թ.

ՁԱՒՕՆ

Այն գիշեր Վանայ ծովակը յոգնած գեղեցկուհու նման անուշիկ նազանքով ծոյլ ծոյլ օրօրւում էր իր ափերի մէջ՝ հեւալով մեղմիկ, եւ կարծես չարաճճի աստղերի հետաքրքիր հայեացքներից իր մերկութիւնը ծածկելու համար, յարատեւ մշուշից անբաւական, վրան ձգել էր նաեւ գիշերային խաւարի թանձր քօղը եւ պատրաստւում էր հանդարտ քուն մտնել: Սակայն ո՛չ խաւարը եւ ո՛չ էլ մշուշը չէին կարողանում աստղերին արգելել իրենց սովորական խաղը. նրանք այնու ամենայնիւ անհամար բազմութեամբ վազել էին կապուտակ երկնքի զանազան ծայրերից դէպի այս ծովակը եւ նայում էին վերից վար իրենց պլպլան աչքերով: Երբ գիշերային հովն իր պաղ շնչով լիզում, այլայլում էր ծովակի մակերեւոյթը, այն ժամանակ աստղերը, սառը ջրի հպումից սարսռացող մերկ մանուկների պէս, դողդողում, թրթռում էին ջրի մէջ արծաթէ շիթեր արձակելով կամ խառնւում էին ալեակների հետ, որոնք հրում, հրհրում էին իրար՝ աննպատակ դէպի ափերը մղելով, կամ կարծես փսփսում, քչփչում

էին իրար ականջին մանուկ դաւադիրների պէս եւ մանկական լրջութեամբ, որ յետոյ ափերի մօտ ընդհանուր արծաթահնչիւն քրքիջով, միահամուռ շրփփոցով արար աշխարհի յայտնեն մի չեղած գաղտնիք: Եւ չորս կողմից ափերի լեռները խորհրդաւոր լռութեամբ իրենց խոռոչէ անլոյս աչքերը, որոնք չեն թարթում նոյնիսկ փոթորիկների առաջ, չռել էին դէպի ծովակը հրէշաւոր զարմանքով եւ կարծես դիտում էին աստղերի եւ ալեակների, ծովակի եւ երկնքի հրաշալի խաղը:

Եւ ամէն ինչ ներդաշնակ էր բնութեան մէջ այն գիշեր. ամէն ինչ վսեմ էր ու դիւթիչ:

Ինչո՞ւ, սակայն, բնութեան այս անանման խաղաղութեան, այս աստուածային ներդաշնակութեան մէջ բաժին չունէր ծովափի Աղ... գիւղը: Դէպի իրենց գերեզմանները խոյս տուող հալածուած ուրուականների պէս՝ մարդիկ փախչում էին այս ու այն պատի տակից, այս ու այն նեղ փողոցից եւ կարծես շտապով ծածկւում էին անդունդներում: Մի տնից միւս տուն, մի կտրից միւս կտուր, թոնրատնից գոմ, գոմից դաշտ, պատերի վրայով, դէզերի տակից, փոսերի միջից- քարերի արանքից, աւերակներից, ուր ստուերն աւելի թանձր էր, ուր խաւարն աւելի եւ, մարդիկ մերթ սողում էին ծնկների վրայ, մերթ կանգնում, ձգւում էին ու՝ իրար քաշքշելով, քչփչալով, դողալով անցնում էին, անայայտանում էին ստուերի պէս եւ յետոյ կրկին երեւում, կրկին ծածկւում էին: Ամբողջ գիւղը իր խրճիթներով սարսափի ձեռքին

գալարուում, ոլորուում, դողդողում էր: Շներն էլ էին անհանգիստ. անկարգ ու այլանդակ էին հաչում, կամ կաղկանձում ողբաձայն, կամ ոռնում դունչերը դէպի երկինք ուղղած: Խրճիթներում ճրագ չկար, լոյս չկար միայն երբեմն այս ու այն փողոցում, այս ու այն տան առաջ մի խումբ մարդկանց ձեռքին երեւում էին կերոններ, որոնք մոլորակների պէս այստեղ ու այնտեղ էին յայտնւում փախչողների յետեւից, յետոյ ծածկւում, ապա մէն բան կրկին խորասուզւում էր նոյն խեղդող խաւարի մէջ. ստուերները շարունակում էին սողալ, քաշքշուել:

Այդ չար ժամին ծովափին շտապ-շտապ մօտեցան երկու մարդկային ստուերներ, ըստ երեւոյթին երկու կին, մէկը բարձրահասակ եւ առնական շարժումներով, միւսը աւելի փոքր ու կանացի քնքոյշ մարմնակազմով: Նրանք մի վայրկեան կանգ առան մի ձկնորսական նաւակի առաջ:

- Ծովից չե՞ս վախենում, հարցրեց բարձրահասակ կինը փսփսուկով:

Երկրորդը պատասխանի փոխարէն գլխով բացասական շարժում արեց, հասկացնելով, որ չի վախենում:

- Նաւակ նստե՞լ ես:

- Այո՛, պատասխանեց երկրորդը դարձեալ գլխով:

- Թիավարել կարո՞ղ ես:

Պատասխանը բացասական եղաւ:

- Ղեկը կարո՞ղ ես պահել:

Ջահիլ կինը դրական պատասխան տուեց:

- Դէ՛հ շուտ նստի՛ր - վրայ բերեց բարձրահասակ կինը,- վերջապէս ինչ էլ որ լինի, լաւն այս է, շարունակեց նաեւ, տեղ բռնելով. մեզ մնացել է կամ նա՛, կամ սա՛. եւ նա ձեռքով երկինքը՝ ապա ջուրը ցոյց տուեց:

Նրանք նստեցին: Ջահիլ կինը ղեկը բռնեց, իսկ միւսը թիակներն առաւ, եւ նաւակը վայրկենապէս հեռացաւ ափից՝ շտապ-շտապ պատռելով քնած ալիքները:

***

Ովքե՞ր էին այդ երկու խորհրդաւոր կանայքը:

Բարձրահասակ կինը Թուխիկենց Ջաւօն էր, իսկ միւսը՝ նրա հարսը, սիրուն Հեղինարը: Աղ... գիւղում ո՞վ չէր ճանաչում Ջաւոյին, այն բարձրահասակ, առնացի կնոջը, որի չորացած, թուխ դէմքը, մանաւանդ խորը, սեւ աչքերը չար լինելու չափ լուրջ էին միշտ: Այդ դէմքին նայելով՝ կարելի էր կարծել, թէ Ջաւօն միշտ զայրացած է, միշտ քինոտ, միշտ դժգոհ մի բանից: Նրա դէմքի արտայայտութիւնը չէր փոխւում, բայց փորձուած աչքը կարող էր նրա իսկական զայոյթի եւ խաղաղութեան նշանները գտնել այդ միապաղ դէմքին, որովհետեւ երբ Ջաւօն կատաղած էր, այդ ժամանակ նրա քթի վերեւում, թաւ յօնքերի միջավայրում եւ բերանի երկու անկիւններում մի-մի զոյգ անախորժ, չարագուշակ կնճիռներ էին

կազմում: Ահա այդ ժամանակ էր սարսափելի Ջաւօլ եւ նրան խօսեցնելն անվտանգ չէր: Նա քայլում էր միշտ գլուխը բարձր, մէջքն ուղիղ, հաստատ, առնացի քայլուածքով, եւ առհասարակ նրա ամբողջ մարմնակազմը, բնաւորութիւնը ինչ որ առնական բան ունէր, որ այնպէս անախորժ խառնուրդ էր կազմում կանացիութեան հետ: Այսպէս՝ նա կանացի աշխատանք չգիտէր, ասեղ ձեռք չէր առնի, բայց մեծ սիրով իր ամուսնու՝ ձկնորս Վրթոյի հետ՝ նաւակ կը նստէր, կը թիավարէր տղամարդից լաւ եւ առհասարակ երկիւղ ասած բանը չգիտէր: Ամենքն էին վախենում Ջաւոյի լեզուից եւ զայրոյթից, բայց մանաւանդ նա սարսափելի է իր ամուսնու համար, որ առանց նրա խորհրդի ոչինչ չէր անի: Գիւղացիք այդ գիտէին, եւ վաղուց սովորութիւն էր դարձել Վրթոյին անուանել «Ջաւոյի Վ'րթօ»: Եւ ոչ ոք, նոյնիսկ ինքը Վրթօն, այդ կոչումը տարօրինակ, ստորացուցիչ չէր գտնում:

Մի հատիկ զաւակ ունէին նրանք, որ դեռ փոքր հասակից ընկերանում էր ծնողներին ծուկ որսալիս, իսկ երբ հասակ առաւ, ամուսնացաւ, այն ժամանակ Ջաւօլ իր ամուսնուն տուեց ծովն ու որդին, իսկ ինքը վերցրեց տունն ու հարսը: Ծովի ձախորդութիւններից, նրա ահաւոր անակնկալներից, յարատեւ յորձանքների վտանգից որդուն պիտի պաշտպանէր հայրը, իսկ չար աշխարհի գայթակղութիւններից, կեանքի մոլորութիւններից, մարդկանց անիրաւութիւններից՝ ինքը Ջա-

ւօն պիտի պաշտպանէր իր հարսի եւ իր օջաղի պատիւը: Կեանքն էլ մի ծով չէ՞... Իսկ Ջաւօն լաւ էր ճանաչում ծովը՝ իր անդունդներում թագցրած կրքերով, կեանքը՝ իր խէր ու շառով:

Էլ *այնուհետեւ Ջաւոյին ոչ ոք չտեսաւ ծովի* վրայ, եւ հարսին ոչ ոք չտեսաւ փողոցում: Խստաբարոյ կեսուրը մի որպէս անգամ Հեղինարին մենակ չէր թողնում: Նրա չար բախտից հարսն էլ գեղեցիկ էր-այսպէս էին համոզուած ամէնքն *առանց տեսնելու*: Հարսը բերուած էր 2-3 ժամուայ ճանապարհ հեռու մի ծովափնեայ գիւղից-այնտեղից էր գալիս նրա գեղեցկութեան լուրը: Հարեւանները կատակի նիւթ էին դարձրել Ջաւոյին զգուշութիւնը, բայց այդ կատակներից նա նեղացողը չէր:

- Ինչ ուզում էք ասէք, ես մի բանը գիտեմ, *ասում էր նա հարեւանուհիներին: Մարդուն էլ եմ* ճանաչում, կնկան էլ: Երկուսն էլ իրար արժեն. մարդը խօմ միշտ «շուն» կը լինի, «աչքը չոր», «Հարեւանի հարսն էլ միշտ սիրուն է» եւ «աչքը դուրս»:

Ահա թէ ինչու համար նա այնքան զգոյշ, այնքան խիստ էր դէպի իր հարսը:

Եւ այսպէս ապրում էին նրանք. լաւ-վատ՝ գլուխ էին պահում:

Բայց մի օր սեւ եկաւ Թուխիկենց տան վրայ. Վրթոն ու որդին ծովը գնացին ու էլ յետ չեկան. երկուսով էլ փոթորկին զոհ գնացին, եւ մի քանի օր յետոյ դիակները գտան ծովափում:

Օջաղը փլաւ... Հարուածը զարհուրելի էր... Երկու կանայք սեւ կապեցին, սգացին: Ջաւօն երկար արտասուեց. բայց չկռացաւ. միայն այնուհետեւ երկու յօնքերի միջի եւ շրթունքների եզրի կնճիռներն էլ չջնջուեցին: Նա սարսափելի էր: Կամաց-կամաց վրայ հասնող աղքատութիւնն էլ աւելի դաժան, աւելի մարդատեաց դարձրեց նրան. էլ չէր խօսում, չէր վիճում, չէր անիծում: Ասում էին միայն, որ հարսի հետ աւելի քաղցր էր վարւում այնուհետեւ, կարծես նրա մէջ էր փնտռում իր յետին սփոփանքը: Այս քնքշութիւնը դէպի հարսը *սակայն մազի չափ անգամ չմեղմացրեց նրա հսկողութիւնը:* Ընդհակառակը՝ *աչքերը չորս դարձան իր այրի հարսի, իր օջաղի* պատիւը պաշտպանելու համար, մինչեւ որ «ջահիլը» *կրկին մարդու գնար: Երկու սգաւոր* կանայք սեւ օրով ապրում էին: Հարսը հնազանդ ե՛ւ իր կեսուրին ե՛ւ իր այնքան անսիրտ ճակատագրին, սպասում էր իր երկրորդ բախտին:

***

Էլի հարկ էին հաւաքում Աղ... գիւղում. քանի՞ երրորդ անգամն էր, ո՞վ գիտէր: Տարել էին ամէն ինչ- անասուններ, կահ ու կարասիք, զարդեր, շորեր,- բայց հարկահանները դարձեալ աւերած էին գործում տներում: Ծեծ, սպանութիւն, առեւանգութիւն, պատուի անարգանք գիւղը բռնել էր: Մարդիկ փախչում էին, կանանց, աղջիկներին

թագցնում: Գիւղը կրակի մէջ էր:

Այն օրը Ջաւոյի դէմքի կնճիռները շանթալից ամպերի պէս կախուել էին: Ի՞նչ անէր, ո՞ր ջուրն ընկնէր. երբ զափթիաները տուն թափուեն՝ ի՞նչ տայ, հարսին ի՞նչպէս ազատի, ո՞ւր փախցնի: Նա անհանգստութեամբ դուրս էր գնում, ներս մտնում, ինքն իրեն խօսում, մռմռում, հարսին նայում, տան չորս կողմում բան փտռում, որ տանի շուտով յանձնի, գուցէ տուն չգան,- բայց ոչինչ, ոչինչ չկար... Միայն հարսն էր ու իր պատիւը, որ փրկել էր պէտք:

Մութն իջաւ: Արդէն գիշեր էր, երբ հարեւան տնից աղմուկ բարձրացաւ: Ջաւօն դուրս թռաւ բակը, կտուրը բարձրացաւ եւ հարեւանի հերդիկի վրայ կռացաւ: Տեսարանը սարսափելի էր: Մի տաճիկ բէգ եւ տասնի չափ զափթիաներ լցուել էին տունը: Երեխաները լալիս էին աղիողորմ, սրտապատառ ճիչերով. կինը կծկուել էր մի պատի տակ, գլուխը քաշ ձգած՝ նոյնպէս արտասւում էր, իսկ տանտիրոջը թակում էին զինուորները.

- Չկա՛յ, Աստուա՛ծ է վկայ, չկա՛յ-աղերսում էր խեղճ մարդը-տարէք, ինչ ուզում էք, ինչո՞ւ էք սպանում ինձ. չէ՞ վերեւում երկինք կայ...

- Լաւ, որ ոչինչ կայ-ասաց բէյը սառնասրտութեամբ-կինդ տուր. կինդ կը տանենք հարկիդ տեղ:

Երեխաները մէկէն ճչացին եւ մօր փէշերից կախուեցին: Մայրը կծկուեց նրանց վրայ հեծկլտալով, զափթիաներն իրար ընկան, բայց Ջաւօն

էլ չսպասեց: Նա շուտով ցած իջաւ, տուն մտաւ, հարսի ձեռքից բռնեց եւ նրանք դուրս եկան: Թէեւ չորս կողմում պահապաններ կային, բայց բակերով-կտուրներով կարողացան գիւղից դուրս գալ ու ծովին հասնել եւ այժմ փախչում էին ծովով դէպի հարսի հէրանց տուն, դէպի միւս ափը:

- Հա՛յ, *հո՛ւ, հողը Ջաւոյի գլխին... Սեւն եկաւ* տունս բռնեց բաւական չի, հիմա էլ հարսիս պատիւ՞ը կեղտոտ զափթիաներին տամ,- մռմռում էր Ջաւօն ինքն իրեն, երբ մի փոքր հեռացան ափից.- անիծուի՛ս, երկիր, փլե՛ս «այա՛մ», խարջը գիշերն են հաւաքում: Վախ վա՛խ, էն ի՞նչ տեսայ, խե՛ղճ մարդ... Չէ, էս լաւ է: Եւպէս չէ՞, Հեղինար. կամ հօրդ կը տամ, կամ ծովին, այնտեղ՝ բարեկամներ, այստեղ՝ ծովի տակ՝ ամուսիններ: *Եա՛ Աղթամա՛ր, քեզ եմ կանչել...*

Հեղինարը լուռ էր. նա չխօսկան էր կեսուրի հետ եւ չէր խօսում նոյնիսկ այս ճգնաժամին:

Եւ թիակները շրջփփում էին, նաւա՛կը սլլում էր, *ջրերն աղմկում էին, աստղերը պլպլում* վերեւում եւ ջրի մէջ. ծովը խաղաղ էր, թեթեւ հովը՝ բարեյաջող: Պառաւը նայում էր ջրին եւ թիավարում լուռ, բայց Հեղինարը հանգիստ նստել չէր կարողանում: Նա նայում էր թիակներին, ապա հեռու խաւարին, յետ էր նայում դէպի ափերը, դէպի գիւղը, որտեղից հեռացան, եւ բոլոր նշաններից երեւում էր, որ նա սաստիկ վախենում է ե՛ւ ծովից, *ե՛ւ խաւարից, ե՛ւ թշնամիներից:*

***

Արդէն բաւական հեռացել էին ափից, երբ Հեղինարը մէկ էլ յետ նայեց, ցնցուեց. ապա ծափ տուեց, կեսուրի ուշադրութիւնը հրաւիրեց եւ ձեռքը մեկնեց հեռու՝ դէպի ափը, ուր ճրագներ էին երեւում, լոյսեր էին շարժւում այս ու այն կողմը: Արդեօք իրենց յետեւի՞ցն են... Ջաւոն էլ տեսաւ, բայց ոչինչ չասեց. միայն նկատելի էր որ նա ուժ տուեց թիակներին: Նաւակը այժմ թռչում էր բայց եւ այնպէս դեռ որքա՜ն ճանապարհ կար... Երկու կանայք այժմ աւելի յաճախ էին նայում դէպի գիւղը, դէպի ափը. ճրագները կարծես ջրի վրայ էին շարժւում, գալիս էին նրանց յետեւից արագ-արագ:

- Եա՛ Տիրամէր-մրմնջում էր պառաւը եւ թիավարում, բայց նրա ուժը կամաց-կամաց պակասում էր: Հեղինարը սարսափով էր նկատում որ նաւակն աւելի եւ աւելի էր դանդաղում: Իսկ հեռու-հեռու՝ ծովի վրայ պլպլացող երկար, երերուն ճրագները հետեւում էին նրանց խաւարի միջից, ինչպէս զոհ փնտռող սոված գայլերի աչքերը:

Յոգնածութիւնը յաղթում էր Ջաւոյին: Նա մի որպէ թողեց թիակները, հանգստացաւ եւ դարձեալ արագ-արագ թիավարել սկսեց: Ի զո՛ւր , նաւակը շատ քիչ էր առաջանում, իսկ ճրագները մօտենում էին, հա՛ մօտենում... Էլի մի փոքր, եւ գուցէ թիակների ձայները լսելի լինէին:

Ի՞նչ պէտք էր անել: Ջաւոն հաստատ համոզ-

ուած էր որ եկողները տաճիկներ են. Էլ ո՞վ սիրտ կ՚անէր ճրագով ծով դուրս գալ այս ժամին: Ուստի նա որոշեց խոյս տալ ծովի խորքերը, ամէն վտանգ յանձն առնելով: Նա այդ նպատակով թիավարեց դէպի բաց ծովը, բայց այդ էլ անկարելի եղաւ. հակառակ հողմը նրա ջանքերն ապարդիւն դարձրեց: Մի քանի րոպէից յետոյ փախստականները կանգ առան բաց ծովում ուժասպառ՝ եւ սարսափով նայում էին գայլի աչքերին, որոնք այժմ փայլում էին տասը-քսան քայլի վրայ:

- Ո՞վ էք - ձայն տուին զինուորները:

- *Պատասխան չկար: Ջաւօն էլ չգիտէր, ի՞նչ է* կատարւում իր հետ:

*Մօտեցան: Ընդհանուր ռռնոց բարձրացաւ զի*նուորների նաւակում:

- *Փախած թռչունն է* - *ձայն տուեց մէկը.* - *չասացի՞ որ նրանք ծովը դուրս եկան. տեսայ, Հասան, Ալլահը վկայ՝ տեսայ փախչում էին, բայց գլխի չընկայ, սատանան կապեց ինձ:*

- Հին ագռաւին ծովը ձգենք, իսկ բռնուած լորը տանենք, ասաց մի զափթիա:

- Մեր ի՞նչ բանն է այդ. բէյն ասաց երկսին էլ բերէք, կը տանենք:

- Կարծես չի կարելի բէյին ասել, թէ ինքն իրեն ձգեց ծովը քո երկիւղից:

- Թամաշի բան կը լինի, որ տեսնենք, թէ պառաւն ինչպէս կը խռխռայ:

Ջաւօն, հանդարտ նստած իր տեղում, նայում էր եւ լսում: Հեղինարը երեսի վրայ ընկած էր նա-

Եւ այժմ՝ ո՛վ հոյակապ, ուխտուած հսկաներ. Ազատութեան խորանի առաջ ծնրադիր՝ Ձեզ եմ նուիրում Ձեր արիւնով ցողուած այս կարմիր երազները:

Եւ Ձեզ, ո՛վ անանուն ու կորած մարտիկներ, քու անտառներում եւ մռայլ ձորերում ընկած հերոսներ, որոնց վերջին հառաչանքները մրրիկների հետ են տարուում, որոնց ոսկորները հողմերն են լիզում հեծեծալով:

Ձեզ բոլորիդ, պաշտամունքի եւ հիացմունքի արցունքով եւ Ձեզմով այն վսեմ, այն արիւնաներկ Գաղափարին, որին այնքան սերունդներ փարել են խանդաղատանքով եւ որ ահա Ձեր շնորհիւ փայլփլում է մեր մռայլ հորիզոնի վրայ:

Փա՛ռք Ձեզ:

Աւետիս Ահարոնեան

ձգեց հարսի վիզը եւ գլուխը դէպի իրեն քաշեց, տեսաւ թէ ինչպէս մի ուրիշը աշխատում էր երեսը բանալ, Ջաւոյի՛ հարսի երեսը... Էլ բան չտեսաւ Ջաւոն, նա մէկէն վեր ցատկեց տեղից, արագութեամբ կռացաւ նաւակի եզրին, երկու ձեռքով բռնեց եւ վայրկենապէս ձգուեց ջրի մէջ՝ իր բոլոր թափով հետը քաշելով նաւակը ու ճչալով՝

- Ծո՛վ, ծո՛վ, մեզ էլ ծածկի՛ր...

Նաւակը շուռ եկաւ հենց նրա գլխի վրայ եւ իսկոյն խորասուզուեց: Ալիքները մի փոքր աղմկուեցին. մի քանի շաչիւն, մի քանի հռնդիւն լսուեց մթութեան մէջ, օգնութիւն կանչող մի քանի ճիչեր խեղդուող կոկորդներից - եւ ամէն ինչ լռեց... Ձոհերն ու դահիճները միեւնոյն սառն ալիքների տակ թաղուեցին, եւ ջրի մակերեւոյթը կրկին խաղաղուեց...

Դարձեալ աստղերը պլպլում էին ծովի մէջ, դարձեալ լեռները իրենց խոռոչէ կոյր աչքերով դիտում էին ծովի եւ երկնքի խաղը, բնութեան հմայիչ ներդաշնակութեան մէջ: Մարդն էր միայն մի յանցաւոր շփոթ առաջ բերում այդ բոլորի մէջ. նա՛ էր իր ոճիրով պղծում երկրի երեսը:

Եւ երկիրը կ'ամաչէր երկնքից, եթէ խաւարը չծածկէր նրա դէմքը...

1899 թ.

ԱԾՈՒՂԸ

Ջարդը վերջացաւ. Խաւարն իջաւ, իջաւ սարերից եւ ծածկեց արար-աշխարհը: Այն գիշերը հոգեմաշ էր, սոսկալի. խաւարը շատ թանձր: Քաղաքը ոչ թէ քնեց, այլ մեռաւ: Փողոցներում մարդ չկար, տներում ճրագ չկար, ո՛չ մի ձայն. կենդանութեան նշոյլ ցոյց տալը այդ գիշեր ոճիրներից մեծագոյնն էր: Իշխողը մահն էր, բռնի, արիւնոտ մահը, որ սարսափելի թեւերով սաւառնում էր վեր-վեր մռայլ տներից, որոնք այդ օրը չտեսնուած բաներ տեսան: Քանի՜ քանի՜ օջաղ մարեց, աչք չմնաց արիւն արցունք չթափէր... Այժմ էլ մի զարմանալի լռութիւն կար ոճիրով յղի խաւարում: Ո՞վ ձայն հանէր. յօշոտուած ու այլանդակուած դիակները շարան-շարան փռուած էին գերեզմանատանը՝ ճռթուած ու արիւնոտ աչքերը դէպի երկինք չռած, ասես հարցնում էին «ինչո՞ւ» բոլոր «ինչուներից» ամէնից անմիտը, որի վրայով դարերը քրքիջով են սահում՝ անպատասխան թողնելով խեղճերին: Լուռ էին նաեւ մեծ ոճիրի հեղինակները: Խաւարը եկաւ, ծածկեց արիւնը մի մռայլ քօղով. բայց իր հետ բերեց նաեւ մի սոս-

կում, որ թափանցում էր նոյնիսկ ամենաանսիրտ արիւնարբուի երակներում. նրանք թագնուեցին իրենց տներում, ինչպէս որսից դարձող գազաններ բնում: Այն գիշեր դրսում, փողոցում եւ մանաւանդ հայոց գերեզմանատան շուրջը մի բան կար, որ հազար աչքով, հազար ձեւով գալարւում էր խաւարի մէջ եւ խեղդում էր խեղդում... Քամի էլ կար, աշնանային չար քամի:

Շատ ուշ միայն փողոցներից մէկում յայտնուեցին մի խումբ մարդկային ստուերներ - քսանի չափ զինուորներ եւ մի յիսնապետ: Նրանք շարժւում էին հանդարտ, անձայն, ասես վախենալով մահու հանգիստը խռովել կամ զայրացնել խաւարի մէջ գալարուող սարսափը: Ի՞նչ էին փնտռում այս անապատ փողոցներում այժ ժամին,- անկարելի էր իմանալ մթութեան մէջ: Միայն նրանք անցնում էին գողերի զգուշութեամբ, մերթ ընդ մերթ կանգ էին առնում այս ու այն դրան առաջ, ականջ էին դնում եւ կրկին շարունակում ճանապարհը նոյն զգուշութեամբ: Փողոցի ծայրում յիսնապետը, որ առաջ էր ընթանում կանգ առաւ. մի քանի դիակներ կային գետնին փռուած:

- Վերցրէ՛ք, հրամայեց նա, պէտք է տանել «այնտեղ»:

«Այնտեղը» հայոց գերեզմանատունն էր: Մի քանի հոգի մօտեցան, վերցրին դիակները եւ դրին ձեռքերի պատգարակների վրայ, ապա կրկին առաջ շարժուեցին: Այս խումբը փողոցնե-

րում թափթփած վերջին դիակները հաւաքելու պարտքն ունէր: Դարձեալ մի քանի տեղ կանգ առան. դարձեալ դիակներ շարեցին նախկիններ-ի վրայ եւ շարունակեցին ընթացքը: Մէկ եւ յանկարծ իրենց արիւնոտ բեռը վար դրին եւ բոլորը միասին քարացան... Հեռու գերեզմանատնից քամին մի ձայն էր բերում, մի աղեկտուր ձայն, որ լսւում էր մերթ ինչպէս խորունկ հառաչանք եւ մերթ ինչպէս օգնութեան աղաղակ կամ սարսափի սրտաճաք ճիչ: Երբեմն քամու հետ խառնուելով, այդ զարմանալի ձայնը մեծանում էր, դառնում հարիւրաւոր կոկորդից պոռթկած մռմռոց: Այդ ժամանակ թւում էր, թէ գերեզմանատան բոլոր դիակները միագամից ճչում են, հառաչում են ցաւերից եւ դատ ու արդարութիւն են պահանջում: Երբեմն էլ, երբ քամու թափը մեղմանում էր, պարզ ու որոշ լսւում էր մի սրտաճմլիկ երգի ձայն, որով կարծես մի սգաւոր ոգի նզովում էր աշխարհի արդարութիւնը եւ լուռ դիակների ցաւերն էր ողբում: Այս խաւարի, այս սարսափի մէջ անսպասելի, գերբնական էր թւում այդ զարմանալի ձայնը, եւ խումբը քար կտրած՝ լսում էր անկարող լինելով առաջ գնալ: Իրենց ձեռքով խողխողուածներն էին խօսում, նրանք էին բողոքում, եւ դահիճներն անկարող էին չլսել:

Երգը շարունակում էր.

«Սեւ խաւարն իմ ընկերն է անբաժան,
Ես չգիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր,

Բայց այսօրուայ խաաարն է խոր, հոգեհան...
Դիակները փսփսում են ահաւոր,
Եւ պատմում են իրենց ցաւերն անապատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:
«Հին դարերից ցաւերն անպատում,
Հառաչելով, անցաք արեան ծովերով,
Համբերութեան դասեր առիք լեռներէն...
Քնէ՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով.
Եւ պատմեցէ՛ք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:
«Այս իմ անճար քնարն ունի երեք լար,
Այն՝ ողբաձայն, լալկան, խղճուկ, դողդոջուն,-
Ի՞նչպէս ողբամ ձեր ցաւերն անհամար,
Սրտեր վառեմ, արցունք քամեմ ես անհուն...
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:
«Տառապանքի, սուգ ու սեւի ինձ ընկեր
Մարդ չմնաց իմ արիւնոտ վաթանում.
Լուռ են շուրջս լեռներ, ձորեր, շիրիմներ,
Լոկ քամին է կողկողագին մրմնջում...
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում»...

- Գտէ՛ք այդ մարդուն, հրամայեց յիսնապետը:

- Գերեզմանատանն է, բէյ - պատասխանեցին մի քանի երկչոտ ձայներ:

- Գերեզմանատուն գնացէ՛ք տասն հոգի, առա՛ջ:

Խմբից տասը մարդ բաժանուեցին եւ անհաս-

տատ քայլերով առաջացան, տանելով իրեն հետ հաւաքած դիակները: Ձայնը շարունակում էր.

«Ես էլ ցաւի դաշն կապեմ քամու հետ,
Եւ արցունքի երգեր հիւսենք միասին.
Նա խաղում է ամպրոպների շանթի հետ,
Նա յոյզ ու բոց կը տայ նաեւ մեր երգին:
Կոյր աշուղը, մորկաշունչ, խօլ քամին
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:
«Ոռնա՛, քամի, հազար ու մի ձայներով.
Թո՛ղ սարսռան լեռներ, ձորեր, անդունդներ...
Անցի՛ր մէկ-մէկ դիակների վրայով,
Լիզի՛ր վէրքեր ու հաւաքի՛ր հառաչներ...
Կոյր աշուղը, մորկաշունչ, խօլ քամին
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:
«Ի՞նչ ես վազում աննպատակ դէպ հեռուն,
Հառաչանքներ, խոր-խոր ցաւեր շալակած.
Վե՛ր սլացիր դէպի երկինքն անհուն,
Գտի՛ր գահը, ուր բազմած է մի Աստուած:
Թէ անզօր է սրբել արցունքն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...
«Փչի՛ր վրան ահեղաշունչ որոտով,
Թող իր գահը դողայ հիմքից եւ Աստուած.
Թո՛ղ երկինքը մթնի իր վառ աստղերով,
Տիեզերքը դարձրո՛ւ քաոս, աւերած...
Թէ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...
«Զուր ես խառնում ձեր ալիքներն աշուղին.
Այնտեղ միայն հին օրերի խոհեր կան:

Դու խօմ գիտես լեզու, խօսք տալ ժայռերին,
Նրանց ասա՛, թող քեզ պատմեն, ի՞նչ տեսան...
Երբ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...
«Անցի՛ր հանդարտ շիրիմների վրայից,
Հողի տակ էլ թշուառները քուն չունին.
Ծարան-շարան հողաթմբի խորքերից,
Խուլ մրմունջներ գուցէ լսես ցաւագին...
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում...»

Զինուորների խումբը հասաւ գերեզմանատանը. դիակները ներս տարան եւ կանգ առան առանց համարձակուելու շատ խորքերը գնալ, ուր սարսափն էր թագաւորում:

- Ո՞վ ես, ձայն տուեց խմբից մէկը:

Պատասխանի փոխարէն երգիչը շարունակեց այս անգամ աւելի ուժգին, աւելի ցաւոտ:

«Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին
Սեւ երգ կ'ասեն, ցաւ կը պատմեն աշխարհին:
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ երկրում,
Գահ էլ պէտք չէ եւ ոչ Աստուած երկնքում»...

Զինուորներն առաջացան վախվխելով: Նրանք քայլում էին հողաթմբերի եւ դիակների վրայից, իսկ երգիչը մերթ երգում էր եւ մերթ հեկեկում էր այնպէս, որ կարծես բոլոր տապանաքարերը նրա հետ միասին հեծկլտում էին ցաւից,

եւ մեծ սուգը մարմին առած՝ գալարւում էր բոլորից վեր, դիակների եւ շիրիմների վրայ...

Չինուորները հասան եւ կանգ առան: Նրանց առաջ մի տապանաքարի վրայ նստած էր մի հատիկ մարդ, մի ծերունի... Նա գլխաբաց էր եւ մազերն ու միրուքը քամուն տուած՝ նայում էր դէպի վեր, դէպի անսահմանութիւնը եւ կարծես բոլոր զոհերի արիւնն էր պահանջում:

Քաղաքում նրան «աշուղ» էին ասում, բայց իրօք նա մեծ «դարդից» էր աշուղ դարձել: Հեռուհեռու, հայրենի գիւղում, նա տեսել էր իր բազմանդամ ընտանիքի կորուստը իր իսկ տան բոցերի մէջ, ինքն էլ զոյգ աչքերի գնով հազիւ էր կարողացել փրկել մի հատիկ զաւակին, որի հետ մի օր յայտնուեց Ա... Քաղաքում: Այստեղ փոքրիկ, տասն տարեկան երեխան առաջնորդում էր կոյր հօրը, եւ սա երգում էր աղէկտուր երգեր փողոցներում, բակերում, տներում: Նրա հին սազի լարերից ասես կաթիլ-կաթիլ ցաւ էր թափւում, իսկ ձայնը անհուն ցաւի շեշտ ունէր:

Երբ ջարդն սկսուեց նա դարձեալ դուրսն էր եւ ընդհանուր իրարանցումի մէջ կորցրեց երեխան: Մինչեւ ուշ գիշեր նա թափառեց փողոցներում, կանչեց, ճչաց... Ի զո՜ւր-որդու ձայնը չլսեց: Նրա չսպաննեցին, ի՞նչ արժէր մի կոյրի կեանք:

Իմանալով որ դիակները գերեզմանատանն են հաւաքուած, նա գիշերը յանգռելով բարձրացաւ մինչեւ գերեզմանատան բլրակը եւ մերթ ծնկաչոք, մերթ սողալով, մէկիկ-մէկիկ շօշափեց դիակ-

ները՝ մի հատիկ զաւակի դիակը փնտռելով: Երբ ջանքերն անօգուտ անցան, նա կծկուեց մի քարի վրայ, դուրս քաշեց մէջքից իր սազը եւ հին օրերի ունկնդիրներին այս սարսափելի գիշերին վերջին անգամ սուգ ասաց: Նրա ձայնը բարձրանում, տարածւում էր մեռած քաղաքի վրայ՝ տանելով իր հետ այնքան անմեղ արեան բողոքը:

Քիչ յետոյ աշուղը կանգնած էր յիսնապետի առաջ:

- Ո՞վ ես դու, հարցրեց բէյը:

- Ե՞ս... ես սուգ ասող եմ:

- Ի՞նչ էիր անում այնտեղ:

- Օրօր էի ասում, բէյ, սուգ էի ասում:

- Ո՞ւմ համար:

- Ո՛ւմ համար, Աստուած գիտէ:

- Ո՞վ քեզ իրաւունք տուեց որ քո ոռնոցով քաղաքի քունը եւ խաղաղութիւնը խանգարես:

Եթէ լոյս լինէր, հարցնողը կը տեսնէր, թէ ինչպէս ծամածռուեցին ծերի շրթունքները, եւ նա սոսկալի կերպով ժպտաց:

- Խաղաղութիւնը, կրկնեց ծերը հեգնաբար. գերեզմանատան դիակներն ու քարերը չեն լսում, բէ՛յ, իսկ ոչ որ այնտեղ՝ գերեզմանատանը չէ, նա կարմիր ձեռներ ունի. ոչ մի ձայն նրա խաղաղութիւնը չի վրդովի... Ում էլ ձեռքերը ոճիր չեն գործել, նրանք սարսափից խլացել են. Աստուածն էլ ձերն է: Ես էլ սուգ եմ ասում, բէյ, օրօր եմ ասում, չէ՞ դուք ուզեցիք որ քնեն...

- Ո՞վ տարաւ քեզ այնտեղ, դու խօմ կոյր ես:

գիլը խիստ մօտ էր նրան այժմ: Մէկ էլ յանկարծ մի զարմանալի բան պատահեց: Այդ կիսամեռ սողունը վերջին ճիգերը հաւաքեց, դուրս հանեց գլուխը, բացեց իր օղակները, պոչի վրայ ցցուեց, *ձգուեց ինչպէս մի խարազան եւ մահացու օղակներով* արագիլի երկար վզին փաթաթուեց: Ի զուր անցան արագիլի բոլոր ջանքերը դուրս կորզելու իր վիզը այդ մահաբեր օղակներից. նա թեւերը թափթափ էր տալիս, կտուցը գետնին *քսում, յետ յետ էր քաշւում, առաջ անցնում*, գետնին թաւալւում, փորձում էր վեր բարձրանալ, թռչել փախչել,- *ապարդիւն ջանքեր... Օձի յուսահատ* կատաղութիւնը զարհուրելի էր. նրա՝ օղակները սղմւում էին ու սղմւում, եւ վերջիվերջոյ թռչունը փռուեց բլրի կրծքին անկենդան... Օձը քաշուեց, անյայտացաւ:

*Քիւրդը լուռ էր այժմ: Նա ինձ նայեց, մեր աչ*քերն իրար հանդիպեցին եւ մի քանի վայրկեան մենք անկարող եղանք հեռացնել իրարից մեր հայեացքները: Մեզանից իւրաքանչիւրն աշխատում էր հասկանալ, թէ ի՞նչ է մտածում իր հակառակորդը այդ րոպէին: Ոչ մի կասկած չկար, որ երկսիս գանգերի մէջ եռացող մտքերն էլ միմեանց *վերաբերմամբ ահաւոր էին: Այդ մենք հաս*կանում էինք, կարդում էինք իրար աչքերում փոխադարձաբար. չէ՞ որ աչքերը մտքի ակամայ դաւաճաններն են: Ես հասկացայ, որ այդ գազանը օձի անակնկալ յաղթանակով կատաղած, որոշել է ինձ սպանել: Այդ ես շատ լաւ կարդացի նրա աչ-

Անապատի վերածեցիք անվրդով:
Այսքան աւեր թէ ներեն ձեզ մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք...
«Դիակների վիշտը լացի ու ցաւեր...
Քանի՛ դարեր լոկ ողբ ու սուգ ենք ասում.
Այժմ անէ՛ծք դահիճներին մարդակեր,
Վրէ՛ժ միայն, լոկ վրէժ եմ պահանջում...
Այսքան արցունք թէ մոռանան մեր...

- Հա՛յր...

Մի փոքրիկ մանուկ էր, որ խաւար անկիւնից դուրս թռաւ եւ փաթաթուեց ծերի պարանոցով:

Որդի՞ն էր...

- Ձաւա՛կս:

- Հա՛յր, հա՛յր...

- Կրա՛կ, որոտաց բէգը, եւ նոյն վայրկենին տասնեակ հրացանների որոտը խեղդեց մանկան աղաղակը. նրանց փողերից դուրս վիժած բոցերը մի վայրկեան լուսաւորեցին փողոցի թանձր խաւարը, եւ հայր ու որդի իրար գրկած թաւալեցին իրենց արեան մէջ:

Նրանց շրթունքները դողդողում էին եւ կարծես դեռ մրմնջում էին.

«Այսքան արիւն թէ ձեզ ներեն մեր որդիք,

Թո՛ղ ողջ աշխարհք հային կարդայ նախատինք»...

1899 թ.

ԿՌՈՒԻ ԴԱՇՏՈՒՄ

Նա էլ ընկաւ:

Կռիւն անողոք էր: Հազարաւոր մարտիրոսներ-ի աղաղակող վրէժն էր խօսում հայդուկների հրացանների փողերով, որոնց որոտը ինչ որ կենդանի, խօսուն բան ունէր իր խրոխտ արձագանգների մէջ-գայրոյթի մի շեշտ, բողոքի մի հնչիւն: Խաւարն ակօսող բոցերը ձգւում էին առաջ, դէպի թշնամին, ինչպէս զայրացած օձեր, վայրկենաբար լուսաւորում էին մի յանդուգն ու մռայլ դէմք, ապա մարում մի թշնամու կեանքի հետ: Ի՞նչ էր կատարւում խաւարի մէջ, այդ դժուար էր իմանալ. պարզ էր միայն, որ երկու կողմից էլ կռուողները ընկնում էին-քրդերը անէծքով ու ոռնոցով, իսկ հայդուկները՝ լուռ ու հպարտ, եւ կռուի դաշտը մի մահասարսուռ ճշտութեամբ կրկնում էր հրացանների որոտները, կարծես այդ ձայները նախկին նահատակներին հաղորդելու խորհրդաւոր պարտքն էր յանձն առել նաեւ:

Նա էլ ընկաւ, մենա՜կ, հեռաւոր սարալանջին վրայ, եւ միմայն երկինքը տեսաւ, թէ ինչպէս ընկաւ այդ անվեհեր տղամարդը, որ կռուի բոլոր

ժամանակ վազում էր առաջ եւ կարծես բոլոր ընկերներին անծանօթ, ամենքին անյայտ մի բան էր փնտռում հենց թշնամիների շարքերում: Ի զուր անցան ընկերների յորդորները, խրատները ու աղաչանքը նրան յետ պահելու համար, ի զուր անցաւ նաեւ խմբապետի հրամանը. նա գնում էր առաջ անընդհատ եւ նրա հրացանի պայթիւնը լսւում էր միշտ թշնամիների առաջին շարքերի մօտ, ուր նա մահ էր սփռում, առանց մահ գտնելու:

Վերջապէս նա էլ ընկաւ եւ փակեց աչքերը մի երանաւէտ անյուշութեան մէջ, որ տալիս էր մարդուս նուիրական գործի գիտակցութիւնը եւ դառն իրականութեան յաւիտենական մոռացումը: Երկար մնաց նա այսպէս եւ երբ աչքերը բացեց, էլ չէր յիշում, թէ ինքն ո՞ւր է եւ նոյնիսկ ի՞նչ է ինքը: Գլխի փոխարէն նա մի ծանր ժայռի կտոր ունէր, ուր մարել էին բոլոր յուշերը եւ ուր իշխում էր այժմ անցեալի, ներկայի, գուցէ եւ մօտաւոր յաւիտենականի մի զարմանալի ժխոր. միայն չռած աչքերը դեռ նայում էին վեր, նայում էին առանց տեսնելու. միտքն անկարող էր այլեւս արտաքին տպաւորութիւններից պատկերների ամբողջութիւն կազմել: Կուրծքն էլ էր ծանր. այնտեղ սառն արծիճի մի գունտ կար դրած կարծես, որ անընդհատ ճնշում, ճնշում էր հազիւ թրթռացող արիւնոտ սիրտը: Երկար մնաց նա այդպէս անշարժ՝ դէպի վեր, դէպի անհունութիւնը նայելով, ուր երկինքը գունատ, պաղ ցոլքերով թարթում էր իր անգիտակից աստղային աչքերը, ճիշդ ինչպէս

մահամերձ վիրաւորի սառած աչքեր. եւ ոչ մէկը միւսին չէր հասկանում:

Ժամեր անցան: Լուսաստղը բարձրացաւ լերան թիկունքից եւ առաջանում էր կոյսի մեղմ, երկչոտ, բայց գրաւիչ ընթացքով. ծիր խաւարմանը գունատուեց, աղօտացաւ եւ միւս աստղախմբերը կամաց-կամաց կախուեցին դէպի արեւմուտք: Նայում էր վիրաւորն այս բոլորին եւ չէր տեսնում: Հեռո՛ւ, հեռո՛ւ, լերան միւս կողմից, լսուեց մի փողի ձայն, որ տխուր, յուզիչ ոլորներով տարածուեց լուռ դաշտին վրայ եւ կարծես խօսում էր արիւնաթաթախ դիակների ականջին: Այստեղ՝ սարալանջի վիրաւորին էլ հասաւ այդ ձայնը, նա էլ լսեց... եւ յանկարծ, ինչպէս մի մոռացուած երազ, հի՜ն օրերի աղօտ յիշողութիւն, մի բան զարթեց նրա գլխում, մտքի խաւարի վրայ լուսոյ մի շող ցոլաց: Փողը շարունակում էր հնչուել եւ նա ականջ էր դնում... ապա կամացուկ շարժեց կրծքի վրայ ընկած ձեռքը եւ հանդարտութեամբ տրորեց աչքերը. նա այժմ ականջ էր դնում, ջանք էր անում հասկանալ թէ ի՞նչ է այդ ձայնը, ո՞ւր է ինքը. փողը շարունակում էր հնչուել աւելի եւ աւելի ուժգին. նա նորից տրորեց աչքերը... նայեց... Այժմ հասկանում էր... Այդ ձայնը նրան ծանօթ էր, լսել էր առաջ, մարտադուլի հրաւէրն էր, կռիւը վերջացել էր, կանչում էին ընկերներին, մոլորուածներին, կանչում էին նոյնիսկ վիրաւորներին, եթէ այդ հնար էր: Կամաց-կամաց նա յիշեց բոլորը, յիշեց կատաղի կռիւը, կո-

տորածը. յիշեց, որ ինքը շարունակ մենակ առաջ էր վազում. յիշեց, որ վերջին անգամ այստեղ, լեռնալանջի վրայ, մուրճի պէս մի բան դիպաւ իր կրծքին եւ ինքը վար ընկաւ անզգայ: Նա հասկացաւ, որ վիրաւոր է, ծանր վիրաւոր, եւ մենակ ձգուած դաշտում. զգաց, որ հրացանը պինդ սղմել է կրծքին եւ իր ամբողջ մարմինը լողում է գաղջ, լպրծուն հեղուկի մէջ, որ հոսում էր վէրքից. դանդաղ, արիւնաքամ մահը մօտենում էր: Նա փորձեց շարժուել, բարձրանալ, վիրաւոր թռչնի պէս ցնցուեց, բայց ի զուր-գլուխը ծանր էր, կուրծքը ճնշւում էր, իսկ թիկունքը մրսում էր արեան մէջ ճապաղած:

«Ինչո՞ւ վեր կենալ, մտածեց նա, մէկ չէ՞, այստեղ՝ այսօր, կամ մի ուրիշ օր՝ մի այլ դաշտում»... Ապա հանդարտ ձգուեց իր տեղում սպասելով անխուսափելի ճակատագրին, որ գալիս էր մահու կերպարանքով: Այժմ վերջին անգամ մէկիկ մէկիկ դառնում էին նրա գլխում իր անցեալի յուշերը, երիտասարդ կեանքի հազար ու մի յեղյեղումները: Կամաց-կամաց հին պատկերները բոլորն ալ աղօտացան, կորան եւ մնաց մի կոյսի չքնաղ պատկեր, որ իր բոլոր գրաւչութեամբ կանգնեց նրա առաջ: Այդ նրա սէրն էր, իր միակ եւ անբիծ սէրը: Այդ սիրոյ վերյուշը ամենից քաղցր էր, եւ նա աշխատում էր էլի մի քանի վայրկեան պահել իր թուլացած յիշողութեան մէջ այդ աղօտ, եթերային պատկերը, որ կարծես մօտ էր միւսներին հետեւելու, մօտ էր հեռանալու,

կորչելու խաւարի մէջ ընդմիշտ, յաւիտեան: Նա շտապում էր վերջին անգամ վայելել կեանքը անցեալի յուշերի աշխարհում, երազների պարգեւած վաղանցուկ երանութեան մէջ: Դա մի վսեմ վայելք էր, որ նա իրաւունք էր համարում ճաշակել, վատաբախտ հայրենիքի փրկութեան սեղանի վրայ՝ զոհերից վեհագոյնը, կեանքի զոհը, բերելուց յետոյ:

Բախտը, կոյր պատահականութիւնը չէր, որ նրանց միեւնոյն ճանապարհի վրայ դրեց, այլ թշուառ ազգի ցաւերի խորին գիտակցութիւնը եւ այդ ցաւերն ամոքելու առաքինի վճռականութիւնը: Գունատ, փոքրահասակ աղջիկ էր նա. չգիտես, ինչ մի անհանգիստ, բոցոտ բան ունէր իր հոգու մէջ, որ անկարող է կրել նրա թոյլ, նեղ կուրծքը, որ մղում էր այդ թուլակազմ կանացի մարմինը հեռու իր ծննդավայրից, հեռու կեանքի հեշտութիւններից դէպի մի փշոտ ապագայ եւ ծանօթ հոգիների առաջ զեղուում, դուրս էր թափւում կրակոտ բառերով: Այն խղճուկ, հիւանդ կրծքում մի ամբողջ ժողովուրդ էր ապրում իր ցաւերով, իր անլուր տառապանքներով:

Միւսը՝ - ժողովրդի զաւակ, դեռ այն տարիքում, երբ վայելքները, կեանքի քաղցրութիւնները պաշարում, շշմեցնում են երիտասարդ գլուխները, երբ կեանքը վարդ եւ ցաւը՝ ցնորք է թւում: Եւ սակայն նա ծնուած չէր երիտասարդական վայելքների համար. վաղ կնճռուեց նրա բաց, ազնիւ ճակատը հայրենիքի աղէտներով, շատ վաղ հաս-

կացաւ մեծ զոհի խորհուրդը եւ գնաց այնտեղ, ուր տանում էին նրան անհանգիստ սրտի նուիրական մղումները: Այնպէս պատահեցին նրանք իրար: Եւ առաջին իսկ վայրկեանից հին ծանօթներ էին, հոգիների նմանութիւն կար. երկուսի մէջ էլ ապրում էր տանջուած ժողովուրդը, երկուսն էլ ողողուած էին խեղճերի արցունքով, երկուսն էլ ապրում էին միեւնոյն ցաւերի կսկիծով: Տեսան եւ սիրեցին իրար, ամէն մէկը միւսի մէջ սիրեց իր վիրաւոր, արիւնաքամ հայրենիքը, իր փայփայած իդէալները, սիրեց մեծ ցաւը:

Վիրաւորն այժմ յիշում էր... Կարճ եղաւ այդ սէրը եւ ինչպէս մի լուսաւոր մոլորակ անցաւ նրան մռայլ հորիզոնով: Արշաւանքից մի քանի օր առաջ էր, մի աստղազարդ գիշեր նրանք անցկացրին մի քանի ժամ մենաւոր ուռենու սաղարթների տակ: Գլուխ գլխի տուած՝ նրանք խօսում էին կեանքից ու վայելքից. նրանց ձայների մեղմ հնչիւնները խաւարի եւ առանձնութեան մէջ գուրգուրիչ էին, տաք, անհանգիստ շնչերը խառնւում էին իրար, եւ ձեռքերի հպումը ախորժ դողով ցնցում էր կենսալից, երիտասարդ մարմինները: Երազ էր եւ երազներից ամենից գրաւիչը, որ նրանց օրօրում էր իր խաբուսիկ, բայց քաղցր մոռացութեան մէջ:

- Լսի՛ր, հոգիս, ասաց երիտասարդը, ինչո՞ւ մենք էլ չենք կարող ընդմիշտ միասին լինել, մինչեւ յաւիտեան, եւ սիրոյ երջանկութեան մէջ կեանքը վայելել. ինչո՞ւ...

Ձայնը վշտի շեշտ ունէր, երիտասարդ կեանքն էր խօսում:

- Ընկե՛ր, դեռ շատ եւ շատ այսպիսի սէրեր պիտի զոհ բերուեն աւելի մեծ սիրուն, պիտի կուլ գնան մեծ չարիքի անդունդը լեցնելու համար, եւ այն ժամանակ միայն թո՛ղ սիրեն ուրիշները. իսկ մեզ, հոգի, վիճակուած է սիրել նրանց սէրը. այդ է մեր երջանկութիւնը, եւ առաջիկայ արշաւանքը հենց դրա համար է:

Արշաւանքը... հա՛, արշաւանքը, մռմռաց երիտասարդը քնից արթնցածի պէս, բայց խօմ մարդ անպատճառ չի մեռնում արշաւանքում. արշաւանքից յետոյ...

Նա չկարողացաւ աւարտել խօսքը. վերեւում ծառի սաղարթների մէջ, մի ճնճղկան օրհասական ծվծվոցը լսուեց, որով նա օգնութիւն էր աղաղակում իր դահիճի ճանկերի մէջ: Բայց ո՞վ պիտի տար օգնութիւնը. թառած թռչունները լուռ էին, կծկուած, եւ այդ մի հատիկ ճիչը կորչում էր խաւարի եւ լռութեան մէջ: Կամաց-կամաց զոհի ծվծվոցը մեղմացաւ, թփրտոցը դադարեց, եւ մի քանի խղճուկ փետուրներ մեղմով ընկան երկու սիրահարների գլխին: Մի առժամանակ նրանք լուռ էին:

- Այսպէս են անում այնտեղ, ասաց աղջիկը:

- Այո՛... այսպէս են անում... մռմռաց երիտասարդը: Երազը, երջանկութեան ցնորքը ցնդուեց, մնաց դառն, խեղդող իրականութիւնը եւ նրա հետ այնուամենայնիւ մի քաղցր յիշատակ՝ վայրկենական, անխառն, որ անցաւ սարալանջին վի-

ռաւորի գլխով եւ երջանկութեա՞ն թէ ցաւի արցունքի երկու խեղճ կաթիլներ ցայտեցին նրա աչքերից:

Պատկերները փոխուեցին: Գիշեր էր. մի ժամից յետոյ ճանապարհ պիտի ընկնէին. խումբը բաժանւում էր տասնեակների, յիսնեակների, հարիւրեակների. հայդուկները զննում, փորձում էին հրացանները, պնդացնում ոտնամանների կապերը, մէջքերի կապոցները: Երիտասարդն ի զուր էր փնտռում բարի երթ մաղթողների մէջ նրան, որին գուցէ այլեւս երբեք տեսնելու չէր: Նա զարմացաւ եւ անհանգիստ հոգով ինքը գնաց վերջին մնաս բարեաւն ասելու: Դրան առաջ նա կանգ առաւ, կարծես վախենում էր ներս մտնել. տխուր նախազգացումը ճնշում էր նրա սիրտը եւ նա մի վայրկեան ականջ դրեց... Ձայն չկար. քնա՞ծ է արդեօք... Դուռը սղմեց, բաց էր... ներս մտաւ եւ քար կտրեց... Սիրած աղջիկը ձգուած էր անկողնի վրայ անկենդան մի ձեռքում ջղաձգաբար սղմած փոքրիկ ատրճանակը եւ միւս ձեռքը անկողնից թոյլ-թոյլ ցած էր կախուել. քունքի վրայ բացուած վէրքը պարզում էր ամէն բան: Նա վերջ էր տուել իր կեանքին... Բայց ինչո՞ւ... Երիտասարդը շուրջը նայեց. սեղանի վրայ փոքրիկ լապտերի առաջ մի բաց նամակ կար ուղղուած իրեն:

«Սիրելի՛ս, գրում էր նա, արիւնովս եմ գրում այս տողերը. մի քանի ժամից յետոյ դու անշուշտ մեկնելուց առաջ ինձ տեսնելու կը գաս, մնաս բարեաւ ասելու, եւ այն ժամանակ ինձ այլեւս

կենդանի չես գտնիլ: Մի՛ անիծիր ինձ հոգիս, ես քեզ սիրեցի այնպէս, ինչպէս երբեք մի կին չէ սիրել մի տղամարդի, որովհետեւ դու սիրում էիր մեր վատաբախտ հայրենիքն այնպէս, ինչպէս գուցէ ոչ ոք: Յիշի՛ր սակայն անցեալ օրը մենաւոր ուռենու տակ քո արտասանած վշտոտ խօսքերը՝ «Ինչո՞ւ մենք էլ չենք կարող ընդմիշտ միասին լինել»... Խոստովանիր, որ դու կարծես ցաւում էիր մեր անջատման համար, ցաւում էիր, որ գուցէ մահը յաւիտեան խլի մեզ իրարից: Թուլասրտութիւնը, վատութիւնը չէր, որ քո մէջ խօսեց - օ՛, ո՛չ, հազար անգամ ո՛չ - այլ երիտասարդ կեանքը, նա, որ իր իրաւունքներն ունի եւ երբեմն ուժեղ հոգիներում անգամ վսեմ պարտքի գիտակցութիւնը կարող է թուլացնել:

«Սիրելի՛ս, հայրենիքի փրկութեան համար մղուած նուիրական կռւում, գուցէ դու, յիշելով ինձ, մի վայրկեան թուլանայիր. գուցէ խնայէիր կեանքդ ինձ համար, մեր ապագայ երջանիկ կեանքի համար եւ կամ գուցէ յետ-յետ նայէիր եւ մէջքիդ գնդակ ընդունէիր, կամ հայրենիքի սէրը ստորադասէիր իմ սիրուն, մոռանայիր այնքան արիւնն ու արցունքը, այն ծով ցաւերը, որոնք մեր սրտերը միացրին, մեր բուռն սիրոյ նուիրական շղթան կազմեցին: Իմ անզուգական ընկե՛ր, մի՛ մեղադրեր ինձ. ես չէի կարող այդքան ծանր ոճիր բարդել իմ խղճի վրայ, իմ գոյութիւնն այնքան յանցաւոր դարձնել: Այդ բեռը կը խեղդէր ինձ, ես չկամեցայ անտէր, հեծեծող ժողովրդից խլել մի

օգնող ձեռք, չկամեցայ խլել նրանից մի մեծ սիրտ, որ ծնուած է նրա ծոցից, հետեւապէս նրա համար պիտի բաբախի եւ ո՛չ մի կնոջ: Ի՞նչ ասել է մի կին, երբ հարիւր հազարաւոր անարգուած կանայք ամէն օր արիւն-արցունք են թափում: Օ՜, մեր այս սեւ օրերում, տառապանքի այս արիւնոտ շրջանում ոճրագործ է այն կինը, որ մի տղամարդ կը խորթացնի ապաբախտ հայրենիքից, թշուառ ժողովրդից: Այդ ոճիրը ես չկամեցայ գործել մի՛ անիծիր ինձ, հոգի՛ս:

«Ես վերջ տուի իմ կեանքին քո ձեռքն ու սիրտն ազատ թողնելու համար: Ո՞վ գիտէ, գուցէ դա միակ ծառայութիւնն է, որ ես կարող եմ մատուցանել իմ դժբախտ ազգին: Քո սիրուն միայն այսպէս կարծեցի արժանի լինել. այլապէս մի օր, երբ կ՚իմանայիր, որ ընկերներդ մէկիկ-մէկիկ ընկել են սրբազան կռուի դաշտերում եւ դու դեռ ապրում ես մի կնոջ համար, ո՞վ գիտէ, գուցէ ամօթով ծածկուէր ճակատդ, գուցէ եւ անիծէիր ինձ...

«Այսպէս, գնաս բարեաւ... Յիշի՛ր որ ես այլեւս չկամ, կայ միայն հայրենիքն իր բիւր ցաւերով, իր ծով արցունքով:

- Գնա՛ս բարեա՛ւ»...

Նա ծալեց նամակը, դրեց ծոցում, վերցրեց լապտերը, մօտեցաւ դիակին եւ երկա՛ր-երկա՛ր նայում էր այդ գունատ դէմքին, այդ սիրուն կուսական ճակատին, ուր արիւն ու թաւ խոպոպները սեւ ու կարմիր պսակ էին կազմել: Ապա կռացաւ, մի երկար համբոյր դրոշմեց նրա սառած

շրթունքներին եւ դուրս գնաց:

Եւ այժմ նա ընկաւ կռուի դաշտում այնպէս, ինչպէս կը կամենար իր սիրած աղջիկը, որի պատկերը կանգնած էր նրա առաջ եւ կամաց-կամաց հեռանում, մաշւում, եթերանում էր եւ մօտ էր չքանալու: Վիրաւորն ի զուր էր աշխատում բռնել, պահել այդ դիւթիչ պատկերը. նա աղօտանում, փախչում էր... Դարձեալ մի քանի րոպէներ անցան, սիրած պատկերն ի սպառ չքացաւ, եւ նրա աչքերը մեղմութեամբ փակուեցին:

Եւ վերջին անգամ սարի միւս կողմից փողը կանչում էր ընկերներին, մոլորուածներին, վիրաւորներին, բայց ձայնն այլեւս անկարող էր զարթեցնել սարալանջին վրայ մենակ պառկած երիտասարդին... Նրա տխուր ելեւէջները տարածւում էին մռայլ դաշտի վրայ եւ հնչում էին որպէս օրօր հայրենիքի փրկութեան նահատակին, որ քնեց յաւիտեան:

1900 թ.

ՏԻՐԱՑՈՒ ԳՐԻԳՈՐԸ

Նա գիւղի գիտունն էր, գրբացը, երազ մեկնողը, տենդ կտրողը: Քանի՞ տարի էր, հաստափոր գրքերի, ոլորուն համայիլների զարմանալի խորհրդանշանների վրայ մազերն սպիտակել էին: Մի ամբողջ փառաւոր անցեալ ունէր տիրացու Գրիգորը, որ պատկառանք էր ազդում գիւղացիներին: Նա այդ զգում էր եւ գոհ էր իր վիճակից: Սակայն այս չէր բոլորը: Նա սրանից դուրս երկու ուրիշ վայելք ու փառք եւս ունէր: Նա սաստիկ սիրում էր իր որսը եւ իր ժամը, եւ երկուսն էլ ծառայում էին նրա փառքի աճմանը: Եւ այդ փառքն իր գագաթնակէտին էր հասնում մանաւանդ շաբաթ օրերը: Այդ օրերը նա առաւօտից ճանապարհ էր ընկնում դէպի լեռները, մէկ-մէկ նայում էր իր դրած թակարդները, եւ բախտը շատ յաճախ էր ժպտում նրան նաեւ այս ասպարիզում. երեկոյեան նա վերադառնում էր աղուէսի մորթին ուսը ձգած՝ հպարտ եւ յաղթական: Այդպիսի երեկոները նա առանձին եռանդով էր երգում եկեղեցում «Լոյս զուարթը», իսկ երբ հասնում էր վերջի «Կեցոն», տիրացուն իր կլկլացող

գիլ ձայնի հետ ասես թեւ առած՝ երկինք էր բարձրանում: Ժամաւորների հոգին փառաւորում էր:

- Ձայնդ անսպա՛ռ. ծնունդդ օրհնուի՛, տիրացու,- կրկնում էին յետեւից ժամւորները՝ հիացած նրա ձայնով:

Քառասուն տարի էր, ինչ տեւում էր տիրացու Գրիգորը այս հազուագիւտ երջանկութիւնը. բախտը դեռ նրան խէթ էր նայել, եւ նա դեռ ոչ մի կիրակնամուտ եկեղեցուց չէր բացակայել, Քառասուն տարի էր, որ բախտաւոր տիրացուն ապրում էր անդարդ ու անցաւ. ժամում «Կեցոն» ու «Լոյս զուարթն» ունէր, դաշտում՝ աղուէսն ու գայլը, եւ դժուար էր իմանալ, թէ տիրացուն ո՞րն է աւելի սիրում-ո՞րսը թէ ժամը. «Կեցո՞ն» թէ աղուէսը:

Նա այնպէս բարձրահասակ էր, որ գիւղացիք անունը դրել էին «Յակոբ նահապետի սանդուխք»: Տիրացուն սիրում էր այդ անունը, նրանով էլ էր հպարտ- սուրբ բանն էր: Բայց իր հասակից աւելի նա հպարտ էր նախ իր կապայով եւ ապա մազերով եւ միրուքով: Իրաւունք էլ ունէր. շալէ սիրուն կապան մինչեւ ծնկերն էր իջնում եւ աւելի երկար ցոյց տալիս առանց այն էլ երկար հասակը: Թաւ, ալեխառն միրուքը իջնում էր մինչեւ գօտին եւ ծածկում նրա ամբողջ կուրծքը, իսկ ճերմակ մազերը ոլոր-մոլոր փռւում էին ուսերին, եւ երբ նա ոգեւորւում էր երգելիս եւ ցնցում էր գլուխը, հիացքով էր զգում, թէ ինչպէս ոլորուն խոպոպները հովհարում են իր երկար պարանո-

ցը: Այդ ժամանակ ծեր տիրացուն հիանալի էր. նա կարծես կերպարանափոխւում, սրբանում էր ժամաւորների աչքին: Եւ երջանիկ էր նա:

Բայց ո՞վ կարող է կարդալ մարդկային ճակատագիրը:

Այն երեկոյ տիրացու Գրիգորը ժամում չէր:

Տէրտէրը մենակ քաղեց աղօթքն ու շարականները եւ վերջում՝ բարձրացնելով աւետարանը, ինքն իր ծեր, խռպոտ ձայնով ասաց «Կեցոն»: Քառասուն տարուց ի վեր այս առաջին անգամ էր պատահում. այս առաջին կիրակնամուտ երեկոն էր, որ տիրացու Գրիգորի զիլ ձայնը չէր լսւում դասից. այս առաջին անգամն էր, որ մոմերի եւ ձիթավառ կանթեղի աղօտ լոյսով չէր գծագրւում նրա երկար հասակը սեղանի առաջ, որ ժամաւորները չէին տեսնում նրա երկար միրուքն եւ ուսերին թափուած մազերը, այդ պատկառելի գիտուն գլուխը, որ այնքան խոր-խոր բաներ գիտէր:

Դասը դատարկ էր, ժամը՝ տխուր, աղօթքն՝ անհամ: Ժամաւորները ապշել էին: Նրանք նոյնիսկ ակարող եղան զարմանքի արտայայտութիւնը զսպել մինչեւ ժամասացութեան աւարտելը: Հե՞շտ բան էր - տիրացու Գրիգորն էր պակաս. շատերն՝ աղօթքն ընդհատելով՝ իրար նայեցին հարցական եղանակով, իսկ կանանց բաժնում ի քանի չարսաւաւոր գլուխներ իրար մօտեցան, փսփսացին եւ տիրացուի անունը տուին:

Ո՞ւր էր տիրացու Գրիգորը: Այս հարցը ամէնքը տուին իրար եկեղեցու բակում, եւ երբ քահանան

դուրս եկաւ, նրան շրջապատեցին ու նոյն հարցը կրկնեցին: Տերտէրն էլ չգիտէր: Լաւ նշան չէր դա: Անհանգստութեան նման մի բան, որ շատ մօտ էր երկիւղի, անցաւ բոլորի դէմքով: Հասկանալի էր. այդ երկրում պէտք է ամէն բան իր տեղումը լինի, որ սարսափելի չլինի. ինչ որ փոխուեց, ինչ որ սովորականից դուրս եկաւ, տակից չարիք կը ծնի: Տիրացու Գրիգորը պէտք էր ժամում լինէր, ժամում չէ, ուրեմն սեւ բան կայ, նոյնիսկ շատ սեւ:

Ո՞ւր է տիրացու Գրիգորը:

Ո՞վ գիտէ ուր. աշխարհը նե՞ղ է, մի տեղ կը լինի է՛լի. երեւի կը գայ, մարդ է, բան է պատահել:

- Չէ՛, մտածում էր գիւղը, տիրացու Գրիգորը միայն ժամում պիտի լինէր. այնտեղ չէ, Աստուած խէրն անի, մտածելն էր սարսափելի է... առաւօտից գնացել էր լեռները եւ դեռ չէր եկել...

Մութն ընկաւ, սեւ հոգեմաշ խաւարն իջաւ, բայց տիրացու Գրիգորը չկար ու չկար:

Մի քանի հոգի գիւղից դուրս եկան, մի փոքր հեռացան, փնտռեցին. ձայն տուին, «տիրացո՛ւ» կանչեցին... Ձայների արձագանգները լաւ չէին խաւարում, գիշերը՝ չար, սարերը՝ սեւ, հարամին՝ շատ, սարսափն՝ ահագին. ո՞վ սիրտ կ՛անէր շատ առաջ գնալ: Մարդիկ յետ դարձան տիրացուի բախտն Աստծուն յանձնելով, որ լուսաբացին նորից դուրս գնան փնտռելու:

Դռները շտապ-շտապ փակուեցին. գիւղը կծկուեց, լռեց: Դուրսը մնաց մահին, սարսափին: Հազար բնից, հազար ծակից չարիքը դուրս սո-

ղաց: Վա՜յ նրան, ով դուրսն է: Սե՜ւ աշխարհ, վերա՜ն երկիր, քո բախտն ո՞վ կապեր այսքան ցաւի հետ...

***

Ո՞ւր էր տիրացու Գրիգորը այդ չար ժամին:

Այն օրը՝ մէկիկ-մէկիկ, ըստ սովորականին, թակարդներն այցելելուց յետոյ, երեկոյեան տիրացու Գրիգորը մի կենդանի աղուէս բռնեց, սիրուն աղուէս, հազուագիւտ մորթով, որ սեւին էր տալիս: Տիրացուն նայեց գազանի պլստուն աչքերին, որ իրան էին յառած, եւ ժպտաց, ապա նոյնիսկ բարձրաձայն ծիծաղեց, յետոյ յիշեց, թէ այդ երեկոյ ինչպէս կը զլի «Կեցոն»:

Ի՜նչ լաւ է կեանքը, ինչո՞ւ այդքան լաւ է...

«Դու գրիր՝ ինչ ուզում ես, տես «Փալագն» ինչ է գրո՛ւմ»:

Տիրացուն նոյն ախորժ տրամադրութեամբ, նոյն ժպիտը երեսին՝ կապեց աղուէսը, կրկին տեղաւորեց թակարդը եւ պատրաստւում էր ճանապարհ ընկնել իր փառաւոր աւարով: Պէտք էր շուտ գնալ, ժամին հասնել: Գիւղը դեռ հեռու էր, բայց վնաս չունի, տիրացու Գրիգորը ոտներ ունէր էէ՛, երկա՛յն, քայլերը մե՛ծ-մե՛ծ: Իր սովորականի համեմատ՝ նա սկսեց երգել Նարեկացու «Ի գիլ գայր, սայլիկին ի գիլ»: Գարնանային օրը սիրուն էր արեւի թեք ճառագայթները լուսաւորում էին շրջակայքը, ուր ամէն ինչ ժպտում էր ոսկեգոյն շողերի տակ: Այդ ժամին սիրուն էր ե՛ւ սեւա-

թոյր աղուէսը:

Ի՜նչ լաւ է կեանքը, ինչո՞ւ այդքան լա՛ւ է...

Հազիւ մի քանի քայլ հեռացած թակարդից, յետեւից ոտնաձայն լսուեց: Տիրացուն յետ նայեց- երկու զափթիա:

Ժամը չար է. մտածեց տիրացուն, Աստուած խէրն անի:

***

Այո՛, ժամը չար էր: Տիրացուի կոկորդում սառեց նրա երգը եւ այն՝ ոչ մէկէն, այլ ինչպէս մի ձեռք յանկարծ մի քանի խճեր ձգեց նրա կոկորդը: Նա խռխռաց եւ լռեց խեղդուածի պէս:

Չար ժամին երգել կը լինի՞:

Բայց զափթիաները երեւի այդպէս չէին մտածում, որովհետեւ նրանք հռ-հռ ծիծաղեցին այդ մեռնող երգի վերջին խռպոտ հնչիւնների վրայ:

Ժամը չար էր: Նրանք պահանջեցին ուղուէսը. տիրացուն տուեց ամենայն հնազանդութեամբ եւ մինչեւ անգամ փորձեց ժպտալ, ինչպէս ժպտում է հոգեվարք մարդը մահուան ստուերը տեսնելիս:

- Դէ՛հ, գնա՛, գեավուր:

«Գեավուրը» գնաց, այս անգամ իրօք ժպտաց, զարմանալով, որ բանն այսպէս վերջացաւ:

Իրաւունք էլ ունէր զարմանալու:

- Կա՛ց, կա՛ց, կանչեցին նրան:

Տիրացուն կանգ առաւ եւ ժպտաց:-

- Կապա՛դ էլ հանիր:

Տիրացուն հանեց կապան, նաեւ արխալուղը:

- Արխալուղդ ինչո՞ւ հանեցիր, գեավուր:

- Մեր աւետարանն ասել է. երբ կապադ պահանջեն, արխալուղդդ էլ տուր:

- Հալեւուրը դիպած է, ասաց մի զափթիա, եւ *նրանք հռ-հռ ծիծաղեցին: Սրանից լաւ գիւտ լինել* չէր կարող. այս կիսախելագար ծերունին նրանց լաւ կարող էր զուարճացնել:

- Հալեւոր, որ այդպէս է, շապիկդ ինչո՞ւ չհանցիր: Տիրացուն շապիկն էլ հանեց եւ մնաց մերկ:

Մօտ վաթսուն տարեկան բարձրահասակ այդ ծերունին կանգնած էր այժմ մերկ եւ դողդողում էր: Ալեխառն միրուքը լայն կրծքին փռուած, իսկ երկայն մազերը հուժկու ուսերին ցաք ու ցրիւ՝ տալիս էին այդ մերկ մարդուն վերջին աստիճանի յուզիչ տեսք: Անարգուած ծերութիւնն էր այն, որ դողում էր դահիճների առաջ, դողում էր երկիւղից, ամօթից, դողում էր նաեւ ցրտից, որովհետեւ երեկոյեան առաջին մառախուղի հետ լեռնային հովը փչում էր հա՛ փչում, ցրիւ էր բերում ծերունու միրուքը, խաղում էր նրա մազերի հետեւ սառռեցնում նրա թաւոտ մարմինը:

Եւ այս պատկերը զուարճացնում էր զափթիաներին: Նրանք նայում էին եւ ծիծաղում: Ապա յանկարծ լռեցին եւ մտածկոտ դարձան: Յետոյ մի փոքր փսփսացին եւ իրար հետ անցան թակարդին:

- Էս թակարդի՞ց բռնեցիր աղուէսը:

- Էս թակարդից, էֆէնտիներ:

առանձնանում, խօսում, խօսում, փսփսում: Ի՞նչ էի խօսում այնքան,- ինքը կարո՞ղ է՞ր իմանալ: Դէ՛, ընկերներ էին. ա՛խ, թէ իմանար... Գնացին, եկան, փսփսացին, գնացին, եկան, եւ մի գիշեր *անյայտացան: Ա՛խ, սեւ դառնար էն գիշերը:* Անխի՛ղճ, անխի՛ղճ մրմնջում էր պառաւն, այս անգամ խօսքն ուղղելով որդուն. Թորոսն օտարի որդի էր, չցաւեց, իսկ դո՞ւ... Թէ չմեղքացար քո ջրատար ծնողներին, խղճայիր գոնէ քո խեղճ ջահիլին, քո կնոջը, որին անտէր ձգեցիր: Օ՛, այնուհետեւ ինչե՛ր անցան իրենց սեւաւոր գլխով, ի՞նչ օրեր քաշեցին: Խեղճ հալւորին տաճիկները տարան, բերին, բանտ դրին, ծեծեցին, ծեծեցի՞ն, որ Մինասի տեղն ասի: Ա՛խ, ինչ անաստուած են այդ անօրէնները: Մեր ցաւը, մեր սեւ օրը մեզ բաւական չէր, սրանց գազանութիւնն էլ մի նոր պատիժ, նոր ցաւ դարձաւ: Կարծես թէ որ մենք իմանայինք մեր որդու տեղը, սար ու քար չէինք ընկընի, չէինք գտնի, չէինք բերի տուն: Տաճկի ինչ պէտք էր թէ մեր սրտից առանց այն էլ արիւն է գնում: Այնքան չարչարեցին խեղճ հալիւորին, մինչեւ անկողին ընկաւ եւ էլ չվերկացաւ: Հարսը՝ որ վաղուց էր հեռացել տնից, գնացել էր հէրանց, իր սեւ օրը ողբում. ի՞նչ անէր խեղճ ջահիլը, օրը մի անգամ անիրաւները դիտմամբ տուն էին թափւում, հարս պահել կը լինէ՞ր տանը: Եւ այժմ մենակ էր մնացել Մարթան:

Այս սեւ գիշերին, ամենցից մոռացուած, նա մտածում էր զարհուրելի անցեալի մասին. ներ-

լուսաւորելով սարսափից այլանդակուած նրա դէմքը: Նա ստիպուած երեսի վրայ ընկաւ թափով եւ սկսեց հողերի մէջ տրորել դէմքը՝ փոթոթող բոցերը մարելու համար: Բայց նոյն րոպէին ոճրածարաւ գազաններից մէկը սրով ծակեց նրա կողքը. երկրորդը նոյնն արեց, եւ սկսուեց մի զարհուրելի մարտիրոսութիւն...

Արեան տեսքը կարծես կրկնապատկեց դահիճների եռանդը: Մարդկային արիւնը, այդ տաք, կարմիր հեղուկը, հարբեցնում էր, կուշտ զուարճանալուց յետոյ՝ այժմ նրանք հեռու դաշտում սպանում էին մենակ, անտէր ձգուած ծերունուն դանդաղ, դժոխային մահով: Չոհն այդ զգաց: Նա գլորուեց գետնին, դարձեալ մի քանի թաւալ տուեց եւ երբ հասաւ լեռնային մի անդունդի շրթին, որ շատ հեռու չէր այնտեղից, ներքեւ գլորուեց իր վերջին թափով, մեռնելու կամ ապրելու յոյսով: Նա գլորւում էր, հա՛ գլորւում դէպի ձորի յատակը, իսկ վերեւից դահիճները հռ-հռ ծիծաղում էին արիւնաթաթաւ այդ մսակոյտի վրայ, որ քարերի մէջ մերթ երեւում էր, մերթ ծածկւում:

Նրան չհետեւեցին: Մութն ընկաւ. աստղերը մէկիկ-մէկիկ բաց արին իրենց աչքերը, վար նայեցին. տեսան մարդկային մսի այդ արիւնապատ զանգուածը եւ շարունակում էին թարթել նրա վրայ անհոգ ու անգիտակից: Երկինքը ե՞րբ է հետաքրքրուել, թէ ի՞նչ է կատարւում երկրի վրայ...

Որչափ ժամանակ ծերունին ուշագնած մնաց ձորում, այդ չգիտէր նա. միայն երբ աչքերը բա-

ցեց, դեռ աստղերը պլպլում էին երկնքում, դեռ խաւարն իջնում էր աշխարհի վրայ, դեռ իր շուրջը տիրում էր սարսափը: Ձեռները թակադրում կաշկանդուած, մարմինը վիրաւոր, ուժասպառ՝ վեր կենալը հեշտ չէր: Նա ոլորուեց, այս ու այն կողմ ընկաւ, յենուեց վիրաւոր արմուկներին եւ ոտքի կանգնեց: Այժմ պէտք էր քայլել: Ո՞րքան ճանապարհ կար. ե՞րբ կը հասնի, եւ կը հասնի՞ արդեօք:

Նա քայլում էր: Այդ արիւնաթաթաւ, ջարդուփշուր եղած մարմինը, խոցոտուած, ցաւերի բեռի տակ ընկճուած մարդը՝ քայլում էր խաւարում դէպի փրկութիւն, դէպի լոյս: Գիւղը դեռ հեռու էր, արեւելքը խաւար, արշայոյսը չկար ու չկար: Ե՞րբ կը հասնի:

Ծա՜տ քայլեց... եւ յանկարծ կանգ առաւ:

Մեղմ՝ ինչպէս մրմունջ վշտացած կոյսի, եւ տխուր ինչպէս հառաչանք զաւակները կորցրած մօր, հասնում էր նա ականջին գիւղի եկեղեցու զանգակի ձայնը, որ հրաւիրում էր մարդկանց դէպի երկինք ուղղելու իրենց գոհունակութիւնը Է՛լի մի գիշերուայ խաղաղութեան համար: Գիւղը հեռու չէր: Ծերունին սիրտ առաւ եւ քայլում էր ու քայլում...

Մռայլ հոգեհան խաւարում, խորդ ու բորտ, քարոտ ճանապարհով շարունակում էր քայլել տանջուած մարդը, քաշ տալով իր փշրուած ոսկորները, իր ծուիկ-ծուիկ եղած միսը եւ մտածում էր... Վաթսուն երկար տարիների խաղաղ կեան-

քի միակերպութիւնն այսօր անսպասելի եւ անողորմ կերպով աղմկուեց մի արիւնոտ փոթորկով. մի օրում, մի քանի ժամում ո՛րքան ապրեց վաթսուն գարուններ բոլորած այդ ալեզարդ գլուխը...

Նա քայլում էր եւ մտածում... Փորձը դառն էր, արիւնոտ, մտքերը՝ վշտոտ ու մռայլ:

Արիւնն ո՞վ կապեց փրկութեան հետ...

***

Այնտեղ, գիւղի փողոցներում, յայտնւում էին կռացած ծերեր, որոնք քայլում էին գաւազանով, չարսաւաւոր կանայք՝ որոնք անցնում էին ստուերների պէս, երեխաներ մեծ թէ փոքր,- ամէնքը, ամէնքը դիմում էին դէպի եկեղեցին: Զանգակը կանչում էր եւ իր ղօղանջիւնի հետ դէպի վեր պիտի տաներ բազմութեան հառաչանքներն ու աղօթքները:

Քանի՛ դարեր ղօղանջում է այդ զանգակը, քանի՛ դարեր տանջուած երկրից նա ձգւում է դէպի վեր:

Աղօթաւորները շատ էին եկեղեցում եւ ամէնքն աղօթում էին ծեր տիրացուի համար, որ դեռ չկար ու չկար: Ժամը դարձեալ տխուր էր, դասը դատարկ, ժամասացութիւնը անհամ. միայն աղթօքն էր այս անգամ վշտոտ ու սրտագին: Եւ քաղում էր քահանան առաւօտեան երկար մաղթանքները, եւ բազմութիւնն աղօթում էր լուռ, աղօթում էր աշխարհի համար, տիրացուի համար:

Քանի՛ դար է, ինչ աղօթում է այդ բազմութիւնը. քանի՛ դար է, նա սպասում է փրկարար ձայնին:

Եւ «սպասուած ձայնն» այսօր յանկարծ հնչուեց եկեղեցում.

- Աստուա՛ծ, երկի՛նք, եկեղեցի՛, տեսէ՛ք... Քառասուն տարուայ բարեպաշտութեանս վարձը ձեզ եմ բերում այսօր...

Ա՞յս է հատուցումը...

Բազմութիւնը մի վայրկեան իրար անցաւ այդ ձայնից, ապա սարսափած յետ յետ քաշուեց՝ բաց թողնելով մի փոքրիկ հրապարակ, ուր ցցուած էր մի մերկ մարդ, կամ աւելի շուտ՝ գերեզմանից դուրս փախած մի մեռել՝ սոսկալի տեսքով:

Տիրացո՛ւն էր... Նա՛ էր այդպէս խօսողը...

Բայց ո՞վ կարող էր հաւատալ: Մերկ մարմինը պատած էր արեան բոսորային շերտերով, որոնք անցնում էին զանազան ուղղութեամբ՝ նողկալի զարդ կազմելով այդ քրքրուած մսի վրայ: Երկու ձեռները դեռ թակարդի մէջ էին, որ նա բարձրացրել էր վեր, վեր, ուղղած դէպի սեղանը, բողոքաւոր շարժումով: Միրուքը կիսով չափ խանձուած ու այլանդակ, երեսի կաշին այրուած, քաշքշուած, մազերը ցաք ու ցրիւ փռուած ճակատին եւ ուսերին-նա սոսկալի էր: Մարդիկ յետ-յետ քաշուեցին, կանայք չարսաւով ծածկեցին դէմքերը, երեխաները սարսափով ծչացին, քահանան լռեց՝ քարացած:

- Սարսափելի՜ եմ, այնպէս չէ՞, շարունակեց տիրացուն: Այո՛, սարսափելի՜... թռուառնե՛ր. քառասուն տարուայ աղօթքի, շերտերն են, այս ջարդուած ոսկորները, այս քրքրուած միսս է, այս բազուկներիս վէրքերն են... Սարսափեցէ՛ք, խեղճ ողորմելինե՛ր, եւ թո՛ղ ձեզ հետ միասին դողան եւ սարսափեն եկեղեցին եւ Աստուած...

Շշկլուած բազմութեան միջից հազիւ մէկը վերջապէս մտածեց, որ այդ թշուառի ձեռները պէտք է դուրս հանել թակարդից: Դող անցաւ բազմութեան մարմնով ծերունու սոսկալի ճիչից, երբ նա երկու փշրուած բազուկները դուրս քաշեցին թակարդից:

- Ասին՝ «կապադ տուր», ես արխալուղս էլ տուի իրենց... չէ՞ որ քառասուն տարի այդ էր ասել ինձ Աւետարանը,- շարունակեց տիրացուն: Գլխիս մի հարուած տուին, ես երեսս էլ դէմ արի. այդ էլ Աւետարանն էր ասել: Յետոյ միրուքս կրակ տուին, յետոյ դանակով կաշիս էին խոցոտում... Աւետարանը չէր ասել, որ միսդ ծակծկեն, ցաւ չզգաս, ես էլ ցաւ զգացի, օ՜ ինչպիս՜ի ցաւ, քարից ձգեցի ինձ եւ փախայ զափթիաների ձեռքից...

Բազմութիւնը հասկացաւ, այժմ, թէ բանն ինչումն է: Ցաւերի աշխարհում շատ քիչ բան է հարկաւոր սարսափի մեծութիւնը չափելու համար- երբեմն մի բառ, մի ճիչ, մի հառաչանք միայն...

Մի գիւղացի հանեց իր վերարկուն եւ ձգեց տիրացուի վիրաւոր մարմնի վրայ:

- Դարձեա՞լ զգեստ, ինչո՞ւ է հարկաւոր, էլի կը

տանեն, ասաց նա... ՊատաՀ բերէք ինձ, պատան, հայեր. ինձ հէնց պատանն է մնացել... Ով այսքան լուռ ու անտրտունջ իր շապիկն ու արխալուղը տուել է դուշմանին, իր երեսը դէմ էր արել նրա ապտակին, բռունցքի տակ ժպտացել է ինձ պէս, թո՛ղ այսուհետեւ պատանով շրջի... Վալլա՛հ, հայե՛ր, մեզ հէնց պատանն է մնացել, շապիկ ու արխալուղ շատ տուինք: Սե՛ւը, մեզ տանի, հո՛ղը մեր գլխին... ասաց տիրացուն եւ թուլացած՝ իր ամբողջ հասակով գետին գլորուեց, ինչպէս փոթորկելով արմատախիլ դարաւոր կաղնի:

Աղօթքը սառեց մարդկանց շրթունքին... Արտասուաթոր աչքերով նրանք նայում էին այս արիւնաթաթաւ, խոցոտուած դիակին, այս վառուած, խանձուած դէմքին. նայում էին եւ մտածում՝

«Փրկութիւնը որտեղի՞ց պիտի գայ»...

1900 թ.

ՎԱԶՐԻԿ

Նուէր Դումանին

Ահեղ ու անհաւասար կռիւ էր Վանում:

Մենք ստիպուած եղանք բաժանուել իրարից. Վազգէն իր ընկերներով մնաց Արարոց թաղում, իսկ ես մի քանի հոգով Այգեստան անցայ:

Հարկաւոր էր մի առ ժամանակ մեր հետքը կորցնել: Երեք-չորս օրից ի վեր տեղաւորուել էինք ընդարձակ պարտիզի խորքում, կծկծուած մի փոքրիկ տան մէջ: Ուշ աշուն էր ու ցուրտ լայն փալասով ծածկուած քուրսին, թոնրի վրայ, տան կենտրոնում՝ հաճելի տեսք ունէր, ջերմութիւնը խիստ ախորժելի էր: Քուրսում առաջ կուճուռած՝ նստած էր մօտ ութսունամեայ մի ծերունի, սպիտակ երկար միրուքով, որ ոլոր-ոլոր կախուած էր կրծքին. նրա թաւ ու երկար յօնքերի տակ խոր ընկած աչքերը անփայլ էին ու համարեա հանգած: Գլուխը կրծքին քաշ՝ նա անդադար քաշում էր «տէր ողորմեա»-ի սեւ հատիկները համաչափ չրխկոցով: Ծերունու կողքին տեղ էր բռնել մի վեց-եօթ տարեկան երեխայ, հիւանդոտ ու գու-

«Թթխմորը հարամ է, արիւնոտ է»: Դաւիթն իրեն չլսելու դրեց եւ առհարկի վստահութեամբ ասաց՝ «Ողորմի՛ Աստուած: Ձայնն աւելի բարձր դուրս եկաւ քան հարկաւոր էր. գոնէ Դաւթին այդպէս թուաց, *այս անգամ եւ նա այնպէս փակեց բերանը*, կարծես մէկը ապտակով խփեց շրթունքներին: Այդ էլ վնաս չունէր, սարսափելին այն էր, որ իր «Ողորմի Աստուած»-ին ոչ ոք չպատասխանեց: Այդ էլ չնկատելու տուեց Դաւիթը եւ առաջ գնաց *իր սովորական տեղը* գրաւելու բուխարիկից դէպի ձախ, երկրորդ տեղը՝ հաստաբեխ Մանոյի եւ Խուս-Հովէյի մէջ:

Դիտմա՞մբ արդեօք՝ թէ՞ անուշադրութիւնից այսօր այդ երկու մարդի մէջ շատ քիչ տեղ էր մնացել նրա համար, եւ երբ Դաւիթը մօտեցաւ, ոչ մէկը չշարժուեց, Դաւիթը մի կերպ ներս սողոսկաց, *նստեց: Լռութիւնը շարունակւում էր. դիտմամբ չէին* խօսում, թէ՞ խօսել չէր լինում: Մօտիկ հարեւաններն էլ երեսները դարձրել էին Դաւթից...

- Ժամում շատ ցուրտ էր. տէրտէրը աղօթքները բօլ կուլ տուեց,- ասաց Դաւիթը: Ոչ ոք ձայն չհանեց. լռութիւնը շարունակուեց. խօսակցութիւն սկսելու նրա ջանքերն ապարդիւն անցան:

Դաւիթը հանեց չիբուխը, պատրաստեց, ոչ ոք կրակ չ'առաջարկեց նրան. ինքը կրակը վերցրեց. վրան դրեց եւ սկսեց արագ արագ ծխել: Ցանկարծ Մանոն նրա կողքից վեր կացաւ եւ դուրս գնաց: «Ինչո՞ւ, մտածեց Դաւիթը. նա այսպէս շուտ չէր գնա»: Քիչ յետոյ նրան հետեւեց Խուս-

անկիւնից, ծառերի տակից, պատերի յետեւից, շաչում էին ու կեանքեր քաղում:

Կռիւ էր, փողոցից՝ փողոց, տնից՝ տուն: Եւ ամէն անգամ, երբ լսւում էր դրսից մի հրացանի պայթիւն, ծերունին թողնում էր «տէր ողորմեան», բարձրացնում էր իր ալեզարդ գլուխ, մարած ու միշտ խոնաւ ալքերը երկինք էր ուղղում եւ մրմնջում.

- Քեռ կամքն ի տէ՛ր... մեղա՛յ, մեղա՛յ, ի քեզ տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան, մեղա՛յ, մեղա՛յ...

Միեւնոյն ժամանակ լսւում էր հատ-հատ շնչերի անկանոն ու այլանդակ ոռնոցը, եւ մայրն ու փոքրիկը նայում էին իրար լռութեամբ:

Փողոցներում անցուդարձը ի սպառ դադարել էր. տղամարդի երեւալը հաւասար էր պետական յանցանքի: Հազիւ հազ որեւէ սրտոտ կին համարձակում էր գլուխ դուրս հանել, տնից տուն անցնել: Մեզ էլ ընկերներից լուր բերողը միշտ մի կին էր, բայց նա էլ դժբախտաբար չկար երկու օրից ի վեր. ես չգիտէի, թէ ո՞ւր է Վազգէնը, ի՞նչ է անում, քաղաքո՞ւմն է, թէ խոյս է տուել. անկարող էի նաեւ իմ անելիքը որոշել:

Անհանգստութիւնը թունաւոր գեռունի պէս կրծում էր հոգիս, եւ ես աչքս չէի կարողանում դռնից հեռացնել: Էլի մի օր անցաւ, երեկոն մօտ էր արդէն, եւ ոչ ոք չեկաւ: Մտածում էի գիշերով դուրս ընկնել, ինչ եւ պատահելու լինէր:

Այս կացութիւնն անտանելի էր:

Իմ մտքերն ընդհատեց դրան ճռռոցը. շէմքի վրայ յայտնուեց ութ-ին տարեկան մի երեխայ:

- Վազրի՛կը, Վազրի՛կը... գոչեց քուրսու առաջ նստած փոքրիկը, թողեց կատուն ու մնաց բերանաբաց. ծերունին գլուխը չբարձրացրեց:

- Դո՞ւն ես Վազրիկ, ասաց ջահիլ կինը անտարբերութեամբ, արի տաքացիր, տղա՛ս:

Ես դժգոհ էի. սպասում էի մեր բանբերին, եւ յայտնուեց այս երեխան. ակամայ դժկամակութեամբ մի հայեացք նետեցի վրան: Ներս մտնողի փոյթը չէր. նա մի վայրկեան կանգ առաւ դրան առաջ, ուշադրութեամբ մեզ նայեց, ապա համարձակ քայլերով առաջ անցաւ, տեղ բռնեց քուրսու առաջ:

Մտքերս դարձան Վազրիկի շուրջը. այս երեխայի եւ մեր մէջ մի նմանութիւն կար. նոյն անհանգիստ, արկածալից կեանքը, նոյն կռիւները, միայն երեխայական չափով:

Ո՞վ չէր ճանաչում Վազրիկին նա յայտնի էր ամբողջ Այգեստանում:

Գունատ այտեր ունէր ու հաստ շրթունքներ, որ նա սղմած էր պահում իրար վրայ, երբ սաստիկ զայրացած էր կամ երբ մի չարաճճի միտք ունէր գլխում: Սեւ աչքերի վրայ խիստ վար քաշ ընկած յօնքերը նրա հայեացքը դարձնում էին խորամանկ ու քինոտ: Թւում էր, թէ Վազրիկը միշտ ոխ ունի մէկի դէմ: Նրա վերին շրթունքը շարունակ թաց էր, եւ Վազրիկը ստիպուած էր թեւով յաճախակի սրբել կամ փնչացնելով վեր քա-

շել քիթը:

Ես նրան շատ էի տեսել Այգեստանի փողոցներում եւ սովորաբար միշտ հեւ ի հեւ, քրտնաթոր վազելիս, երբեմն ճանկռտուած երեսով, պատառոտած զգեստներով, վերթ գլխաբաց, յաճախ ոտաբոպիկ: Երբ Վազրիկը այդպէս վազում էր, հաստատ կարելի էր ասել, որ կամ հասակաւոր մէկը հալածում է նրան, կամ ինքն է ընկել մի ուրիշի յետեւից:

Նա մշտական պայքարի, անվերջ կռիւների մէջ էր:

Եւ բոլոր այդ կռիւների, բոլոր հալածանքների պատճառը միշտ ինքն էր, Վազրիկը: Ոչ ոք քարերով նրա պէս շեշտակի չէր հարուածում կատուներին, շներին, հաւերին, փողոցների պատից քաշ ընկած խնձորենիների պտուղներին:

Եւ ամէն մի ձգուած քարից ծագում էր մի կռիւ, մի ծեծ, մի հալածանք: Ահա թէ ինչու Վազրիկն *ստիպուած էր անդադար վազել կամ ազատուելու*, կամ իր կրած որեւէ վիրաւորանքի համար վրէժխնդիր լինելու համար: Անթիւ անգամ նա ծեծ էր կերել ուրիշներից եւ նոյնքան ծեծ տուել: Երեսի վրայ էլ տեղ չկար, որ ճանկռուած չլինէր, շրթունքներն ու յօնքերը քարերով պատառոտուել էին ու սպիացել, եւ Վազրիկը շարունակում էր իր արկածալից կեանքը եւ գոհ էր:

Եթէ որեւէ չարաճճի խաղի համար նրան վիրաւորում էր մի հասակաւոր, Վազրիկը հատուցանում էր իր ուժեղ թշնամու փոքրահասակ եղ-

բօրը կամ որդուն:

Վազրիկը ներել չգիտէր. օրերով ու շաբաթներով կը սպասէր, մինչեւ հանդիպէր այդ փոքրիկներից մէկնումէկին: Բռնում էր առաջները փողոցում եւ հատուցանում ճիշդ նոյն չափով ինքն էր ստացել, մի ապտակ կամ մի բռունցք, ո՛չ աւել, ո՛չ պակաս: Վրէժխնդրութեան մէջ սա նրա անխախտ սկզբունքն էր: Հարուածում էր եւ իր զոհի առաջին ճիչի հետ՝ նետի պէս առաջ էր ձգւում անյայտանալու համար:

Վազրիկը այծեամի պէս վազել գիտէր եւ նա միշտ վազում էր...

Եւ ոչ ոք նրա պէս չէր ճանաչում Այգեստանի բոլոր ծակուծուկը, բոլոր անկիւնները, ուր կարելի էր ապաստանել, պատերի այն ցածրիկ մասերը, որտեղից հնարաւոր էր ներս ընկնել պարտէզները, առանց ձեռք ու ոտք փշրելու: Նա շատ լաւ ճանաչում էր մանաւանդ այդ խուլ, ոլորապտոյտ ու մթին շաւիղները, որոնցով կարելի էր խոյս տալ առանց նկատուելու: Կամուրջները գիտէր, որոնց տակ կարող էր ամբողջ օրով թագնուել, եթէ հարկ լինէր:

Վանի գաւռօշն էր Վազրիկը:

Այսպէս էր ահա այն երեխան, որ ներս ընկաւ մեզ մօտ: Եւ հաւատացած էի, որ չնայելով քաղաքի այս դժոխային վիճակին, նա դարձեալ հնար է գտել մէկին ծեծել եւ ապաստանել այստեղ, մինչեւ մութն ընկնի:

Նա ո՞ւր չէր մտնում...

- Վազրիկ, էլի ո՞ւմն ես ծեծել, հարցրի ես *ժպտալով, որ խօսակցութեան մէջ մտնեմ եւ մի* կերպ ժամանակս սպանեմ: Պատասխանի փոխարէն նա ինձ նայեց խոժոռ աչքերով եւ քիթը վեր քաշեց, ուժգին փնչացնելով:

Վազրիկը պատասխանելու ցանկութիւն չունէր:

Համակերպուեցի եւ անձնատուր եղայ իր ծանր մտքերին: Չէի նայում քուրսու կողմը, ուր չրխկում էր ծերունու «տէր ողորմեա»-ն եւ ուր երկու փոքրիկները քաշքշում էին իրարու ու բարձրաձայն քրքջում: Դրսից դարձեալ մերթ ընթ մերթ լսւում էին հրացանների ձայներ, ծերը ամէն անգամ կրկնում էր իր սաղմոսը, շները ոռնում էին *հրէշաւոր ու մահասարսուռ* ելեւէջներով: Երեխաները շարունակում էին խաղալ, ըստ երեւոյթին մոռացած շրջապատի բոլոր սարսափը: Ես նայում էի նրանց եւ մտքիս մէջ կրկնում. «Երանի՜ քեզ մանկութիւն»: Խաղի ընթացքում յանկարծ փոքրիկ երեխայի ձեռքը թափով դիպաւ Վազրիկի կրծքին.

- Մ'անէ՛, մ'անէ՛... Ճչաց Վազրիկը կատաղած: Ես մնացի զարմացած, նրա *ձայնի մէջ կար խոր*ին զայրոյթի ու սպառնալիքի շեշտ: Ընկերը վախեցած՝ ձեռքը յետ քաշեց օձից խայթուածի պէս, կծկուեց ու խեղճացաւ, մինչդեռ Վազրիկը շրթունքներն իրար վրայ սղմած՝ նայում էր նրան *չար, անողորմ հայեացքով*: Թւում էր թէ Վազրիկը կրծքի վրայ մի վերք ունէր, մի ցաւոտ վերք, որին

ընկերը դիպաւ անզգուշութեամբ ու կսկծացրեց:

Նոյն վայրկեանին կատուն վերստին թռաւ քուրսու վրայ. երկու երեխաները մէկէն ձեռքերնին մեկնեցին դէպի կենդանու փափուկ մորթը եւ սկսեցին քաշքշել: Կատուն դժգոհեց, ճչաց ու փախաւ. երեխաները ծիծաղեցին բարձրաձայն եւ մոռացան անախորժ միջնադէպը: Վերստին սկսուեց խաղը, վերստին նրանք քաշքշեցին իրար, եւ յանկարծ էլի մի անգամ լսուեց Վազրիկի ձայնը՝

Մ'անէ՛, մ'անէ՛ կ'ասեմ...

Նայեցի. այս անգամ Վազրիկը սարսափելի էր. նա ատամները կրճտում էր, բռունցքները սեղմել էր կատաղաբար, իսկ աչքերից թոյն էր կաթում: Շշկլուած ու երկիւղից ոչնչացած ընկերը խոհեմութիւն համարեց քաշուել քուրսու միւս ծայրը. անգամ մեր ներկայութեամբ նա վախենում էր Վազրիկից:

Երեխաների խաղն է՛լ չվերսկսուեց. գլուխները քաշ ձգած՝ նրանք իրար էին նայում գաղտագողի կերպով եւ լուռ էին: Կատուն այժմ համարձակ բարձրացաւ քուրսու վրայ, տեղաւորուեց իր ուզածի պէս եւ հանդարտ մռմռում էր: Ծերունին վաղուց հետէ նիրհում էր նստած տեղում եւ նրա «տէր ողորմեայի» ձայնը դադարել էր: Տանտիկը գլուխը քաշ ձգած՝ հանդարտ կարկատում էր մի հնոտի, մերթ ընդ մերթ կրկնելով՝ «խախանդ կացէ՛ք, տղէկներ»: Ես նկատեցի, որ Վազրիկը մի քանի անգամ լուսամուտին նայեց. ըստ երեւոյ-

թին նա անհանգիստ էր: Երեկոն վրայ հասաւ. առաջին ստուերները կախուեցին, եւ տունը կամաց-կամաց մթնեց: Տանտիկինը կարը ցած թողեց, վեր կացաւ ճրագ վառելու: Որդին հետեւեց նրան. Վազրիկից նա խոյս էր տալիս, թէկուզ մի քանի րոպէով:

Նոյն վայրկեանին Վազրիկը գող կատուի պէս շուրջը նայեց, տեսաւ խռմբփացող ծերունուն, թռաւ տեղից շտապով, վազեց դէպի ինձ, ծունկ չոքեց առաջ եւ կուրծքը դէմ տալով փսփսաց.

- Քակի՛ր, էսա տեղ բան կայ:

Հասկացայ. սիրտս թունդ եւ հիացմունքով լի դէպի այս փոքրիկ զինուորը, դողդողջուն ձեռներով քանդեցի նրա կոճակները եւ կրծքի վրայից դուրս հանեցի նամակներ, «Դրօշակ» եւ այլ կարեւոր թղթեր:

- Վազգէնը տուեց, կրկին փսփսաց նա, սուր աչքերը վրաս յառած:

Վազգէնի բանբերն էր թափառական, արկածախնդիր Վազրիկը:

Սքանչելի՜ մանուկ...

Աչքերս յուզմունքի արցունքով լցուեցին, գրկեցի նրա փոքրիկ անհանգիստ գլուխը, սղմեցի կրծքիս եւ պինդ, պինդ համբուրեցի: Ահա՜ թէ ինչու այս կայտառ, կենդանի երեխան ժամերով ինքնիրեն դատապարտել էլ նստել քուրսու առաջ, սովորութեան հակառակ յանձն էր առել խաղալ մի հիւանդ, թոյլ երեխայի հետ, ահա՜, թէ ինչու էր զայրանում, երբ ընկերը դիպաւ նրա

կրծքին, ուր նա կրում էր բոլոր ցաւերից ամենայ նուիրականը, յեղափոխական փրկարար ու վսեմ գաղտնիքը: Նրան պատուիրել էին թղթերը յանձնել ինձ, երբ տանը մեզանից զատ ոչ ոք չէր լինի: Եւ նա սպասում էր համբերութեամբ:

Տանտիկինը ներս եկաւ:

- Վազրիկ, գնո՞ւմ ես:

Հա, ի հարկէ, նա գնում էր. նա արդէն դրան առաջն էր. պատասխան անգամ չտուեց, բացեց դուռը եւ ընկաւ, կորաւ խաւարի մէջ:

Ա՛յն դուրսը... ցուրտ էր, մռայլ ու ահաւոր: Հրացանների ձայները սաստկացան. շներն աւելի ողբաձայն եւ աւելի բարձր ոռնալ սկսեցին. ծերունին ընդոստ վեր ցատկեց քնից եւ երեսը խաչակնքեց:

Վազրիկը գնա՛ց... այն արիասիրտ, դիւթական մանուկը, որ ոչնչինց չէր վախենում:

Վազգէն գրում էր ինձ որ չշարժուեմ իմ թագստոցից եւ սպասեմ իր յաջորդ նամակներին: Եւ այնուհետեւ նամակները գալիս էին կանոնաւորապէս Վազրիկի ձեռքով. փոքրիկ բանբերը ամենայն օր, նոյն ժամերին- նոյն ձեւով ներս էր մտնում, կուրծքը միշտ խնամքով կոճկած, միշտ զգոյշ ու լուրջ: Տանեցիներից մենք գաղտնիք չունէինք, բայց Վազրիկը մինչեւ վերջը յամառում էր իր ծայրայեղ զգուշութեան մէջ եւ նրանց ներկայութեամբ չէր համաձայնում կուրծքը բանալ: Նրա այդ սիրուն քմահաճոյքը կատարած լինելու համար իմ խնդրով տանտիկինը իր փոքրիկի

հետ ոեւէ պատրուակով դուրս էր գնում, հենց որ Վազրիկը յայտնւում էր: Ծերունին շատ լաւ չէր տեսնում, այդ լաւ գիտէր Վազրիկը եւ նրանից չէր քաշւում, իրեն բոլորովին ապահով զգալով նա շտապով մօտենում էր ինձ, չոքում էր առաջիս եւ կամացուկ կրկնում իր սովորական նախադասութիւնը, ցոյց տալով կուրծքը:

- Քակի՛ր, էսա տեղ բան կայ:

Թղթերը հանում էի եւ նա կրկին անյայտանում էր, կրծքի վրայ փոխադարձապէս տանելով իմ նամակները Վազգէնին ուղղած:

Եւ մի երեկոյ նա սովորականից շատ ուշացաւ: Մութն ընկաւ, ճրագը վառուեց, բայց Վազրիկը չկար դեռ եւս: Ամէնքս էր լուռ էինք եւ հանգիստ. մենք այնպէս սովորել էինք նրան տեսնել որոշ ժամերին: Խրճիթը իր մութ ստուերներով այդ երկոյ մեզ ճնշում էր: Լռութեան մէջ անախորժ էր հնչում նոյնիսկ ողորմելի կատուի սովորական մռմռոցը եւ ծերունու «տէր ողորմեայի»չրխկոցը: Սիրտս լի էր մութ թախիծով եւ ես սկսեցի անդադար քայլել յետ ու առաջ: Դեռ երբեք դրսի խաւարը այս աստիճան խեղդող, այս աստիճա ահաւոր չէր թուացել ինձ. կարծես մի մութ ու սեւ բան, դանդաղ հրէշաւոր գալարումներով օղակ-օղակ պտտում էր մեր շուրջը թանձր խաւարի հետ, սպառնալով խեղդել, ոչնչացնել մեզ:

Հոգիս ցաւում էր անորոշ ու սեւ կասկածներից:

Յանկարծ մի ուժգին պայթիւն լսուեց հենց մեր

հազիւ մի քանի քայլ արած, նա աչքերը վեր բարձրացրեց.- առջեւում, խաւարի մէջ, երկու աչքերը փայլում էին, արիւնոտ, ճոթռուած: Նրա ծնկները ծալուեցին... Դողդողալով յետ եկաւ դէպի բանտապետը: *Ամբողջ աշխարհն էր խօսում* այդ մի հատիկ մարդու բերանով: Օգնականը դարձաւ եւ վազեց թափով: Քամին նրան չթողնեց առաջ գնալ եւ, կանգ առաւ հէնց կախաղանի տակ: Քրտինքը թափւում էր *վրայից, բայց նա դողում էր, ատամներն իրար էին զարկւում*: Ապա վերեւ նայեց: Դիակն այս անգամ՝ էլ այնպէս բարկացած չէր. աչքերը նայում եւ թարթում էին մեղմ, կարեկից եւ արիւնոտ. շրթունքները *կամացուկ մրմնջում էին՝ «ընկե՛ր, ընկե՛ր, ընկե՛ր»... Այս* բառի տեղ նա կ'ուզէր լսել իր գլխին ճայթող մահացու կայծակի որոտը... Ո՞ւր փախչել ազատուելու համար: Ոտներն իրեն չէին հնազանդում. նա յենուեց *կախաղանի սեանը եւ սարսափած նայում* էր ճօճուող դիակին երկա՛ր երկա՛ր, եւ լսում էր կախաղանի ողբաձայն ճռռոցը:

Նա յիշեց բոլորը... Իր գլխի վերեւ օրօրուող դիակն *իր «Ընկերն» էր... Ո՞ւր էր ինքը եւ ո՞ւր* իջաւ... Կ'ուզէր արտասուել, բայց չկար այդ զովացուցիչ արցունքը, մինչդեռ կուրծքն ուռած էր, այրւում էր, եւ նա աւելի եւ աւելի մօտ էր սեղմում օրօրուող *սեանը, տրորում էր կուրծքը՝ ներսի* բոցը մարելու համար... Ի զո՛ւր:

Երկար նա գալարւում էր վիրաւոր օձի պէս խաւարի եւ միայնութեան մէջ: Յանկարծ նա թո-

ապա խռպոտ ձայնով հեկեկաց ծերի սպանիչ արցունքով. տանտիկինը սարսափած՝ իր փոքրիկին գրկեց, կարծես մի մութ վտանգից ազատելու համար եւ նոյնպէս հեծկլտաց: Երկու հրացան բերինք, խաչաձեւ դրինք կահատակի կրծքին եւ գլուխներս բանալով ծունկ չոքեցինք նուիրական դիակի առաջ: Ճրագի լոյսը պլպլում էր մեղմիւ, մեր ստուերները խաղում էին մեռելի շուրջը ոգիների պէս, եւ մենք կատարում էինք հսկումներից վեհագոյնը:

Յանկարծ ծերունին ոտքի կանգնեց իր չորացած հասակի ամբողջ բարձրութեամբ, կարծես երկնքին աւելի մօտ լինելու համար, արիւնոտ ձեռքերը տարածեց դէպի վեր, դողդոջուն ձայնով բացականչեց.

- Տէ՛ր, տէ՛ր, քո զաւակի արիւնը համարիր... Փրկութեան արիւն... տե՛ս, ինչ մաքուր է, ի՜նչ կարմիր...

Մեր միահամուռ եւ ուժգին հեծկլտոցը խլացրեց ծերունու ձայնը. նա ծնկների վրայ ընկաւ նորէն դիակի առաջ: Նոյն վայրկեանին դրսում նոր հրացաններ որոտացին, մենք շրջապատուած էինք: Ձենքերնիս խլեցինք եւ դուրս ընկանք խաւարի մէջ:

Բոլոր Վազրիկների անբիծ արեան սիրուն՝ կռիւ էր պէտք:

Եւ կռիւն սկսուեց...

1904 թ.

ՀԱԶՐԷՆ

Նուէր Անդրանիկին

Լեռների աղջիկն էր նա, մի ցուրտ ու խաւար գիշեր ժայռոտ ու մռայլ այրերից ծնուած: Կանացի ու գրաւիչ ոչինչ չունէր իր արտաքինի մէջ եւ միայն զգեստն էր մատնում նրա սեռը: Ձմեռը՝ ցրտից եւ ամառը՝ արեւից այրուած դէմքը - բրօնզից ձուլուած մի դէմք - թէեւ սաստիկ արտայայտիչ էր, բայց անհամբոյր ու խիստ: Սուր քիթը, իրար խառնուած սեւ յօնքերը, գիշատիչ թռչնի անհանգիստ ու կոլոր աչքերը, որոնց վրայ արագ-արագ իջնում էին նօսր թերթերունքները՝ երբ Հազրէն զայրացած էր կամ յուզուած, նրա ուժեղ ու դուրս ցցուած ծնօտը, նոյնպէս շատ հեռու էին կանացիութիւնից եւ միայն վկայում էին նրա անյողդողդ, անդրդուելի հոգին - ժե՛ռ քարերի հոգին...

Երկար ու ջլուտ սրունքների վրայ ցցուած նրա ոսկրոտ իրանը ասես երկաթից ցուլուած լինէր միապաղաղ ու հարթ: Նեղ ու տափակ կուրծքը մայրութեան նշոյլ չունէր. երեւի այդ էր պատճա-

ռը, որ բնութիւնը զգուշացել էր երեխայ կախել նրա չոր ստինքներից, սերունդ հաւատալ նրա կանացիութեանը:

Հազրէն անզաւակ էր, ժայռերի մէջ դուրս ցցուած մենակ ու անպտուղ ծառն էր նա:

Եւ նրա քայլուա՛ծքը... ինչպէս չորացած ծառը տեղահան լինի թափ առնի ու շարժուի: Երկար ու բարակ բազուկները ձգած յետեւը գլուխը բարձր՝ աչքերը միշտ հեռուն՝ մէկին սպասողի դիրքով, նա յիշեցնում էր Ֆոֆոքարի վայրի ոչխար, որ հսկում է արածող հօտի վրայ: Այդ ամբողջ ջլուտ կազմուածքը բոլորովին զուրկ էր կանացի այն ալիքաձեւ, օրօրուն շարժումներից, որոնք բնորոշում ու հմայք են տալիս բեղուն մայրութեանը:

Ինչո՞վ էր նա գրաւում տղամարդկանց, յայտնի չէ, բայց երեք անգամ ամուսնացել էր եւ երեք անգամ այրիացել, առանց երբեք «ծնունդ նստելու»: Գիւղում կատակով ասում էին՝ «պէտք է ժամում մոմ կպցնել, որ Հազրէն բնաւ երեխայ չունենայ, թէ չէ, ո՞վ գիտէ նրանից ի՞նչ «ջանավար» կը ծնուի»:

Եւ Հազրէն չծնեց, մայր չեղաւ, մնաց սոսկ «Հազրէ բաջի» մէկի հետ հազիւ մի տարի ապրեց: Ասում էին, թէ Հազրէն չորրորդ անգամ սիրով կ'երթար Աւետարանի տակ, բայց էլ ցանկացող չկար, որովհետեւ նրա ամուսնական անկողնից մինչեւ գերեզման շատ մօտ էր երեւում տղամարդկանց:

«Հազրէ բաջի», թէ «Գլխակեր Հազրէ» ըստ

երեւոյթին միեւնոյն էր նրա համար. կատակներին պատասխանում էր աւելի կծու կատակով ու անցնում: Բայց մինչեւ վերջը Գոմեր գիւղում ոչ ոք չիմացաւ, որ այդ խստատեսիլ կնոջ ուժեղ հոգին զուտ կանացի քնքշութիւններ ունի, որ նրա սրտում լուռ լալիս է ամուլ, յուսախաբ մայրութիւնը, երեք անգամ գերեզմանի վրայ ծունկ չոքած մայրութիւնը:

- Հողս ձեր գլխին, զեղի զըմմէն ճըժեր իմը չե՞ն, ասում էր նա իր ամլութիւնը հեգնող կանանց, եւ նրա խօսքի մէջ լսւում էր վիրաւոր մայրական սրտի բոլոր թախիծն ու դառնութիւնը: Ասում էր, բայց դէպի փոքրիկ «ճըժերն» անտարբեր էր, սիրում էր միայն ընտիր-ընտիր հերոսներին, մի Սերոբ մի Մուրադ եւ վերջին օրերում երազում էր Անդրանիկին, որին տակաւին չէր տեսել:

Հազրէն մայր չդարձաւ, անզաւակ պառաւեց, բայց բոլոր մայրերից աւելի հռչակ ունէր ո՛չ միայն Գոմեր գիւղում, այլ եւ ամբողջ Սասունում: Եւ այն ոչ այն պատճառով, որ Հազրէն երեք մարդ էր առել եւ առնական ձեւեր ունէր, այլ որովհետեւ Սասունի ռազմիկ, ալեծուփ կեանքին միշտ մասնակցում էր տղամարդի պէս: Եւ այդ կեանքը նրա համար ընդունել էր երեք վերին աստիճանի պարզ եւ ըմբռնելի օրէնքների կերպարանք այսպէս, նա գիտէր, որ Սասունը միշտ պէտք է կռուի, երբ թիւրք եւ քիւրդ հրոսակներ ոտք կոխեն նրա սահմանները, որովհետեւ Ծիրանակատարը, Ըն-

կուզնակն ու Ֆռֆռ քարը հարամիների տեղ չեն. երկրորդ՝ կռուելիս պէտք է շտապով լեռը քաշուել եւ երրորդ՝ միշտ պէտք է յետեւից գիւղերը կրակ տալ, որ թշնամին ապաստան ու պաշար չգտնի:

Եւ Հազրէն կռիւների ժամանակ միշտ ինքն էր կրակ տալիս Գոմեր գիւղը, սկսելով իր սեփական խրճթից: Այս էր պատճառը՝ որ նա փոխանակ ասելու, թէ Սասունի վրայ չորս անգամ արշաւանք է եղել, հպարտութեամբ բացականչում էր.

- Էս ա ձեռներովս չորս խետ վառեր եմ Գոմերը: Հերոսական ու չարաբաստիկ 95 թուին Ռէս Գրգոյի հետ էր նստել վեր կացել, ասում էր ինքը, իսկ Մուշում սասունցի ուրիշ կանանց հետ թիւրք ոստիկանների գլխին առաջին քարը նա էր նետել, այդ փաստ էր:

Հը՛, Հա՛զրէ, էդ չորացած ձեռներով մէկ էլ ե՞րբ պէտք է վառես գեղը, հարցնում էին յաճախ կանայք կատակով:

Հազրէն լուրջ կերպարանք էր ընդունում, ձեռքը մեկնում դէպի սարերը:

- Այ, էն սարերի ասլանը երբ ցած գայ եւ նշան անի, կը վառեմ:

«Սարերի ասլանը» Անդրանիկն էր, որ քանի տարիներից ի վեր Սասնոյ սարերում, Սասնոյ ծռերի հետ հսկում էր ժայռերի վրայ թառած ժողովրդին:

- Անդրանիկին տեսե՞լ ես.

Պատասխանի փոխարէն Հազրէն թափով յետ էր ձգում գլուխը, լեզուն բերնի մէջ չփփացնում

ասելու համար թէ չի տեսել:

- Երբ պէտք է լինի գոմերը վառել, նա կ'երեւայ, եւ երբ երեւայ, կը տեսնեմ իր տղային ջանի՞ն մատաղ աւելացնում էր նա:

- Սեւը տանի քեզ, գլխակեր Հազրէ, էդ էր պակաս:

- Սեւը դուշմանին տանի, ես ափսոս չէ՞մ. մէկ Սասուն, մէկ Անդրանիկ, մէկ էլ... Հա՜զրէ: Վերջին խօսքին վրայ կանայք հռհռում էին, եւ Հազրէն հեռանում էր հաստատ ուղղածիգ քայլուածքով:

Եւ մի օր Սարերի Ասլանը ցած իջաւ իր ծռերով...

Սասունը վտանգի մէջ էր, Գոմերը պէտք էր թողնել: Գիւղը դատարկում էր եւ քաշւում լեռն ի վեր:

Անտրտունջ ու համր ինչպէս ուխտուածներ՝ այդ երկաթէ ժողովուրդը, թողնում էր իր տունն ու տեղը, վերցնում էր իր ունեցածից ինչ կարող էր, եւ ձմրան վերջին կատաղի հողմերի շնչի տակ, ձիւների միջից, սառուց կտրած առապարները չանգռելով՝ եւ լուծւում ժայռերի ու ամպերի հետ: Խմբապետի հետ միասին գիւղից վեր դիրք բռնած զինուած տղամարդիկ՝ պաղ ու մռայլ ճակատներով, խոժոռ յօնքերի տակից նայում էին, թէ ինչպէս իրանց ծեր հայրերը, կանայք ու երեխաները անխռով ու հաստատ քայլերով անցնում են առաջներից: Ոչ ոք պէտք չէր համարում քաջալերական մի խօսք ուղղել խուսափող բազմութեանը, ոչ ոք խորհուրդ չէր տալիս, թէ ո՞ւր

գնալ եւ ի՞նչպէս. ամէն մէկն իր գործը գիտէր, անթիւ տարիներից ի վեր կռուի մշակուած ձեւ էր այդ - կին ու երեխաներ ծերերի հետ դէպի անմատչելի կատարները, իսկ կռուող մասը՝ հրացանը ձեռքերին քարերի յետեւում՝ պատրաստ՝ թշնամու հանդիպելու: Միայն մի անգամ խբի կենտրոնում կանգնած գունատ ու խստադէմ տղամարդը գլուխը բարձրացրեց հրացանի վրայից, եւ ասաց երկու բառ:

- Անցէ՛ք շուտով:

Անդրանի՞կն էր...

Եւ ո՛չ մի տրտունջ ծերերի շրթունքներից, որոնք գուցէ վերջին անգամն էին թողնում հինաւուրց օջախը, որի հետ կապուած էին այնքան յիշողութիւններ. եւ ո՛չ մի կաթիլ արցունք կանանց աչքերից, որոնք այնքան տարիների տնտեսութիւնը ձգում էին թշնամուն եւ նրա հետ միասին գուցէ, եւ իրանց ամուսինների եւ եղբայրների *կեանքը. անգամ փոքրիկները ո՛չ մի ճիչ չէին արձակում*, նրանք մրսում էին, կպել էին մայրերի փէշերին եւ դողդողալով քաշւում էին դէպի լեռների ձիւնոտ կատարները եզնիկների ճագերի պէս:

Լուռ էին, եւ այդ սքանչելի լռութիւնը ծայրագոյն վտանգի ժամանակ՝ հպարտ ու խորհրդաւոր արհամարհանքն էր, որ լեռների այս քաջերի զաւակները շպրտում էին բռնութեան ճակատին: Թափորն այն աստիճան լուրջ էր, եւ դէմքերն այնքան երկիւղած, որ կարծես նրանք ուխտի էին գնում ազատութեան ոգուն, որ թառել էր ան-

մատչելի կատարներին:

Դէպի վե՜ր, դէպի վե՜ր... արծիւները...

Սառած ձիւնը՝ չոր ու անախորժ ճռճռոցով փշրւում էր նրանց ոտների տակ, տեղ-տեղ սայթաքում էին նրանք, կռանում, փայտո՛վ կամ ուրագով սառցի մէջ շաւիղ ճեղքում: Քամին աւելի եւ աւելի խիստ էր փչում, ձիւնի չոր հատիկները շփում երեսներին. նրանք կապում էին, շրթունքները կրծոտնում չտնքալու համար. եւ դարձեալ բարձրանում:

Դէպի վե՜ր, միշտ դէպի վե՜ր...

Մի անգամ միայն յետ նայեցին, երբ ծխի պտոյտները բարձրացան գիւղի վրայ. բոլոր խրճիթները վառւում էին, դարձեալ ո՛չ մի տրտունջ, ո՛չ մի բողոք, միայն մի մեղմ շշուկ անցա՛ւ շարքերի մէջ.

- Հազրէն է, շշնչացին ու լռեցին. էլ ո՛չ մի աւելորդ խօսք չեկաւ խզելու, արատաւորելու այն քար լռութիւնը, որ նրանց ազատ կամքի ու սրտի գոռոզ արտայայտութիւնն էր:

Եւ հեռուն գիւղը շարունակում էր վառուել ծխրտալով, եւ բոցերը լափում էին այնքան աշխատանք, այնքան տարիների արիւն քրտինքի արդիւնքը: Մերթ ընդ մերթ քամու ուժգին հոսանքը ցրում էր ծուխը, այն ժամանակ երեւում էր գիւղում մի կանացի կերպարանք, սեւ ու կատաղի, ինչպէս չար ոգի, որ բոցավառուած մի լաթով վազում էր մի տնից միւսը, մի փողոցից միւսը եւ ուր նա յայտնւում էր, հրդեհը նրա յետեւից վա-

զում էր, ինչպէս հրեղէն վիշապ: Զարհուրելի էր Հազրէն. տասն անգամ նա կորաւ բոցերի մէջ, կարծես հրդեհը լափեց նրա չորացած մարմինը, եւ տասն անգամ էլի յայտնուեց, միշտ վազելով, միշտ կրակ տալով այս ու այն տունը:

Գիւղից վեր՝ աւերակ գոմերի պատերի յետեւում շարուած, զինուած խումբը նոյնպէս լուռ էր: Հրացանները պինդ սեղմած ձեռքերի մէջ՝ այդ մռայլ խումբը սպասում էր գլխաւորի հրամանին, որ գլխարկը յետ ձգած՝ ճակատը սառն հովի դէմ, մերթ սուր աչքերով, մերթ դիտակով պրպտում էր հեռուն:

- Պառաւին կը զարնեն, մռմռաց նա կամացուկ. խումբը նայում էր եւ լուռ էր:

Արդարեւ, գիւղից աւելի հեռու, հարթավայրերի վրայից դէպի վեր էր խաղում մի սեւ, ահագին զանգուած, որ հեղեղի պէս լայնանում էր, փռւում, գալարուում եւ նեղանում միշտ առաջանալով սպառնալի կերպով: Թիւրքական բանակն էր այն եւ քիւրդական բազմաթիւ հրոսակներ, հազարների արիւնարբու մի խուժան, որ առաջանում էր դէպի Գոմեր, դէպի Սասուն, աւերուածն ու արիւնը ոտներին կապած: Եւ ո՛չ մի ցնցում գիւղի վերեւում թառած կտրիճների շարքի մէջ, միայն յօնքերնին աւելի խոժռուեցին ու վար իջան, եւ աչքերի բիբերը նեղացան աւելի լաւ որոշելու համար թշնամու շարժումները:

- Չէն տուր, աղա, հրամայեց գլխաւորը կողքին կանգնած ընկերոջը, պառաւին կը զարնեն, մեղք է. թող փախչի, բաւական է:

Եւ մի հայդուկ ահագնադղորդ կանչեց.

- Հազրէ, Հազրէ Է՛... Եւ ձորերը թնդացին Է՛... Է՛... Է՛...

- Հէյ հօ՛, եղաւ պատասխանը եւ գիւղի ծխերի ու բոցերի միջից դուրս թռաւ նա, այն զարհուրելի պառաւը, սեւ, խանձուած, ու այլանդակ, դուրս թռաւ ու սկսեց վազել լեռն ի վեր դէպի խումբը:

Նա արդէն մօտ էր. ահա կանգ առաւ, երեւի, մի վայրկեան շունչ առնելու համար, յետ դարձաւ, հպարտութեամբ ու հրճուանքով նայում էր իր աւերիչ գործի բոսորային գեղեցկութեանը, ապա փոխանակ շարունակելու վերելքը, նա յանկարծ գլխին տուեց երկու ձեռքով եւ կրկին վազեց դէպի վար, դէպի հրդեհուող գիւղը:

- Հազրէ, Հազրէ Է՛... կանչեց նոյն ձայնը:

- Իրիցու տուն մնաց, եղաւ պառաւի պատասխանը. քիչ յետոյ նա կրկին կորաւ բոցերի ու ծխի մէջ եւ ապա գիւղի եզրին մենակ ցցուած սպիտակ տունը բռնկուեց: Տէրտէրի տունն էր այն:

Խմբապետը գլուխն օրօրեց եւ նրա խիստ դէմքի վրայ մի ժպիտ խաղաց. այսպէս են փայլում ձմերային արեւի գունատ շողերը սառած ձեան վրայ:

- Պառաւին անպատճառ կը զարնեն, մռմռաց նա դժկամութեամբ եւ վերստին դիտակն աչքերին դրեց:

Թշնամին մօտ էր, նրա ծայրը հասաւ ու մխուեց գիւղի մէջ ու կանգ առաւ. իսկոյն յետոյ հրացանների միահամուռ որոտը խառնուեց բո-

ցերի մռնչիւնին:

Վերեւից չպատասխանեցին, ծուխը փակել էր նրան հայեացքի առաջը. պարանոցներն առաջ ձգած եւ հրացանների փողերը դէպի թշնամին, նրանք լուռ նայում էին կնճռոտ ճակատների տակից:

Հազրէն մոռացուեց. նա կորաւ բոցերի գնդակների տակ:

Թշնամին մի փոքր վարանումից յետոյ շրջան գործեց եւ նրա մի թեւը յայտնուեց գիւղի աջ կողմից.

«Կրա՜կ» որոտաց գլխաւորի խիստ ու խրոխտ ձայնը: Հայդուկների հրացանները միաժամանակ չխկչխկացին, միահամուռ որոտը դնդաց լեռներում, թշնամու ճակատն իրար անցաւ եւ ընկրկուեց դէպի յետ:

«Կրա՜կ անընդհատ», վերստին լսուեց հրամանը. էլ դադար չկար. կատաղի կռիւ էր:

Գիւղի ծխերի ու բոցերի շուրջը գնդակները սուլում էին, հազարաւոր բանակը ատամները կրճտելով գլուխ էր հանում մերթ ձախ, մերթ աջ ինչպէս շշկած վիշապ եւ ամէն անգամ վերի փոքրաթիւ խմբի գնդակների տակ յետ քշւում:

- Հէ՛յ, հօ՜, զարկէք ձեզ մատաղ, սուրբ Ախպէրիկը ձեզ քեսմագ, ջա՜ն, ջա՜ն:

Հազրէ՜ն էր... կռուողների թիկունքում:

Ե՞րբ եկաւ, ի՞նչպէս ազատուեց այս անօրինակ պառաւը, ոչ ոք չգիտէր, եւ մտածելու ժամանակ էլ չունէր:

- Կրա՜կ, որոտում էր խմբապետը եւ լեռները դրնդում էին ոլոր մոլոր արձագանգներով:

- Ջա՜ն, ջա՜ն Անդրանիկ, կրկնում էր պառաւը զարկերի հետ, վազվզում էր դիրքերի վրայ, նայում էր ճանաչելու համար, թէ ո՞րն է Սարերի Աս-լանը- «Իր տղան», բայց գտնել չէր կարողանում եւ կռուող կտրիճներից հարցնելու էլ սիրտ չէր անում: Նա լաւ լսում էր խմբի միջից բարձրացող այն հպարտ ձայնը, որ «կրակ» էր հրամայում, բայց չէր կարողանում իմանալ, ո՞րն է խմբապետը. բոլորը հայդուկներ էին, բոլորը կռւում էին հաւասար կատաղութեամբ:

- Վո՜ւյ քոռնայ Հազրէն, բացականչեց նա յանկարծ, դօշդ բաց է, դօշիդ մատաղ. եւ նա մի ահագին քար գրկեց ու տնգալով տարաւ տեղաւորելու կռուողներից մէկի առաջը, ուր պատը ցածր էր: Կռացաւ բայց յանկարծ քարը ցած թողեց, յետ-յետ գնաց, ընկաւ թիկունքին իր երկար հասակով, ձեռքերը տարածեց ու մնաց անշարժ:

- Հազրէ՜... Գնդակը թափ էր անցել կրծքից:

Նրա աչքերը շաղուեցին, եւ վտիտ մարմինը ձգձգուեց ու աւելի երկարացաւ: Նա, որի կուրծքն էր ուզում պատսպարել Հազրէն, կռացաւ, ընքշութեամբ բռնեց պառաւի գլուխը եւ իր ծնկանը դրեց.

- Հազրէ՜...

«Ջո՜ւր»... Նրան ջուր տուին: Պառաւն աչքերը կիսաբաց, ձեռները տարածեց եւ մէկին փնտռում էր:

- Ի՞նչ կ՚ուզես Հազրէ:

- Սարերի... Ասլանին... Անդրա... լլա՛օ...

Նա չէր իմանում, որ իր գլուխը գրկողը հենց Սարերի Ասլանն է, եւ ինքն առանց ճանաչելու, նրա կրծքի առաջ էր քար դնում, նրան էր զոհ գնացել. «Ե՛ս եմ» հազիւ մրմնջաց յուզուած տղամարդը. հերոսի աչքերը թացացան, նա աւելի կռացաւ պառաւի վրայ եւ որդու պէս համբուրեց նրա սառն ճակատը:

Հազրէի բազուկները յետին թափով փարեցին նրա պարանոցով եւ նա հազիւ մրմնջաց.

- Ես էլ...մատաղ... Անդրան... Սարերի Ասլա՛ն-Լա՛օ... իմ լա՛օ...

Եւ երջանիկ ժպիտը սառեց նրա գունատ շրթունքներին:

Հազրէն մեռաւ՝ գիւղը դեռ վառւում էր. թշնամին այդ օրը յետ մղուեց ահագին կորուստներով, իսկ համր կարաւանը ձիւների ու սառուցների միջից շարունակում էր քաշուել դէպի վե՛ր, դէպի վե՛ր... արծիւները...

1905 թ.

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Խումբն իջնում էր ձիւնապատ լեռնալանջից դանդաղ ու զգոյշ:

Նրանք քայլել էին ամբողջ գիշեր:

Լուսաբաց էր եւ դեռ քայլում էին:

Արեւի առաջին շողերը դալուկ ու խեղճ՝ խաղում էին ճերմակ լեռնակատարների վրայ վախլուկ, անհամարձակ ձեւով: Իսկ մռայլ ձորում ձիւնի հաստ սաւանը դեռ կապտին էր տալիս ստուերի տակ:

Թւում էր, թէ ճամբորդների պէս այն անհամբոյր բնութիւնն էլ անքուն էր անցրել գիշերը խիստ ցրտի տակ, դողացել էր ու տանջուել:

Եւ այժմ նայում էր արեւին առանց հաճոյքի, առանց վաղորդեան յօրանջի, որպէս քարացած սֆինքս:

Անտարբեր էին դէպի շրջակայքը նաեւ յոգնած ու մրսած ճամբորդները:

Միայն երբ լերան վերնագոյն մասերից նրանց ոտքերի դղրդիւնով ձիւնի մը շեղջ էր պոկւում ու ցած հոսում, նրանք կանգ էին առնում մի վայրկեան, եւ վերեւ նայում: Ձիւնահիւսը վար էր գլոր-

ւում փոշու ամպեր բարձրացնելով, անցնում էր նրանց առաջից եւ գնում էր ցրիւ գալու ձորի մէջ:

Խումբը շարունակում էր քայլել:

Երբեմն էլ խմբապետն էր կանգ առնում յանկարծ, դիտակն աչքին էր դնում, նայում էր դէպի ձորը, դէպի հորիզոնը եւ գլուխը քաշ գցած առաջ էր գնում:

Ձիւնոտ արահետը գալարուում էր այլանդակ ժայռերի եւ հեղեղատների միջով՝ մերթ ծածկուում մերթ յայտնուում էր խուսափող օձի պէս: Եւ նրանք՝ այն ճամբորդները, իրար յետեւից քայլում էին նոյնպէս լուռ, նոյնպէս մռայլ, որպէս իրենց գլխաւորը:

- Հօ, հօ, վալլահ իմ որսն եկաւ, յանկարծ բացականչեց հայդուկներից մէկը, որ կաղալով քայլում էր խմբի վերջից:

- Սո՛ւս, Խա՛չօ, կամա՛ց, սաստեց խմբապետը, եւ դիտակը կրկին դրեց աչքերին, ուղղեց դէպի ձորակի խորքը: Այնտեղ մի անորոշ բան սեւին էր տալիս:

Ամէնքը կանգ առան:

- Խաչօ՛, գիտես այն ինչ է, ասաց խմբապետը յետ նայելով:

- Ի՞նչ է, քեզ մատաղ:

- Քեզ նման մի կենդանի, մի ահագին գէլ որ քեզանից լաւ է, վիրաւոր չէ:

- Հը՛, տէրը մեռնի գիլուն, ես կարծեցի քիւրդ էր, բացականչեց Խաչոն դժկամութեամբ. զարկե՛մ:

- Տo, անխե՛լք, մոռացա՞ր որ մենք շտապում ենք մեր հետքը ծածկել:

Խաչոն լռեց կրկին հրացանի վրայ յենուելով, սկսեց քայլել խմբի յետեւից:

Թշնամու գնդակը թափ էր անցել նրա աջ ոտքի սրունքի մսից. վէրքը վտանգաւոր չէր կապուած էր, բայց նա դժուարանում էր քայլել առանց հրացանին յենուելու:

Նախընթաց երեկոյ կռիւը տաք էր ու յամառ: Խումբն ահագին զոհեր էր տուել: Հեռո՛ւ, անիծուած ու արիւնոտ ձորերում էին նրանք՝ այն ընկերները, որոնք ազատութիւնը փնտռեցին, հպարտ լեռնակատարների հետ այրեր կիսեցին ամբողջ տարիներ:

Եւ յետոյ ընկան նրանք՝ այլեւս երբեք վեր չբարձրանալու համար: Այժմ ընկերները խոյս էին տալիս նզովուած ձորերից, կրծքերի մէջ մի ահագին կսկիծ եւ սրտերում բոց վրէժի սեւ զգացմունքը:

Բոլորի ճակատները մռայլ էին, բոլորի հոգիները փոթորկուած եւ սրտերի մէկ ցաւն էր մխում ահագին ու կիզիչ:

Նրանք այնպէս էին տառապել:

Խմբի մէջ միակ վիրաւորը Խաչոն էր, փոքրահասակ, վտիտ մարմնով, բայց ջլուտ կենսուրախ երիտասարդը որ ամենածանր պարագաներում անգամ մի զուարճալի խօսք էր գտնում ընկերների թախիծը վանելու համար:

Գնդակների տարափի տակ՝ նա միշտ շարու-

նակում էր մռմռալ իր սովորական երգը՝

Հէ, հէ, հէ, հo, հo, հo,
Եղսo՛ ջան,
«Եղսոն նստէ կով կը կթէ»...

Մնացածը սա չգիտէր, եւ այսքանով բոլորովին գոհ էր:

Եւ երբ մի մոլորուած գնդակ շեշտակի գալիս էր նրա առջեւի ժայռը փշրելու ահագին շրխկոցով, Խաչոն դարձեալ չէր մոռանում իր կատակները եւ բոլոր ուժով գոռում էր թշնամուն.

- Հը՛, ես ձեր քեռ այքը... մի քիչ վեր բռնեցէք վե՛ր. գնդակն ափսոս է, էյ կռի՛ւ մուռտառողներ:

Եւ Խաչոն անվնաս մնաց:

Բայց քանի՛սն ընկան վերջին անիրաւ կռուի մէջ այն արիւնոտ ձորերու: Եւ ամէն մէկը իր հետ տարաւ Խաչոյի մի ժպիտը, մի կատակը, կեանքի եւ եռանդի մի մասը:

Խաչոն լռեց:

Նա միայն կռւում էր ատամները իրար վրայ սղմած, աչքերն արիւնոտ, դէմքը գունատ, յօնքերը կիտած:

Եւ ամէն անգամ, երբ ընկերներից մէկն ու մէկը նրա կողքին տնքում էր ու խորտակւում կաղնու պէս, Խաչոն աւելի պինդ էր սղմում հրացանը ձեռքի մէջ, աչքերն աւելի էին խոժոռւում եւ յօնքերն աւելի կախւում:

Կռիւն անհաւասար էր. թշնամին ժամ առ ժամ զօրանում էր եւ սպառնալի դառնում. դիրքերը վտանգւում էին: Խմբապետը նահանջի հրաման տուեց: Պէտք էր խոյս տալ եւ գիշերուայ վրայ հասնող խաւարից օգտուելով, հետքը կորցնել խոտոր ճամբաներով:

Հազիւ տեղից շարժուել էին, երբ վերջին գնդակը սուլելով եկաւ եւ Խաչոյի ոտքից թափ անցաւ:

- Հա՛յ, էս բարի ճանապարհն էր, ասաց վիրաւորը, ոտքը բռնեց ու նստեց:

- Խաչո՛, գոչեց խմբապետը խնամոտ ձայնով:

- Ոչինչ, պատասխանեց Խաչոն, եւ վարտիկը պատռելով շտապ-շտապ կապեց վէրքն ընկերների օգնութեամբ:

- Կարո՞ղ ես քայլել:

- Որտեղ մնամ, այնտեղ ձգէք գէլերին:

Եւ ամբողջ գիշերը, ցրտի տակ ձիւների միջից նա քայլում էր կաղալով, հրացանին յենուած, առանց տնքալու, առանց տրտնջալու:

Քայլում էր եւ լուր էր:

Լուսաբացին նրա ձայնը վերստին լսուեց: Նա սկսեց կամացուկ սուլել:

Մերթ լսւում էր նրա հրացանի կոթի խշշոցը ձեան վրայ, մերթ ընդհատ-ընդհատ սուլոցը:

Միաժամանակ նա աչք էր ածում չորս կողմը, հորիզոնի բոլոր ծայրերը պրպտում էր սրատես հայեացքով:

Եւ նրա բաղդից տեսածը միշտ կամ մացառ էր,

կամ փախչող գազան եւ կամ այծեամ:

Խումբն իջնում էր հա իջնում եւ Խաչոն յետեւից քայլում էր սուլելով ու կաղալով:

Արեւն արդէն բարձրացաւ եւ նրա շողերը խաղում էին հանդիպակաց բլրի ձիւնապատ լանջի վրայ, անդրադառնում, երկբեկւում էին ու ցոլքեր արձակում:

- Վալլահ եկաւ. վերստին լսուեց Խաչոյի ձայնը. եւ նա կանգ առաւ ու հրացանը պատրաստեց:

Խմբապետը դիտակով նայեց. Խաչոյի սրատես աչքերը չէին սխալւում. արդարեւ դիմացի բլրից հանդարտ իջնում էր մի մարդ, ըստ երեւոյթին մի քիւրդ:

- Խմբապետ զարկե՞մ, կրկին ձայն տուեց Խաչոն:

- Սպասիր մօտենայ, տեսնենք ո՞վ է:

- Ո՞վ պիտի լինի, չե՞ս տեսնում գլխի քօլոզը, նրանցից է, կամ թալանից է գալիս կամ գնում է թալանի, դրանց հոգի չկայ...

- Խաչօ, ամէն քոլոզաւոր թշնամի չի՛, խիստ կերպով ընդհատեց խմբապետը:

Մինչ այդ մենակ ճամբորդը անխռով իջնում էր արեւի շողերով ողողուած՝ եւ երեւի այդ էր պատճառը, որ չէր նկատում հակառակ կողմից եկողներին:

Արդէն շատ մօտ էր, երբ յանկարծ, գլուխը բարձրացրեց, մտահոգութեամբ կանգ առաւ հակառակ կողմը, ու քարացաւ իր տեղում: Այդ տե-

ւեց սակայն մի քանի վայրկեան, ապա նա հաստատ քայլերով ու համարձակ առաջացաւ դէպի անծանօթները:

Մի փոքր յետոյ զինուած խումբը եւ մենակ ճամբորդը դէմ առ դէմ կանգնեցին:

Նա բարեւ տուեց. խմբապետը պատասխանեց:

Կտրիճ արտաքինով, գեղատեսիլ մի քիւրդ էր, լեռնային մի հոյակապ գազան, մէկը բնութեան այն զաւակներից, որոնք կարծես սեփական քմահաճոյքով ժայռերի ծոցից են ծնւում եւ իրենց հետ բերում ժեռ մայրերի գոռոզ հմայքը:

Նա բարձրահասակ էր, արծուաքիթ, հայեացքը դժնեայ եւ պարանոցը բարձր, ինչպէս լինում է լեռնականներինը:

Մազոտ եւ ուժեղ կուրծքը բաց ձգած վաղորդեան ցրտի դէմ, ահագին թաթերով յենուած իր հրացանի փողին, նա հանդարտ նայում էր անծանօթներին հպարտ ու անխռով: Կուռ կազմուածքով եւ երկաթի պէս թուխ այդ մարդն ամբողջապէս կեանք էր եւ ուժ:

Խմբապետը հիացմունքի հետ խառն զարմանքով էր դիտում այս վայրի լեռնականին, եւ ըստ երեւոյթին վայելում էր նրա առնական գեղեցկութեան հաճոյքը:

Ամէնքը լուռ էին ու անշարժ. Խաչոն էլ դադարեց սուլելուց եւ առաջանալով պտոյտ էր գործում քրդի շուրջը կարծես նրան ամէն կողմից լաւ զննելու համար:

- Ո՞ւր ես գնում քիւրդ, հարցրեց վերջապէս խմբապետը:

- Թէ Աստուած յաջողի ձեր սայայից գնում եմ Սեւ Սարերը:

Սեւ Սարե՜ր...՝ խմբապետը վայրկենապէս գունատուեց, կանգնած տեղում անհանգիստ շարժում գործեց մի ոտքից միւսի վրայ յենուելով, ապա գլուխը քաշ ձգեց, աչքերը յառեց մի կէտի եւ խոր մտածմունքի մէջ ընդկմուեց:

- Փոթորիկ կայ, կամացուկ փսփսաց Խաչոն մօտիկ կանգնած ընկերոջը, տեսնելով խմբապետի կնճռած ճակատը եւ խոժոռ յօնքերը:

Սեւ Սարե՜ր...

Այնտեղ՝ այն դումանոտ սարերումն էին կռւում երէկ, այնտեղ ընկան այնքան ընկերներ, այնտեղ մնացին թշնամիները: Եւ այս քիւրդը գնում է հէնց այնտեղ. գնում է եւ իր հետ կը տանի խուսափող խմբի թագստեան գաղտնիքը, նա բաց կ'անի այն ճանապարհը, որով անցել են սարսափելի գիշերին, նա խմբի յետեւից կ'ուղարկի թշնամիներին, ինչպէս որսկան շներ: Եւ ինչպէս վստահիլ նոյնիսկ, որ թշնամիներն արդէն չեն հետեւում, արդէն չեն պրպտում շրջակայքը:

Ի՞նչ անել. ի՞նչպէս դուրս գալ դժուարին կացութիւնից:

Թէ քիւրդը կենդանի մնար, իրենք մատնուած էին.՝ բայց ի՞նչպէս ձեռք բարձրացնել այսքան հոյակապ կեանքի գրայ, որին ո՛չ թէ թշամութիւնը, այլ մի անիրաւ, մի ճակատագրական դիպուած է

հանել նրանց այս արիւնոտ ճանապարհին:

Խեղդող առեղծուած էր:

Խմբապետը տանջւում էր ներքուստ. ընկերները լռութեամբ նայում էին, առանց բան հասկանալու, իսկ Խաչոն անհամբերութեան նշաններ էր ցոյց տալիս:

Քիւրդն սպասում էր:

- Ինչո՞ւ ես գնում Սեւ Սարերը էս ձիւն ձմրանը:

Քիւրդը ժպտաց եւ նրա հայեացքը անուշացաւ.

- Գնում եմ մերոնց մօտ, նշանուած եմ, դուք էլ ջահիլ էք, գիտէք էլի:

Վերստին լռութիւն տիրեց. արեւն սկսեց խաղալ քիւրդի դէմքի վրայ, խմբապետը գլուխը բարձրացրեց, նայեց նրան, եւ իսկոյն աչքերը կախեց վար. նա կարծես ամաչում էր այն մտքից, որ իր գլխով անցաւ:

Նրա առաջ կանգնած էր մի բոլորովին անմեղ մարդ. երիտասարդ, լի յոյսերով, որ գնում էր տեսնելու իր նշանածին այս ձիւն ձմրանը:

Դիպուածը զարհուրելի էր եւ առեղծուածն ահաւոր: Իր բոլոր կռիւների մէջ, բոլոր վտանգների ժամանակ նրա ուղեղը չէր տանջել մի այսքան ծանր, այսքան հոգեմաշ խնդիր:

Նա նորից վերեւ նայեց. քիւրդի դէմքի վրայ դեռ խաղում էր քիչ առաջուայ ժպիտը եւ հայեացքը դեռ մեղմ էր: Խմբապետը գլուխը դարձեալ քաշ ձգեց, դարձեալ նոյն անիծուած միտքը, ինչպէս փակուած դուռը յամառ կերպով ծեծող մի

երկաթէ բռունցք, ներսից սղմեց նրա գանգը: Նա ձեռքը տարաւ դէպի ճակատը, մի անգամ շփեց կարծես անախորժ միտքը վանելու համար:

- Գնում ես Սեւ Սարե՛րը... կրկնեց խմբապետն առանց գլուխը բարձրացնելու եւ միշտ աչքերը մի կէտի յառած. գնում ես Սեւ Սարերը, հա՛ա... բայց գիտե՞ս ինչ, այս ճանապարհը մենք նոր անցանք. սարսափելի ճանապարհ է. ձիւնը բռնել է ամէն կողմ:

Եկ դու ինձ լսիր ցած իջիր դաշտը եւ դաշտով գնա ապահով կերպով:

- Դաշտի ճանապարհը երկու անգամ երկար է, պատասխանեց քիւրդը առանց ըմբռնելու անծանօթի առաջարկի իմաստը: Եւ յետոյ ես այս ճանապարհով առաջին անգամը չէ որ գնում գալիս եմ:

- Այս կողմերում նաեւ ղաչաղներ շատ կան. մեզ էլ վրայ տուին. տես մեր ընկերը վիրաւոր է, սաղ-սալամաթ տեղ չես հասնի, ձորերում հարամիներ կան:

- Է՛հ, ղաչաղներն էլ ձեզ պէս մարդ են, ես քարուան չեմ տանում, մի չոր գլուխ մարդ եմ, ասաց քիւրդը եւ դարձեալ ժպտաց:

- Հա՛, մի չոր գլուխ ես, ղաչաղներից չես վախենում, կրկնեց խմբապետը ցրուած ձեւով կարծես ինքն էլ չլսելով իր ասածը:

Դարձեալ լռութիւն տիրեց:

Քիւրդն սկսում էր անհանգստանալ. եւ կարծես դրութիւնը պարզելու համր առաջ անցնելու

թշուառ այդ մարդուն. «Եթէ իմ տեղս դո՛ւն գտնէիր գանձը, ի՞նչ պիտի ընէիր», բայց լռեց, քաշուեցաւ մէկ կողմ ու շարունակեց քալել, քիթին տակէն մոլտալով.

- Ես այս աշխարհին...

Սինեմայի պատին տակ միայն մէկ սնտուկ կար, որուն տէրը՝ խղճալի մանուկ մը, երեւի յուսահատած յաճախորդի սպասելէ, իր ծակ ոտնամանները կը ներկէր: Սեդրակ հազիւ թէ ուշադրութիւն դարձուց եւ տեղաւորուեցաւ ամէնէն յարգի տեղը, մուտքին աջ կողմը: Ճիշդ իր քով, խոշոր ցուցատախտակի մը վրայ, շարժանկարի անպարտելի հերոսը հրեղէն ձի մը կը թոցնէր, մէկ ձեռքը անոր բաշերուն, միւսին մէջ ատրճանակ մը: Դրան առջեւ թըմբուկ եւ փող նուագող զոյգ երաժիշտներ աղմկալի եղանակ մը կը հնչեցնէին՝ անցորդներուն հետաքրքրութիւնը շարժելու համար: Քիչ յետոյ անոնք ներս պիտի փոխադրուէին, որպէսզի իրենց նուագը համր նկարներու շարժումներուն թափ ու կենդանութիւն տար: Սեդրակ հազիւ երկու անգամ առիթը ունեցեր էր ներկայ ըլլալու կախարդական պաստառի ցուցադրութեան եւ այդ առիթները անջնջելի հետք մը ձգած էին յիշողութեանը մէջ, իբրեւ իր կեանքի կարեւորագոյն դէպքերէն մէկը: Առաջին անգամ յաջողած էր մուտք գործել՝ հին գիրքի մը փոխարժէքը վճարելով **սինեմայի** տոմսակին եւ երկրորդ անգամ ներս էր սպրդած գողունի՝ օգտուելով խուռնամբոխ հանդիսականներու իրարանցումէն: Այդ հազուադէպ երանութեանց վերյիշումը բաւական էր, որ ան կարօտով ու նախանձով դիտէր տոմսակավաճառի խցիկին մօտ հաւաքուած հասակակից տղոց բազմութիւնը: Տղաք՝ որոնց դէմքին վրայ անպատասխանատու զուարճութեանց հրրթիռներ կը բռնկին եւ որոնց ձայնին մէջ մանկութիւնը կ՚աղմկէ: Իսկ իր մանկութիւնը լռած էր ի սպառ. մեռած էր դեռ չծնած: Քանի գիտէր՝ ինք մասնակից էր մեծերու հո-

Սկսուած էր մի գաղտնի մենամարտ, ուր մէկն աշխատում էր մի գաղտնիք քօղարկել, եւ միւսն *զգալով, որ իր կեանքի եւ մահուան խնդիրն է* այն, ճգնում էր կարդալ հակառակորդի հոգին:

Խմբապետը դարձեալ մտածում էր:

Մի վայրկենի գործ էր մէջտեղից վերցնել իրենց ապահովութեան սպառնացող այս կենդանի վտանգը, այս վրդովեցուցիչ քիւրդին, ընկերները նոյնիսկ զարմանում էին, որ նա դանդաղում է եւ թանկագին ժամանակ կորցնում: Սակայն խմբապետի համար, մահու չափ ծանր է ձեռք բարձրացնել այս հոյակապ կեանքի վրայ, այս մենակ ճամբորդի վրայ: Եւ յետոյ այնքան կորով, այնքան բաց-ճակատ առնականութիւն կար այդ գեղատեսիլ դէմքի վրայ, այդ հարուստ մարմնակազմի, լայն թիկունքի յաղթ բազուկների մէջ:

- Չինաթափ արէք սրան եւ մեզ հետ տանենք, հրամայեց խմբապետը, ուրիշ ճար չկայ, թէ չէ կը գնայ եւ կը մատնի:

Խաչոն վաղուց էր այդ հրամանին սպասում, նա առաջինը ձեռքը մեկնեց եւ նրա հրացանի փողը բռնեց: Քիւրդը ինքնապաշտպանութեան մի յուսահատ փորձով՝ յետ քաշեց զէնքը, վիրա*ւոր ոտքը դաւաճանեց Խաչոյին*, եւ նա երեսի վրայ փռուեց ձեան մէջ աղիողորմ ճիչ արձակելով վէրքի ցաւից:

Այնուհետեւ ի՞նչ պատահեց, այդ առաջին վայրկեանին ոչ ոք չհասկացաւ. միայն լսուեց մի հրացանի որոտ, ծխի փոքրիկ ամպը պատեց

քիւրդի գլուխը, եւ նա ոռնալով գետին փռուեց:

Խաչոն էր, որ ընկած տեղում մի վայրկեան իր ցաւը մոռացած՝ գնդակահար արեց նրան:

Նոյն վայրկենին՝ խմբապետը, գունատ ու զարհուրելի, քաշեց հրացանը եւ ուղղեց տակաւին ձիւնի մէջ թաւալած Խաչոյի կրծքին:

Միաժամանակ բոլոր ընկերները հասկանալով սարսափելի վտանգը, վրայ պրծան, շրջապատեցին իրենց զայրացած գլխաւորին, ոմանք նրա ձեռքերը բռնեցին, ուրիշները ծունկ չոքեցին, նրա ոտները գրկեցին աղաչանքով:

- Ծուն, անողորմ շուն, մռնչաց խմբապետը հրացանը բաց թողնելով ձեռքից: Ապա զայրոյթից դողալով ամբողջ մարմնով, նա ձիւների վրայ ընկաւ ինչպէս փոթորկից խորտակուած ծառ եւ գլուխը ձեռների մէջ առաւ:

Ահագին քիւրդը շարունակում էր թրպրտալ ու խռխռալ երեսին վրայ ընկած եւ արիւնը փռւում, տարածւում էր նրա շուրջը ճերմակ ձեան հետ բոսորային, նողկալի շաղախ կազմելով:

Խաչոն դժբախտ ու ոչնչացած՝ ոտքի կանգնեց եւ քարացած մնաց մի կէտում առանց համարձակուելու գլուխ բարձրացնել:

Խմբապետը աչք չէր հեռացնում հոգեվառքի ցնցումներով ձգձգուող քիւրդից: Եւ երբ նա իր վերջին շունչը փչեց ու անշարժացաւ ձեան վրայ, երկու կաթիլ արցունք կախուեցին խմբապետի աչքերից եւ իջնելով թրջեցին այտերը:

Այնքան ընտիր ընկերների մահը մարտի դաշ-

տերում անխռով կրած այդ ուժեղ տղամարդը՝ սգում էր օտարականի եղերական մահը, սգում էր մի հատիկ անծանօթ կեանքը, որին դիպուածը հանել էր իր ճանապարհին եւ որ գուցէ պէտք է մեռներ, որպէսզի իրենք ազատ մնային ազատութեան մեծ գործի համար:

Արեւը բարձրացաւ. նրանք վերստին քայլել սկսեցին, ծանր դժնդակ ճանապարհներով դէպի իրենց փոթորկոտ ճակատագիրը:

Լուսաբաց էր. արեւը հաշտ փայլում նրանց վրայ. բայց դեռ հեռու էր այն միւս լուսաբացը, երբ էլ հարկաւոր չէր լինի ո՛չ արիւն եւ ո՛չ արցունք:

ՎԵՐՋ

*

* *

ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐ

Աւետիս Ահարոնեանի տղան՝ Վարդգէս, երբ իր հօր գործերը սկսաւ տպել 1947-էն 51, տասը հատորներու մէջ, չորրորդ հատորին մէջ էին Ազատութեան Ճանապարհինի պատմուածքները: Այս պատմուածքներէն մենք ըրած ենք յապաւումներ, անոնք հետեւեալներ են.- Ազատութեան

ոգին, Դարբնի երգը, Հայդուկի Նոր Տարին, Ուխտաւորը, Արիւնի Ձայնը, Արտը, Մեր Ճանապարհը, Օտար հորիզոնների տակ, Փոթորիկը, Մահը: Վարդգէս Աիարոնեան, այդ ժամանակ իր ձեռքին տակ ունեցած տրամադրելի նիւթերով կազմած եւ հրատարակած է իր հօր երկերը 10 հատորներու մէջ: Հրատարակելի կը մնան երեք հատորներ եւս:

Աւետիս Աիարոնեան շատ կը սիրէր եւ կը հաւնէր Ռաֆֆիի գրածները եւ ինքն ալ նմանեցաւ Ռաֆֆիին, երկուքն ալ նոյն նպատակները ունէին - արթնցնել հայութեան միտքն ու հոգին, ինքն իր տէրը ըլլալ, ապրիլ ինքնավար եւ արդար պետութեան մը մէջ եւ ասոր համար պայքարիլ յանդուգն եւ խիզախ մեր նախնիքներու, իշխաններու եւ բոլոր քաջերուն պէս:

Աիարոնեան եղած է Առաջին անկախ Հայաստանի հանրապետութեան խորհրդարանի նախագահ: Ինք ստորագրած է 1920-ին Սեւրի դաշնագիրը:

Խմբագիրը՝ Լ. Ճ.

ԿՈՅՐ ԱՇՈՒՂԸ

Սեւ խաւարը իմ ընկերս է անբաժան,
Ես չգիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր,
Բայց այսօրուայ խաւարն է խոր, հոգեհան.
Դիակները փսփսում են ահաւոր
Եւ պատմում են իրենց ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Հին դարերից ցաւեր շալկած յամրօրէն,
Հառաչելով անցաք արեան ծովերով,
Համբերութեան դասեր առիք լեռներէն ...
Քնե՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով,
Եւ պատմեցէք ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Տառապանքի, սուգ ու սեւի ինձ ընկեր
Մարդ չմնաց իմ արիւնոտ վաթանում,
Լուռ են շուրջս լեռներ, ձորեր, շիրիմներ,
Լոկ քամին է կողկողագին մրմնջում...
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անապատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում...

Ոռնա՛ քամի, հազար ու մի ձայներով,
Թո՛ղ սարսռան լեռներ, ձորեր, անդունդներ,
Անցի՛ր մէկ-մէկ դիակների վրայով,
Լիզի՛ր վէրքեր ու հաւաքիր հառաչներ...
Կոյր աշուղը, մրրկաշունչ խոլ քամին,
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:

Խօսի՛ր քնար... արար-աշխարհ թէ լռի,
Ցաւի, արեան, տառապանքի լուռ ծոցում,
Կոյր աշուղը հառաչանքի պարտք ունի
Թշուառութեան ու անէծքի վայրերում:
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք:

Երէք լար կայ, մէկը մէկից սգաւոր.
Մէկն արիւն, մէկն արցունք է քամում,
Եւ երրորդը-այն ամէնից թունաւոր,
Անէծք ունի իր թրթռուն խաղերում:
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք:

Սեւ բռնութեան, աւերածի զինուորներ,
Խոպան, աւեր, բոց փռեցիք ձեր ոտքով,
Բնակութիւն, շէն քաղաքներ ու տներ,
Անապատի վերածեցիք անվրդով,
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք:

Դիակների վիշտը լացի ու ցաւե՛ր...
Քանի՛ դարեր լոկ ողբ ու սուգ ենք ասում,
Այժմ անէ՛ծք դահիճներին մարդակեր,
Վրէ՛ժ միայն լոկ վրէժ ենք պահանջում...

Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք:

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

«ՈՍԿԵԴԱՐԻ»
Հրատարակութիւնները

1 - Ազատութեան Ճանապարհին
Ա. Ահարոնեան
2 - Ապրուած օրեր - Արմէն Գարօ
3 - Ազգային, Յեղափոխական Երգարան, Եռագոյնի ծագումը, Ֆետայիներու կարճ կենսագրականները - Խմբագիր Լ. Ճ.
4 - Ազգային Ջոջեր - Յ. Պարոնեան
5 - Երազահան (576 էջ) - Աշխատասիրութիւն՝ Լեւոն Ճերմակեանի - Իմաստասիրութեան Տոքթորա DEA Kaslik
6 - Երազահան եւ այլ (1184 էջ) - Լեւոն Ճերմակեան
7 - Վահան Թէքէեան - Հատընտիր
8 - Ֆրանսերէն - Հայերէն Բառարան (հնչիւններով) - Լեւոն Ճերմակեան
9 - Արդի Խոհանոց Ա. - Սիլվա Պէզիրճեան
10 - Արդի խոհանոց Բ.- Սիլվա Պէզիրճեան
11- Արդի Խոհանոց Գ. (Անուշ) Սիլվա Պէզիրճեան
12 - Խնդալով - հանելուկներ, երգիծանկարներ Սարուխանէն եւ Համբարձման վիճակ

* * *

- Ատանայի Հայոց Պատմագիրքը (Առաջին Տիպ - 1970)
- Եոզկատի Պատմագիրք (Ա. Տպագրութիւն - 1980)
- Զէյթունի Պատմագիրք (1996)
եւ այլ հրատարակութիւններ:

ՑԱՆԿ

ԻՆՉՊԷՍ ԳՐՈՒԵՑԱՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ էջ 3
ՆՐԱՆՑ՝ ՈՐՈՆՔ ԽԻԶԱԽ ԿԵԱՆՔՈՎ
ԴԱԺԱՆ ՄԱՀԸ ՀԵԳՆԵՑԻՆ ԵՒ ՀՊԱՐՏ
ՄԱՀՈՎ ՄԵՐ ՍԵՒ ԿԵԱՆՔԻՆ ՓԱՅԼ ՏՈՒԻՆ ..... էջ 11
ՅԱՐԳԱՆՔ ՔԵԶ..... էջ 13
ԽԱՅԸ..... էջ 18
ՊԱՏԻՒԸ..... էջ 34
ԷԼ ՄԻ ԱՂՕԹԻՐ..... էջ 45
ՄԱՅՐԸ..... էջ 63
ԱՐԻՒՆՈՏ ԹԹԽՄՈՐ..... էջ 74
ԲԱՆՏՈՒՄ..... էջ 86
ՋԱՒՕՆ..... էջ 101
ԱՇՈՒՂԸ..... էջ 114
ԿՈՌԻՒ ԴԱՇՏՈՒՄ..... էջ 124
ՏԻՐԱՑՈՒ ԳՐԻԳՈՐԸ..... էջ 135
ՎԱՁՐԻԿԸ..... էջ 149
ՀԱՁՐԷՆ..... էջ 162
ԼՈՒՍԱԲԱՑԻՆ..... էջ 174

نضال الفدائيين الأرمن ضد الاستعمار العثماني

بقلم أواديس أهارونيان

Levon Jermakian
(Doctorat DEA-Kaslik university)

VOSKETAR BOOKSTORE
Bourj Hammoud
Facing Armenian Catholic Church
Tel.: 01/264750
e-mail: vosketar@yahoo.com